

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԿԿ

№ 3  
M A R S.  
1929  
PARIS (France)

## «ՀՈՅ ՅԵՂՈՓՈԽՈՒԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

### ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԹԻԵՐԸ

Յունևարի վերջերին, Երևանում, տեղի ունեցաւ Հայաստանի Կոմկուսի վեցերորդ համագումարը, որ ամբողջապէս անցաւ «Իաշնակցութեան վտանգը» նշանաբանի տակ: Չեկուցանողներն ու ռեպորտերը ամենից շատ խօսում էին « դաշնակցական մտայնութեան ուժեղացման », «Իաշնակցութեան սպառնալիքի» մասին: Իաշնակցութիւնը ամբապինդ նստել է հայ աշխատաւորութեան հոգիներում, ահաբեկում է կոմունիստ ղեկավարներին, և ո՛չ մի պայքար նրա դէմ, ո՛չ մի բանտ ու աքաղանում արմատախիլ անել հայ կեանքից: Իաշնակցութեան սարսափը, դամոկլիսեան սրի պէս, շարունակում է կայսւած մնալ Հայաստանի բոլորիկ վարիչներին գլխին:

Իաշնակցութեանը ներքեց իր «ողջոյնի ճառի» գլխուօր մասը և Վրաստանի Կոմկուսի քարտուղար Կախիանին, որ Թիֆլիսից Հայաստանի ընկերներին «եղբայրական ողջոյններ» էր բերել:

Վրաստանի Կոմկուսի քաջամարտիկ քարտուղար երկաթօրէն կանգ առաւ մեր նոյնիմէր ամիս խմբագրականի վրա, ուր խօսում էր Անդրկովկասում տիրող ազգային փոխարարբութիւնների մասին և ցոյց էր տրուում հայ կոմունիստների ապիկարութիւնը հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանութեան խնդրում: Մի շարք մէջ բերումներից յետոյ մեր խմբագրականից, Կախիանին իր պաշտպանութեան տակ առաւ հայ կոմունիստներին: Եւ տեսէք ի՞նչ շուրջօրթ, որպիսի՞ շաքարահամ լիզու է գործածում Թիֆլիսեան յուշկապարիկը:

Առաջ բերելով մեր կարծիքը, Թէ՛ «վրացի և թուրք կոմունիստները... առաջ վրացի են ու թուրք և ապա կոմունիստ: Հայ կոմունիստը միայն կոմունիստ է՝ գտարիւն,

ուղղափառ ու դաւանամուլ, որի համար զուտ հայկական խնդիրներով զբաղւելը դաւաճանութիւն է և ամօթ» — Կախիանին շոյում է հայ կոմունիստների դուրսը, Թէ՛ այդպէս էլ պէտք է լինի. «Սրանում մենք ո՛չ մի ամօթալի բան չենք գտնում: Մենք գտնում ենք, որ կոմունիստը, ով էլ նա լինի (վրացի, թուրք, հայ, ռուս), ամենից առաջ և նախ և առաջ պէտք է լինի կոմունիստ և ապա շար պատկանի այս կամ այն երկրին, այս ի՛րամ այս ողբին. Սրանում, ընկերներ, ո՛չ մի ամօթալի բան չկայ»:

Պէտք է լինի, այո՛, բայց այդպէ՛ս է: Այդ հարցն էր շոյափում մեր նոյնիմէրեան խմբագրականը, ուր բազմաթիւ փաստեր էինք առաջ բերել, յիշել էինք Ախալքալաքի ու Վարաբաղի օրինակը և զանազան անհաւասարութեան դէպքեր: Կախիանին չի հերքում և ո՛չ մէկը բերած փաստերից, խոչնդորէն թռչում անցնում է բոլոր փոռ երեսոյթների վրայից և բաւականանում է միայն իւր կոմունիստներին ունայնասիրութիւնը ջայթով: «Ինչո՞ւմն է հայ կոմունիստների մեղքը», հարցնում է նա: Ըստ պատասխանում է առանց կարմրելու. «Հայ կոմունիստները մեղաւոր են միմիայն նրանում, որ այնպէղ, ուր առաջ աղքատութիւնն էր, արցունքն ու քայքայումը, այժմ սքանչելի է, լի բերկրութեամբ և տենդային շինարարութեամբ, այժմ անողծագործական հսկայական աշխատանք է կատարւում սոցիալիստական կարգեր ստեղծելու և ամբապինդու համար»:

Այդ Հայաստանում է, Խորհրդային Հայաստանում, որ «բանչելի է», «լի բերկրութեամբ», « սոցիալիստական կարգեր » են ստեղծւում—մարդկային շահանուութիւնը սահմանի չունի: Նետել են Հայաստանը գետին, բռնել են կոկորդից, ոտները գրել կրծքին ու դռում, «Հէ՛՛յ, մարդիկ, եկէք, տեսէք, թէ

Ի՞նչ «սքանչելի» է, Ի՞նչ «ստեղծագործական հսկայական աշխատանք է կատարում»...

Իսկ իրականութիւնը, փաստե՞րը — Կախիանիների համար Ի՞նչ արժէք ունեն փաստերը: Ի՞նչ արժէք ունեն փաստերը և Կախիանիներից յիմարացած հայ կոմունիստների համար: Նրանց համոզումով « Անդրկովկասը ազգային հաւասարութեան տիպար » երկիր է, իսկ Հայաստանը «տոյժախիտական շինարարութեան բուն վերելք» է ապրում:

«Բուն վերելք» այնտեղ, ուր թշուառութիւնն է թագաւորում: «Սոցիալիստական շինարարութիւն» մի երկրում, որտեղից հազարաւոր բազմութիւններ արտագաղթում են մի կտոր չոր և այց ճարելու լուսով: «Աի բերկրութիւն» մի փողովրդի համար, որը տարեց տարի պակասում է թւով, ցրում ամէն կողմ, օտարանում իր հայրենիքից, յետադիմում քանակով ու որակով:

Վրացի թէ՛ հայ ամէն կարգի Կախիանիների կեղծաւոր զիմակը պատռելու համար մի անգամ էլ կանգ առնենք փաստերի ու թւերի վրա — թւեր, որոնք « հակայեղափոխական դաշնակների » ստեղծածը չեն, այլ բխում են հէնց խորհրդային պաշտօնական արբերներից: Կարգացէք «Գրօքալ»ի ներկայ համարում խորհրդային վիճակագիր Գ. Գրեգորեանի հաղորդած տեղեկութիւնները Անդրկովկասի ազգային կազմի և, առհասարակ, խորհրդային Միութեան սահմաններում ապրող հայերի թւի մասին: Ի՞նչ են ստում այդ թւերը:

Ամենից առաջ, և առարկութիւն չվերցնող վճռականութեամբ նրանք հաստատում են այն իրողութիւնը, որ խորհրդային իշխանութեան տասնամեայ տիրապետութեան հետեւանքով հայ տարրը ամէն տեղ մղւած է յետին շարքերը: Առաջ Կովկասում հայն էր կազմում համեմատական մեծամասնութիւն. ըստ 1916 թ. ուսւ պաշտօնական տեղեկութեանց Կովկասում ապրում էր 1,860,000 հայ և յետոյ միայն գալիս էին վրացիները և ազբեջանցի թուրքերը: Այժմ հայերը անցել են վերջին տեղը: Մեծամասնութիւն կազմում են վրացիները. երկրորդ տեղը բռնում են թուրքերը:

Թւական այս փոխյարաբերութիւնը պատահականութեան արդեւնք չէ բնւս և չի բացատրում միայն «իմպերիալիստական պատերազմի գործած ակերներով», ինչպէս ճշնում են հաւատացնել բոլշևիկները, այլ, խոշոր չափով, հետեւանք է խորհրդային իշխանութեան ընդհանրապէս և անդրկովկասեան վարիչների հետեւած քաղաքականութեան մասնաւորապէս:

Եւ արդարև, Ի՞նչ է Մոսկւայի քաղաքականութիւնը Անդրկովկասի վերաբերմամբ: Այժմ կոյրերն իսկ տեսնում և բմբռնում են այդ քաղաքականութեան էութիւնը: Խորհրդային կենտրոնը Անդրկովկասի վերաբերմամբ

հետեւում է ամենաթոյլ զիմադրութեան ըսկրքունքին. անշեղ և առատօրէն զոհացնում է նրանց, ովքեր շատ են պահանջում և ոյժցուցադրում իրենց պահանջը ազդու դարձնելու համար: Իսկ անընդհատ և ազդու պահանջող Անդրկովկասում նախ վրացի կոմունիստներն են, ապա՝ ազրբէջանցիները. հայ կոմունիստը Մոսկւայի հլու և հաւատարիմ ծառան է, որ շան հնազանդութեամբ նայում է տիրոջ աչքին և կատարում նրա ամէն քմահաճոյքը:

Վրացի և ազրբէջանցի կոմունիստը Անդրկովկասում պահանջող է, նպաստաւորուող և, հետեւաբար, տիրական: Նրանք, գրեթէ առանց բացառութեան, ունեն յստակ ազգային դէմք, ազգային ձեւակերպւած քաղաքական դիմ, որի իրագործման հետեւում են առանց տատանելու: Այդ քաղաքականութեան անկիւնաքարը ազգահաւաքման դադափարն է: Վրաց կոմունիստը ո՛չ միայն թոյլ չի տալիս օտար ազգութեան պատկանողներին տեղաւորել վրաստանում, այլ և յամաօրէն ձգտում է վրացացնել Աջարիստանն ու Աբխազիան, Ախալքալաքն ու Հարաւային Օսետիան: Աւելին դեռ. նա կարողանում է, Մոսկւայի օժանդակութեամբ, վրացացնել գանգաւածներ տեղաւորել և Մոչչի ու յարակից շրջաններում: Այդ պատճառով, Վրաստանը Պորհրդ. Միութեան մէջ վրացի տարրի համար դարձել է ձգողական ոյժ: Վրաստանի վրացին չի արտագաղթում հեռուոր երկրներ. ընդհակառակը, գաղթածներն էլ վերադառնում են: Վրաստանը, խորհրդային կարգերի տակ, ազգահաւաքման տեսակէտից գնում է վրացի ազգային դեմոկրատների ու մենշեիկները գծած ճանապարհով և, թերեւս, ակելի բացայայտ ու համարձակ, որովհետեւ Մախարաձէների, էլիսաւաների ու Օրախելաւիկները թիկունքին Մոսկւայում կեցած են ամենազօր Օրջնիկիձէներն ու Ենուկիձէները՝ ազգային Վրաստանի մոլեռանդ շատագոյնքը կենտրոնում: Մրանց հովանաւորութեամբ է, որ վրացի կոմունիստները պահում են իրենց բուն տիրապետութիւնը և հայկական Ախալքալաքում, թէև Կախիանին ուսուցանում է իր Երեւանի ընկերներին, թէ՛ «մարքսիզմը չի հաշտում աղաչյականութեան հետ, ինչպիսի նրբացած, «քաղաքակրթւած» բնոյթ էլ որ ընդունի այդ նացիոնալիզմը»:

Նոյն երեւոյթը աչք ծակող սրութեամբ տեսնում ենք և Ազրբէջանում, ուր կոմունիստների հարիւրան ինտրոք տողաւած է ազգայնական-համաթիւրքական դադափարներով և հաւատարմութեամբ հետեւում է մուսաւաթական քաղաքական ականդներին: Գեռ ամենքի յիշողութեան մէջ թարմ է նարիմանովի հրոշակաւոր հրամանը՝ արգելել «օտար», ոչ թուրք աշխատաւորների մուտքը նաւթային

չըջանները, որպէսզի ստեղծուի թուրք բանու-  
րութիւն: Յայտնի է թուրք կոմունիստները  
կատարել պայքարը Մուղանի շրջանում «օտար»  
գաղթականութիւն տեղաւորելու դէմ: Ծանօթ  
է և այն անպարտկելի ատելութիւնը, որ ազըր-  
բէջանցի վարիչները տածում են դէպի ուսա-  
ներն ու հայերը, անգամ դէպի ուսու ու հայ  
կոմունիստները: Եւ գաղանիք չէ, որ Մուս-  
թաֆա Բեմալը Բազում անելի ժողովրդակա-  
նութիւն ունի, քան Ստալինն ու Կալինինը:  
Ազրբէջանցի կոմունիստները ողբի բռին աշ-  
խատում են թուրք յետամնաց զանգաճները  
ազգային գիտակցութեան բերել: Նրանց մտա-  
հոգութեան կենտրոնը Ազրբէջանն է, թուրք  
տարրի որակի և քանակի բարձրացումը,  
թուրք մշակութի զարգացումը, թուրքական  
տիրապետութեան յաղթանակը: Եւ չի կարելի  
ասել, որ նրանց ջանքերն ապարդիւն են անց-  
նում: Մոսկւան ուշադրութեամբ ակննջ է  
դնում և ընդառաջ դնում նրանց պահանջներին:  
Եւ Մոսկւայի այդ բարեհաճութեան հետևան-  
քով է, որ ստեղծւած է այնպիսի անհեթեթ  
դրութիւն, որ Հայաստանի սրտում գտնուող  
Նախիջևանը կցւած է Ազրբէջանին, որի հետ  
ոչ մի ընդհանուր սահման չունի, և Հայաս-  
տանի օրգանական մաս կազմող զուտ հայա-  
բնակ Գարաբաղը բռնի ուժով պահւում է  
ազրբէջանեան տիրապետութեան տակ:

Նոյնը կարելի չէ ասել հայերի մասին:  
Ինչպէս հայ չինովնիկը կամ օտարամոլ հայ  
դրամատէրը ցարական իշխանութեան օրով,  
հայ կոմունիստը օտար է հայ իրականութեան:  
Հայ ազգային հարցերը խորթ են, ոչինչ չեն  
խօսում նրա սրտին ու մտքին: Բոլոր կոմու-  
նիստներից ամենապաղպայտացածը, ամենից  
աւելի աղանդամոլն ու իմաստասրը հայ կոմու-  
նիստն է: Երբ ամբողջ աշխարհը ձեռք քաշած  
«համաշխարհային յեղափոխութեան» ցնորք-  
ներից՝ սկսել է իր տան, իր գործարանի և  
արտի մասին մտածել, հայ կոմունիստը դու  
շարունակում է որոճով չինական ու նորկական  
յեղափոխութեան երազները: Երբ վրացի կո-  
մունիստը միլիոններ է պոկում Մոսկւայից  
գործարաններ ու ճանապարհներ շինելու և իր  
երկրի պահանջները շատ վեր երկկտրակա-  
յաններ կառուցանելու համար, երբ ազրբէ-  
ջանցիի մտահոգւած է անծայրածիր անապատ-  
ների ոտոզումով, իր գիւղերը դպրոցների և  
գրադարանների ցանցով պատելով, հայ կո-  
մունիստը իր և երկրի ոյժն ու եռանդը վատ-  
նում է լեւինեան սոցյալատիկայի թուլակաման  
վրա, Երևանն ու թիֆլիս թառած հայ կոմու-  
նիստները անձնատուր են եղած ներկուսակ-  
ցական աքլորամարտի, քայքայում են ժողո-  
վրդական անտեսութիւնը և կուրորէն կա-  
վրդական անտեսութիւնը ու Օրախելաչիլիների  
տարում Ստալինների և յայտնապէս Հայաստա-  
նովէն, հակասական և յայտնապէս Հայաստա-  
նի ու հայ ժողովրդի զարգացմանը խոչընդոտ

հանդիսացող հրամանները: Երևանում նստած՝  
հայ կոմունիստը չի ապրում Երևանի կեն-  
քով: Նա միամտօրէն շարունակում է գառան-  
ցել, թէ ինքը «Առաջաւոր Ասիայի դրանք»՝  
«համաշխարհային յեղափոխութեան աւան-  
գարդն» է. հանդիսանում: Եւ Վրաստանում,  
Կախիանիների ու Օրախելաչիլիների ձեռքի  
տակ, վրաց ազգային դատին է ծառայում,  
ինչպէս երէկ հայ մեկնչեիկը ծառայում էր  
ժողովանիաների ու Թաժիչիլիների ձեռք  
տակ:

Ողբերգութիւն կայ այս կացութեան մէջ:  
Եւ այդ ողբերգութեան՝ հայ կոմունիստների  
ազգադաւ, անարի, վախկոտ, վատ կեցւածքի  
հետեւանք է, որ հայ ժողովուրդը Անդրկով-  
կասում բոլորովին մեկուսացած, ուժաթափ և  
արհամարհելի քանակի է վերածւած: Աւսած  
է՝ քանակը որակ է: Երբ մեծամասնութիւն  
կազմող ժողովրդից հայը կովկասում վեր է  
ածել իր զբաղմանով, զարմանալի չէ,  
որ ընկերային կեննքում գրաւած առաջնա-  
կարգ դիրքերից էլ մղւած է յետին դիրքեր:  
Եւ մշակոյթի ու անտեսութեան, և՛ հանրային-  
քաղաքական կեննքի ապարէզներում, խոր  
չորդային իշխանութեան տակ, հայը դարձել  
է երրորդական ու չորրորդական ոյժ: Նրա  
ազգային ստացւածքը բռնազրաււած է վրա-  
ցիների և ազրբէջանցիների կողմից: Վրաստա-  
նում ունեցած հայկական հանրային-մշակու-  
թային հարուստ հիմնարկութիւնները խափան-  
ւած են և հատ ու կէնտ ողորմելի «Հայար-  
տուն»-ներից դէնը չեն անցնում: Ազգային  
տեսակէտից, նրան այլևս հաշի առնող չկայ:

Այս հանգամանքը մասնաորպէս ակնբայս  
է Հայաստանի խնդրում՝ 30,948 քառ. կիլո-  
մետր և 879,872 հողի բնակչութիւն, այնինչ  
Վրաստանը 68,865 քառ. կիլ. 2,666,388 բնակ-  
չութիւն և Ազրբէջանը 84,679 քառ. կիլ. և  
2,314,077 բնակչութիւն: Այս թիւերից Վրաս-  
տանին է կցւած Ախալքալաքը՝ 2500 քառ.  
կիլոմետր և 78,918 բնակիչներով և Ազրբէջա-  
նին են միացւած Լեւոսային Գարաբաղը 4,161  
քառ. կիլ. ու 125,299 բնակչութեամբ, Ծարուր  
Նախիջևանը՝ 5,355 քառ. կիլ. և 104,960  
բնակչութեամբ: Այս հողամասերը իրենց աշ-  
խարհազարական դիրքով, ազգային կազմով և  
նոյնիսկ տնտեսական հակումով անբաժանելի  
մասն են Հայաստանի: Եթէ բոլոր այդ հողա-  
մասերը՝ 12,016 քառ. կիլ. տարածութեամբ և  
309,123 բնակիչներով վերած իացւէին իրենց  
բնական մարմինն, Հայաստանը կունենար  
42,964 քառ. կիլ. տարածութիւն և 1,188,995  
բնակիչ: Հարցի հիմնական լուծում չէր լինի,  
ի հարկէ, և ա՛յս, բայց դէ՛մ մասամբ կը դար-  
մանէր այն աղաղակող անարդարութիւնը,  
որին ենթակայ է խորհրդային լծի տակ տալ-  
տող մեր հայրենիքը:

Ի՞նչ են ասում այս մասին Կախիանիները.

ինչո՞ւ չի իրագործուում տարրական արդարութեան այս պահանջը: Արդեօք խորհրդային դադարափարափօսութեանն է հակասում: Արդեօք չի՞ բխում բուն իսկ լենինիզմի սկզբունքներից: Ո՛չ այս, ո՛չ այն: Երբ խնդիրը զալիս է մի Թուրքմենիստանի կամ մի Բելոռուսիայի, կամ հարևան Վրաստանի, նման հարցերը իսկոյն հրաւիրում են կենտրոնի ուշադրութիւնը: Հայաստանով զբաղւող, Հայաստանի համար ցաւող չկա՛յ: Որովհետեւ Հայաստանի վարիչները ապիկար, հայ ժողովրդի շահերին հակառակ գործող մարդիկ են: Որովհետեւ նրանք կատարում են իրենց տէրերի՝ Ստալինների ու Օրախելաշիլիների կամքը: Որովհետեւ հայ կոմունիստները խաղաղիք են վրայել ու ազրբէջանցի կոմունիստների ազգայնական

քաղաքականութեան համար, կոյր գործիք են կախիանիների ձեռքին:

Թւերի լեզուն Երկրագնդի վրա գոյութիւն ունեցող բոլոր լեզուներից ամենից պերճախօսն ու ազրուն է: Եւ, բոլշևիկեան վիճակագրութեան թւերը ահա, հակառակ բոլոր Կախիանիների հաւաստիացումներին, աղաղակում է, ի լուր աշխարհի, թէ՛ «Կովկասում կրկին գոյութիւն ունի ազգային հակամարտութիւն, թշնամանք, նորից իրար միս են կրծում, և հաստատուն ազգային խաղաղութիւն չկայ»,\* ) և թէ՛ հայ ժողովուրդն ու Հայաստանը առաջին զունն են այդ «հակամարտութեան» ու «թշնամանքի»...

Ով ահանջ ունի լսելու, թո՛ղ լսէ:

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Թւերի լեզուն՝ ամենպերճախօս և ամենից աւելի հասկանալի լեզունն է:

Ինչքան թարգմչի աշխատեն ճառերի և սպազարական թերթերի հեղեղի մէջ ծածկել ճշմարտութիւնը, բաւական է հրապարակ դնել մի քանի չոր ու ցամաք պղեսակներ, առարկայական թւեր, և կեղծիքից ոչինչ չի մնայ: Անողորք իրականութիւնը դուրս կը ցցէ իր պիղերը:

Սահման չունի հայ բոլշևիկների թափած ճիւղը, անհաշիւ են նրանց ճառերն ու յօդւածները՝ փառաբանելու համար Հայաստանի ու հայ ժողովրդի բարօր վիճակը խորհրդային իշխանութեան տակ, բայց ահա մի քանի դատան թւեր, և կոմունիստական երանաւէտ կարգերից զար շմնաց զարի վրա:

Եւ թւերն էլ շարս տասնհամանի հակայեղափոխականները՝ չէ՛, որ հնարել Լեն, այլ ինքը խորհրդային իշխանութիւնն է հրատարակ օղբ իր ամենահղինակաւոր վեճակաչիքներից մէկի՝ Գ. Գրիգորեանի ձեռքով\* ):

Գ. Գրիգորեանը վեճարձութեան է ենթարկել 1926 թ.ի դեկտեմբերեան հաստատուած հայ խորհրդային մարդահամարի ազգագրական տւեաները՝ Անքրկովկասին վերաբերող մասում: Ըստ այդ մարդահամարի ամբողջ Անդրկովկասում արձանագրւած է, կը ՚ր թւերը՝ 5,861,000 այր ու կին: Իր ազգաբնակութեան քանակով Անդրկովկասը Ուրբղ. Միութեան մէջ բանում է երրորդ տեղը — Ռուսաստան՝ 100,8 միլիոն, մարդ, Ուկրայինա՝ 29 միլիոն, Ուզբեկիստան՝ 5,3՝: միլիոն, Բելոռուսիա՝ 5

միլիոն և Թուրքմենիստան՝ 1 միլիոն. ամբողջ միութեան մէջ 147 միլիոն մարդ:

Իր հերթին Անդրկովկասի ազգաբնակութիւնը բաժանուում է հետեւեալ ձևով. Վրաստան՝ 2,666,000, կամ երկրի 45,5%, Ազրբէջան՝ 2,315,000 կամ 39,4% և Հայաստան՝ 880,000 15,1%:

Ուրիշ խօսքով, Հայաստանը իր բնակչութեամբ Անդրկովկասի միայն եօթներորդ մասն է կազմում, մինչդեռ Վրաստանը՝ կէսից քիչ պակաս և Ազրբէջանը՝ մի երրորդից շատ աւելի:

Վերջինք և հողային յարաբերութիւնը.

Ազրբէջան՝ 84,679 քառ. կիլոմետր, Վրաստան՝ 68,865 քառ. կիլ. և Հայաստան՝ 30,948 քառ. կիլ.: Հողով էլ Հայաստանը շատ յետ է մնացել իր հարեւաններից:

Նոյն երևոյթը տեսնում ենք և ամբողջ Անդրկովկասի նկատմամբ, ուր առաջին տեղը զբաւում են վրացիները՝ 1,797,960 հողի, կամ 31%, երկրորդ տեղը՝ թուրքերը — 1,652,768 հողի—28,5% և միայն երրորդ տեղը՝ հայերը — 1,332,592 հողի — 23%: Մինչդեռ առաջ հայերը վրացիներից աւելի էին:

Համամարտութեանական տեսակետով, վրացիների 99 տոկոսը պարտ է Անդրկովկասում, թուրքերի՝ 87% և հայերի՝ 85%: Այս երևոյթը բացատրուում է ոչ միայն այն փաստով, որ առաջ էլ բաւական հայեր կային Անդրկովկասից դուրս, այլ և նրանով, որ հա-

\* ) Г. Григорьян. «Насе денье 5агвазая».

\*) Կախիանիի ճառը սպւած է «Խարիթ. Հայաստան»-ի 1 փետր. 1929թ.

յերի շարունակական արտադրութ և տեղի ունենում դէպի Ռուսաստանի ներսերը:

Բազարձակ թույլ, Պորճրդ. Միութեան սահմաններում հաշւած է 1,821,000 վրացի, թուրք 1,766,000 և հայ՝ 1,567,000: Մինչդեռ, առ 1 յունւար 1916թ., համաձայն ոռւս կառավարական տւեայնների, Պորճրդ. Միութեան ներքին սահմաններում ապրում էր շուրջ 2 միլիոն հայ, որից Կովկասում — մէջը հաշւելով և Կուրանի ու Թերեքի շրջանները և Ստաւրոպոլի ու Սեծովեան նահանգները — 1,860,000 հոգի\*):

Առանձին հանրապետութիւնների ազգային կազմի տեսակէտից թւերը նոյնպէս չափազանց բնորոշ են: Այստեղ արդէն առաջին կարգում գտնուում է Հայաստանը, ուր հայերը կազմում են ազգաբնակչութեան 84,6%ը, թուրքերը՝ 8,8%, ուսները՝ 2,2% և այլն:

Վրաստանում վրացիների տոկոսն է 67,6%, հայերինը՝ 11,6%, թուրքերինը՝ 5,2%, ուսներինը՝ 3,6%: Ազրբեջանում թուրքերը 63,4% են, հայերը՝ 12,4%, ուսները՝ 9,7%, վրացիները՝ 0,4%:

Հետաքրքրական է և լեզուի խնդիրը. մայրենի լեզուով է խօսում վրացիներին 96,8%ը, թուրքերին՝ 94,3%ը և հայերին՝ 93,3%: Վրացիներին և թուրքերին մէջ հայերէն խօսող չկայ, մինչդեռ հայերին 5,6%ը խօսում է վրացերէն, 0,8%ը՝ ուսերէն, 0,2%ը՝ թուրքերէն և 0,1%ը՝ այլ լեզուներով:

Ուշագրաւ է, որ վրացիներին 0,2% է միայն խօսում ուսերէն, իսկ թուրքերին՝ 0,1%ը:

Այսպէս, ուրեմն, ամենից շատ իրենց մայրենի լեզուն պահել ևն վրացիները, յետոյ թուրքերը և վերջը միայն հայերը: Վ.

# Հ.Յ.ԴԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐՈՒՄ

Ինը տարի է, որ բոլլեիկները ամենամանողը պայքար են մղում Իւշնակցութեան դէմ: Հայաստանում նրանք գործադրեցին ամէն միջոց այդ կուսակցութիւնը ոչնչացնելու և ժողովրդի մտքից ու սրտից արմատախիլ անելու համար: Զաւեշտական դատավարութիւն ու յիփիլոգիոն համագումար, զրպարտութիւն ու վարկաբեկում, պրովկացիա ու քրէական մեղադրանք, ցանդաւանային ձերբակալութիւն ու աքսոր, տնտեսական ու բարոյական ճնշում և, վերջապէս, կազմակերպւած պրոպագանդա ու լայն դադափարական պայքար, — ամէն, ամէն ինչ փորձեց Հայկոմկուսը վերացնելու համար դաշնակցական ահաւոր վտանգը. Եւ, սակայն, այդ բոլորից յետոյ էլ, Հայաստանի խորհրդայնացման ութերորդ տարեկարճի օրը, Անդրկովկասեան Երկրային Կոմիտէի քարտուղար Ռուբէնը վեր է կենում ու յայտարարում, թէ Իւշնակցութիւնը ոչ միայն չի պարտաւճ, այլ դնայով ուժեղանում և երկրում աւելի գործուն է դառնում: Ըստ Ռուբէնի, Իւշնակցութիւնը այսօր դարձել է աւելի քան վտանգաւոր, որովհետև նա հանդէս է դալիս ջողարկած՝ ձեռով՝ ազգայնական դիմախի տակ: Բացի այդ, Ստալինի այդ մանկալուիկը, առանց պատէպատ ընկնելու, Հայկոմկուսի նախկին ղեկավարութեան մեղաբարձ է դաշնակցական թեքման մէջ (ՁՊորճրդ. Հայաստան», 29 նոյեմբ. 1928թ.): Ահա թէ որքան է հօրաբացի Իւշնակցութիւնը Անդրկովկասեան հասնապատասխանատու կոմունիստներից մէկի վրչի տակ:

Իւշնակցութեան խորը վտանգը զգաց նաև Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտրոն-

նական կոմիտէի հինգերորդ պլենումը: Նոյեմբերին Երևանում գումարաւած այս ժողովին էլ գտաւ, որ Իւշնակցութիւնը — ըստ բոլլեիկներին՝ ազգայնականութիւնը — ամէն տեղ և բոլոր ասպարէզներում հետապնդում է բոլլեիկներին: Գաղափարաբարանական խնդիրներին շուրջ մշակած բանաձեւում, պլենումի կողմից ընտրաւ յանձնաժողովին ասում է. «ազգայնականութիւնը ընդունում է այնքան բազմազան, ջողարկած գաղտնի ձևեր, որ յաճախ հնարաւորութիւն է ստանում թափանցել այնպիսի ասպարէզներ և խաւերի մէջ, որտեղ ամենից թիչ սպասելի էր: Եւ որքան սուր բնոյթ է ստանում պայքարն ընդդէմ ազգայնականութեան, այնքան աւելի նա թագնուում է, այնքան աւելի անջուրհիւլի ձևեր է ընդունում նա, աննկատելի թափանցելով մեր մամուլի էջերը, մեր դրակամութեան ասպարէզը, մշակութային — դաստիարակչական՝ հիմնականները և այլն, դադափարակաւորէին քայքայելով մեր խորհրդային և տնտեսական ապարտի մասնիկները, մեր դիւզացիութեան և պրոլետարիատի առանձին խաւերը և նոյնիսկ մեր կուսակցական կազմակերպութիւններին որոշ շերտերը» (ՁՊ. Հ., 13 դեկտ. 1928թ.): Սա էլ մի երկրորդ փոստովանութիւն Հայկոմկուսի ղեկավար ժողովի կողմից:

Իսկ սոյն տարւայ յունւար 20-ին Հայաստանի Կոմիտէի վեցերորդ համագումարը բացւեց՝ ճընդդէմ դաշնակիրմի՝ Նշահարանի տակ: Մասնաձեւելով, որ պետևս դաշնակցական մտայնութիւնն ուժեղ է Հայաստանում և որ նրա դէմ մինչաթմայ մղած պայքարը եղել է թոյլ, կենտրոնական կոմիտէի հաշւետու Հայդկո կոստանանը եզրակացում է. «Որո՞նք են մեր միջոցները դաշնակցական իրեւորդիայի դէմ պայքարելու գործում: Նախ և առաջ մեր իրեւորդական

\*) «Кавк. Календарь», 1917 г.

պայքարը, որը պէտք է մեր աշխատաւորութեան դեռեալ յետամնաց տարրերին, որոնք կարող են գերի ընկնել ազգայնականութեան, ազատարարի այդ թոյնից տանի ինտերնացիոնալիզմի ուղիով: Եւ երկրորդ, ինչպէս բոլորին յայտն է, դա մեր Պետքազգայնացութիւնն է (Չէկան), որն անողոք պայքար է մղում ակտիւ հակաշրջափոխութեան բոլոր տեսակի փորձերի դէմ» («Յ. Ղ.», 29 յունւար, 1929թ.):

Կուսակցութեան գլխաւոր քարտուղարի նման յայտարարութիւնը պարզ անորոշութեան նշան է և իր մէջ ոչինչ նոր բան չի պարունակում: Պայքարի բոլոր ճակատներում պարտելուց յետոյ է, որ դիմում են վերջին ապաւէն՝ բռնի ուժին: Իսկ Չէկանն էլ հո մինչև այժմ գործադրած «անողոք» հարածանքներինց աւելի ոչինչ չի կարող անել: Մանաւանդ, որ փորձը ցոյց է տալիս, թէ բռնութիւնն ու հարձանքը, որբան սաստկանում է, Դանակցութիւնը Հայաստանում այնքան աւելի է խորանում ու անսասան դառնում: Այդպէս, հէնց ինքն բուլճարի գեկուցումների ընդթիւն ու խուճապահար տրամադրութիւնները: Չէկայի ձեռք առած բոլոր միջոցները ազգելք չեն չանդիսանում, որպէսզի Դանակցութիւնը զաղափարականորէն քայքայի բուլճարի կուսակցական կազմակերպութիւնների «բորչ շերտերը» և վարակի անզամ նախկին կենտրոնին:

Թողնելով ուրիշ անզամի պարզելու Դանակցութեան ընկերային ընդթիւն ու գործունէութեան ազգային թէ՛ ազգայնական էութիւնը, այստեղ կանգ առնենք Երկրում տեղի ունեցած մի շարք երևոյթներէ վրա:

Բուլճարի կուսակցութեան գլխաւոր մեղադրանքն այն է, որ, իբր թէ, Դանակցութիւնը արտասահմանում հանդիսանում է «միջազգային իմպերիալիզմի կամակատարը» և Երկրում «քառաւորութիւններ ու հրդեհներ կազմակերպելով»՝ ձգտում է տապալել Հայաստանի «քաներադիւղացական» իշխանութիւնը: Թէ՛ որբան անհիմն է այս մեղադրանքը, բաւական է միայն յիշել, որ մինչև այս ոչ մի փաստ չեն մատնանշած հաստատելու համար նման շնորհալից մի յայտարարութիւն:

Ճիշտ է, անցեալում Հայ յեղափոխութիւնը որոշ յոյսեր կապել է արտաքին օգնութեան և դիւանագիտութեան հետ: Բայց համաշխարհային պատերազմն ու յաջորդող դէպքերը բաւական զորաւոր դաս են, որպէսզի նման յոյսեր չնուցանեն: Մանաւանդ, Լոյսանից յետոյ այլևս ամենքին յայտն է, թէ ինչ վերապահ դրոշ է բռնել Դանակցութիւնը հանդիպել եւրոպական խոստումների և դիւանագիտութեան: Արաւել ևս Դանակցութեան Երկրի հատածը: Այդ են ապացուցանում Երկրի ամենապատասխանատու մարմինների կողմից ընդունւած բանաձեւերը:

Այսպէս, այդ բանաձեւերից մէկում ասւած է. «... Պէտք է ձեռք քաշել եւրոպական դիւանագիտութեան անխրադաճ վստահութիւն ստանելու քաղաքականութիւնից: Լոյսանի կոնֆերանսն ամենալաւատեսներին անզամ համոզեց, որ այդ դիւանագիտութիւնը կատարելապէս անակ է Հայոց հարցը դաբական վախճանի հասցնելու համար: Հայ Ժողովուրդն այլևս չի հնարատում եւրոպական պետութիւնների համադրմարներին, սրբօրումներին և նրանց քաղաքագէտներին ու

մինիստրներին հայանպաստ յայտարարութիւններին ու պարլամենտական ցոյցերին»: Այս մէկ վճռական յայտարարութիւնն իսկ բաւական է համոզելու համար. թէ որբան է հետո Դանակցութիւնը եւրոպական պետութիւնների «կամակատարը» լինելուց:

Բայց դրա հետ մէկ տեղ բանաձեւում ասւած է մէկ ուրիշ բան. «... Ժողովը կանգնած է այն տեսակէտի վրա, որ ազգութիւնների բազմակողմանի զարգացման ու յառաջադիմութեան և սոցիալիստական աշխատանքների յաջողութեան համար անհրաժեշտ է իւրաքանչիւր ազգի անկախ գոյութիւնը: Վերոյիշեալն աւելի քան անհրաժեշտ է Հայ Ժողովրդի համար. այս իսկ տեսակէտից, Դանակցութիւնը կանգնած է Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա»: Մէկ ուրիշ Ժողովի բանաձեւում էլ ասւած է հետեւեալը. «Հ. Յ. Դանակցութիւնը կենսաքի է կոչել Հայ Ժողովրդի զաղաքական դատը վարելու և նրան անկախ պետական կազմակերպութեան հասցնելու համար: Ով չեղում է այս նպատակից, նա դադարում է դանակցական լինելուց»:

Ի հարկէ, բուլճարիները կարող են պատասխանել, թէ այդ բոլոր բանաձեւերը չեն խաղաղում, որպէսզի Դանակցութիւնը «միջազգային բուրժուազիալից» հետ ձեռք ձեռքի տած՝ խորհրդային իշխանութիւնը տապալելու աշխատանք թափի: Տեսնենք, թէ ո՞րբան է համապատասխանում իրականութեան մեղադրանքի այս կէտն ևս:

«Ներկայ Հայաստանին, դրւած է նոյն բանաձեւում, մենք խորշ արժէք ենք տալիս և դէպի անկախութիւնը տանող գլխաւոր հանդիսաններից մէկն ենք համարում: Մենք պիտի ընդառաջենք ու օժանդակենք այն նախաձեռնութիւններին, որոնք ձեռնարկուած են Հայաստանի անտեսական և մշակութային մակարդակը բարձրացնելու, Հայաստանի սահմանների ներգործակելու և աճարկնելու նպատակով»: Զինւած ուժերով խորհրդային իշխանութիւնը տապալելու մեք դէմ ենք: Խորհրդային կարգերը շարիշախում են էվոլյուցիայի անխնդիր տակ: Մենք պէտք է մեր զաղափարական պայքարը խորացնենք»: Ահա Երկրի դանակցականների կարծիքը, որը, ինչպէս այս յայտն է, նաև Դանակցութեան պաշտօնական տեսակէտն է:

Կարող ենք բուլճարիները հաստատել, որ Երկրի մեր ընկերները գործել են հակառակ այդ որոշումներին ոգուն: Անկասկած, ո՛չ: Դանակցական աշխատաւորն ու պաշտօնեան, ուսուցիչն ու անտեսաւորն, հողագործն ու զինուորը, բոլորն էլ ամենայն բարեխղճութեամբ ու պարտաճանաչութեամբ կատարել են իրենց պարտականութիւնները հանդէպ Երկրի ու Ժողովրդի: Եւ անպայման աւելի անշահախնդրի ու անկաշառ, քան իրենք՝ բուլճարիները:

Բուլճարիներն իրենց ձեռքի տակ ունե՞ն տեսնենք ապացուցանելու համար, թէ Դանակցութիւնը փորձեր է արել բռնի կերպով տապալելու իշխանութիւնը: Ի հարկէ, ո՛չ: Բոլորի ինչողութեան մէջ տակաւին թաւ է վրացական ապստամբութիւնը, որին, թերևս, միանար և ծայր աստիճան կեղեքած ու հարածական Հայաստանի աշխատաւորը, եթէ չլինէր Դանակցութեան հզոր ազդեցութիւնը նրա վրա: Չնայած Չէկայի պրովոկացիաներին ու բարձրախառն մեքենայութիւններին, Հայ Ժողովուրդը հետեւց Դանակցութեան հրահանգներին:

գին: Մենք իրաւունք ունենք պարծանքով արձանագրելու այս փաստը: Իսկ ի՞նչ ունեն բուլղերները ասելիք դրա դէմ:

Դաշնակցութիւնը պէտք էլ չունի բռնի ուժով տապալելու խորհրդային իշխանութիւնը: Այդ իշխանութիւնը ինքն էլ թաւալելը դնում է ղէպի խորտակում: Մեզ համար շատ յստակ է այդ փաստը, ինչպէս նաև յստակ է, որ Հայաստանի դիւրից մութ մտպերը չեն չարացել և որ անհրաժեշտ է լարել մտքն ճիշտ գալիք անխուսափելի փոթորիկ առաջն առնելու համար: Այս է մեզ մտահոգողը: Մրա համար են Երկրի դաշնակցականները յանձն առնում ամէն գրկանք ու գոհողութիւն...

«Բռնի ուժից» ոչ ճակատ սուր գէնք է «գաղափարական պայքարը»: Եւ Դաշնակցութիւնը իր պայքարի մէջ այդ գէնքն է գործածում: Իրա դիմաց բուլղերները լարում են իրենց բոլոր մեքենաները՝ Ձէկա, գրակալներ, խօսքի և մամուլի ազատութեան մենատիրութիւն, հսկայական նիւթական միջոցներ և մարդկանց դաջթակղելու հնարաւորութիւններ: Ո՛վ է յաղթողը:

Երբ բուլղերներն ամէն որ վեր են կենում և հէնց իրենց յերնով յայտարարում, թէ դաշնակցական մտայնութիւնը ներս է սողոսկում խորհրդային բոլոր հիմնարկութիւններն ու անտեսական մարմինները, դպրոցներն ու համարարանը, հրատարակչական ընկերութիւններն ու գրակալութեան մէջ, թէ այդ մտայնութեամբ վարակում են երիտասարդ կոմունիստների կազմակերպութիւններն ու կուսակցութեան որոշ շերտերը, և, զմընպէս, թէ՛ կուսակցութեան ղեկավարութիւնն անգամ դաշնակցական թէքում է ունենում — այդ բոլորից յետոյ պարզ չէ՞, որ գաղափարական ճակատում պարտուող ոչ թէ Դաշնակցութիւնն է, այլ Երկրում իշխող՝ Հայդիմուրը:

Երկրի մեր ընկերներն առում են՝ «Դաշնակցութիւնը կեանքի է կուչել հայ ժողովուրդին անկախ պետական կազմակերպութեան հասցնելու համար»: Պետականութեան դաղափարը համեմատաբար նոր է մեզ մօտ, և հայ ժողովուրդը ւնի չի իւրանցիլ դեռ: Բուլղերները Հայաստանին աղաւաղած պետական կերպարանք աւին: Պէտք էր ժողովուրդին ցոյց տալ այն միջոցներն ու ճանապարհները, որոնցով նա կարող է հասնել խեղական պետական կեանքի: Իսկ դրա համար, նախ և առաջ, պէտք է երկիրը ազատագրել օտար տիրապետութիւնից, վառ պահել ժողովրդի ազգային ինքնագիտակցութիւնը, անտեսական անկախութիւն ձեռք բերել և սահմանային արզարացի պահանջներն իրականացնել:

Թէ անկախ պետականութեան գաղափարը տարածելու աշխատանքը ո՛րքան է յաջողութեամբ պսակել, չափանիշ առնենք Կոմկուռի շարքերում երևան հանած արամաբուրութիւնները: Բուլղերները մինչև այժմ արած խոտտոմանքիւններին պարզում է, որ կուսակցութեան մէջ ոմանք «ուկրոնիստական» միտումներ են ցոյց տալիս, այսինքն՝ չեղում են կոմունիստների ուղղափառ գծից՝ դնելով Հայաստանի անջատման պահանջը, ոմանք պահանջում են Ախալքալախի, Կարսի, Դարբասղի և Նախիճայի շրջանները միացնել Հայաստանին, իսկ ոմանք էլ բողոքում են, թէ Հայաստանը անտեսապէս ճնշւում է Անգրիկովկասի միւս հանրապե-

տութիւնների կողմից կամ իրաւագրելու է նրանց համեմատութեամբ: Ինչպէս քննութիւնները պարզեցին, 1925թ. տեղի ունեցած Ախալքալախի յայտնի շարժումին ամենագործոն մասնակցութիւն են բերել տեղի կոմունիստները: Նոյն մտայնութիւնն ունեն և Դարբասղի կուսակցականները: Ինչ վերաբերում է ազգային ոգու արած նւանումներին, այդ երևում է հէնց բուլղերի գեղուցանողներն ու հրապարակագիրներն ամէն մի բարեց ու գրից: Անհատներն կը լինի կարծել, կարգում ենք Ծրէ պլենումի բանաձևում, թէ ղեկավարութեան փոփոխմամբ նման (ազգային) տրամադրութիւնները վերացած են վերջնականապէս, այդ պատճառով դրանց դէմ մղուող պայքարը պահանջում է երկարատև, հսկայական ջանքեր» («Խ. Հ.», 1928թ. № 287):

\*\*\*

«Դաշնակցութիւնը Երկրում դաւադրութիւններ է կազմակերպում», — ահա բուլղերների երկրորդ մեղադրանքը: Մրան մի պատասխան ունենք միայն — Դաշնակցութիւնը Երկրում ամէն մի դաւադրութեան արդէլ է լինում: Պարզեց մեր միտքը:

Նախ՝ արտասահմանի մասին: Բուլղերները շատ լաւ դիտեն, որ Դաշնակցութիւնը չի մասնակցում հակախորհրդային որևէ կազմակերպութեան: Մենք ոչ միայն աննշխիւն չունենք ուստարագութեան աջ հոսանքների հետ, այլ, ինչպէս յայտնի է, դէմ ենք «Պրոմեթէ»-ի շուրջ համախմբած տարրերին: Եւ միայն բուլղերների անճարակութիւնն ու փաստ չունենայն է ցոյց տալիս, երբ նրանք մեր «հակալեզարիտական» գործունէութիւնը հիմնաւորելու համար մատնանիշ են անում, որ «Իրօշակ»-ի մէջ լոյս է տեսել «Արևելեան Ընկերակազմական Լիգայի» կոչը («Խ. Հ.», № 282, 1928թ.)...

Գալով Երկրին, բացի Մանուկ Ուշուրյանի սպանութեան առթիւ կազմակերպած խեղճ ու կրակ դատաւարութիւնից, ուրիշ ղէպք չեն կարող մատնանշել ապացուցանելու համար Դաշնակցութեան «դաւադրութիւնները»: Եւ Ուշուրյանի դատի խնդրում էլ բուլղերները շատ չուսով զգացին, որ թակարդն են ընկել և որ այդ ղէպքը շարժէր այդքան մեծ ազմուկի, քանի որ շկարողացան հաստատել Դաշնակցութեան «հակալեզարիտական բռնութիւն»: Դատի ժամանակ միայն մէկ բան պարզեց, այն, որ Ուշուրյանը իր անբարոյական ընթացքով ոտնահարել է սասունցիների նահապետական սովորութիւնը, և այդ բանը չեն կարողացել հանդուրժելու տաքարուի երիտասարդ դաշնակցականները և պատժել են յանցարարին: Կուսակցութեան դերը, սակայն, ոչնչով չապացուցեց:

Եւ մի՞թէ յայտնի չէ Ալկային և կենտրոնի, թէ քանի՞ քանի նման ղէպքեր տեղի կուեննային, եթէ չլինէր Դաշնակցութեան երկրից կարգապահութիւնն ու երկիւղը: Ամենքին յայտնի է, որ խորհրդային իշխանութեան հաստատուելու առաջին իսկ օրից, Հայաստանում միշտ էլ եղել են փախստականներ, որոնք ապաւինած լեռներին ու գէնքին՝ բերեմն տարիներ շարունակ մտացել են անհասանելի խորհրդային իշխանութեան համար: Իրանք, մեծ մասամբ, կացինի տակից ազատած մարդիկ էին՝ չեցուն անձնական վրէժ-

ինչպէս թեմաք: Անշուշտ, որ դրանց մէջ եղիկ են նաև մի շարք դաշնակցականներ:

Եւ մի՞թէ յայտնի չէ նաև Չլկային ու կենտրոնին, որ եթէ Դաշնակցութիւնը կամենար երկրի ներսում խռովութիւններ հասնել, այս զոյգինքն ձեռք առնած մարդիկ ամենայն օր զէնքը կը լինէին նրա ձեռքում: Դաշնակցութիւնը ո՛չ միայն չի օգտագործել նրանց, այլ և աշխուրջ հակել է, որովհետեւ այս յուսահատած մարդիկ որևէ քաղաքացեցութիւն չանեն: Կարիք կա՞յ փաստերով խոսելու: Կարո՞ղ է Չլկան մի հատիկ հաւատակ օրինակ դրել:

Առանկար Հինգ Հանրաժամոթ Բաշկալանիցի Արտուշի գէպքը: Այդ խորխոր ու յամտու տղամարդը ամիսներ շարունակ անարեկման տակ էր պահուած իր շրջանի կոմունիստներին: Կառավարութիւնը երկու անգամ թնդածօթով և գնդադիրներով արշաւանք կազմակերպեց նրա դէմ, բայց միշտ էլ չարապար պարտութեան մատնեց: Եւ դիմեց իր սովորական ամարդի միջոցներին — ձերբակալեց Արտուշի ընտանիքի անդամներին և մտազգայականներին: Սակայն, այդ էլ յօգնեց: Եւ, ի վերջոյ, միայն դաւադրութեամբ վերջ տուց նրա կեանքին ու Հանգստացուց: Այդ նոյն Արտուշը—Չլկան այդ գիտէ—գիտէլ էր և զաշնակցական կենտրոնական կոմիտէին՝ զնկելով իրեն կուսակցութեան տրամադրութեան տակ, բայց կենտրոնական կոմիտէն պահանջեց, որ անմիջապէս Հեռանայ Հայաստանի սահմաններից և վերջ տայ իր ընթացքին: Եթէ Դաշնակցութեան քաղաքականութեան մէջ լինէր Երկրում դաւեր սարքերը, Արտուշներին ձեռքից կը փախցնէ՞ր: Բանի՞ր—քանի Արտուշներ կային ու կան Հայաստանում...

Փախստականներ եղիկ են նաև մեծ խմբերով.

որոնց միջոցով Հո Հնարաւոր էր լայն շարժումներ կազմակերպել: Յիշենք, թէկուզ, Ղազարի շրջանի և, 1927թ. աշնան՝ Չանգեղոսի Հարիւրաւոր փախստականներին: Դաշնակցութիւնը ոչ միայն չի փորձել օգտագործել նրանց, այլ և ամէն կերպ յրկրորդ է, որ խոստովան ընդհարումներից և Հնարաւորութեան սահմաններում իջնեն յեռանքից ու ներկայանան իշխանութեան:

Դաշնակցութեան քաղաքականութիւնը երկրում այս ուղիով է բնթաղել և ոչ ոք չի կարող հակառակն ապացուցանել: Գուցէ և շատ է տուժել Դաշնակցութիւնն իր խաղաղ քաղաքականութեան համար, զուգէ շատերն են յուսախաբել և երես դարձրել նրանից: Բայց յանցատուր կը լինէր Դաշնակցութիւնը, եթէ տար էէր զանդաւանդի զիւրադրոյ տրամադրութիւններով և բաջալերէր արարքներ, որոնք զէմ են նրա որդեգրած քաղաքականութեան, մի. քաղաքականութիւն, որի միակ զրդիչը երկրի և ժողովրդի բարիքն է:

Դաշնակցութեան նպատակն է Երկրում կաղմակերպուած պահել ժողովուրդը գալիք օրերի համար. դարկ տայ Երկրի վերաշինութեան և Հայաստանի ուժեղացման և «խորացնել զաղաքական պայքարը»:

Յաջողու՞մ է այդ:

Ի պատիւ Երկրի մեր ընկերների, նրանց կամքը չի ընկճուած չէկայական խոչընդոտների առջև, և նրանք փայլուն յաջողութեամբ կատարում են իրենց պատմական ստաբելութիւնը: Ապացո՞յց — թէկուզ Հէնց բոլշևիկների երևան դերած խուճաղը «զաշնակցական մտայնութեան» գործած նաւուճների առթիւ:

ԱՇՈՏ-ԱՐՄԻՐՈՒՄ

# ԱՐՅԻԵԼԵԱՆ, ԳԱՀԱՆ, ԳՆԵՐՐ

Ըստ Թիւրքիոյ Պետական Տարեգրքին

(1927—1928)

Թիւրք Հանրապետութիւնը քանի մը տարիէ ի վեր սկսած է հրատարակել Պետական Տարեգրքը (Տեվլիք Սայմամէտի): Մեր ձեռքին տակ է վերջին տարւանը՝ 1927—1928, ստւար ու պատկերադարձ հատոր մը՝ 1300 էջէ բաղկացած, որ կը խօսի Հիմնական Կազմակերպութեան Օրէնքին (Սահմանադրութիւն), Ազգային Մեծ Ժողովի, գործավարութեանց և այլ պետական հիմնական պաշտօնատուններու կազմի, համայարարաններու, դրամատուններու, նահանգներու և այլ նիւթերու մասին:

Քանի մը յօդուածներով «Դրօշակ»-ի ընթերցողներուն պիտի ներկայացնենք Անատոլիւի Արևելեան Նահանգները՝ այնպէս, ինչպէս պատկերացուած են անոնք

այս Տարեգրքին մէջ. այնուհետև ներկայ վիճակը պիտի համեմատենք անցեալին հետ և պիտի ջանանք փաստերով ու թւանշաններով երևան հանել Թրքահայաստանի իրական կացութիւնը:

Իրբև տեղեկութիւն լսենք թէ՞ Թիւրք Հանրապետական կառավարութիւնը կարևոր փոփոխութիւն մտոյցած է Թիւրքիոյ վարչական բաժանումին մէջ: Իոյր սանձաճները ջնջած և վիլայէթի (նահանգ) վերածուած են. այնպէս որ նախկին վեց նահանգներուն փոխարէն ուսոյր կան եռասպտիկ աւելի նահանգներ: Յետոյ, Արևելեան Նահանգներուն մէջ կը մտնեն նաև Հայաստանի Հանրապետութենէն խլած երկու նահանգները՝ Կարս և Արզւին:



Կը սկսինք այս վերջիններէն և հետզհետէ կու տանք Վանի, Պիթիլիսի, Էրզրումի և այլն անտեսական վիճակը, բնակչութիւնը, կրթական և այլ շարժումները, քաղերով յիշեալ արբերէն:

**ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆՒԹ**

Սահման և տարածութիւն.— Սահմաններն են՝ արևելքէն Երևանի Էյալէքը, արևմուտքէն Բուսթայիս, հիւսիսէն Թիֆլիս: Ընդհանուր տարածութիւնն է 15,708 քառակուսի քիլոմետր:

Վարչական բաժանում.— Բացի կենտրոնի դաւառակէն (Բագու), բաժնուծ է հետևեալ դաւառակներու.— Կաղզան, Սարըղամիշ, Փուշխոֆ (կէդրոնի Տամալ), Արտաշան, Կուլա, Արփաշայ (Չարիշատ) և Չըլաբը:

Կէդրոնի դաւառակը՝ Կարս՝ ունի երկու գերդախումբ (նահիլէ) և 106 գիւղ, Կաղզանը մէկ գերդախումբ և 40 գիւղ, Արփաշայը 2 գերդախումբ և 82 գիւղ, Սարըղամիշը՝ 4 գերդախումբ և 136 գիւղ, Փուշխոֆը 2 գերդախումբ և 76 գիւղ Արտաշանը՝ 2 գերդախումբ և 68 գիւղ, Կուլան՝ 2 գերդախումբ և 75 գիւղ, Չըլաբըը 2 գերդախումբ և 47 գիւղ:

Ցանկ և համագ.— 1926-1927 շրջանին մէջ Կարս նահանգին մէջ ցանուծ է 291,952 արտավար (տէօնիւմ\*) ցորեն, 512,514 արտավար գարի, 2905՝ հասար, 180՝ պորշալ, 488՝ եգիպտացորեն, 25,000՝ սոսլ, 470՝ բակլա, 26,923 արտավար գետնախնձոր: Պահած է 3555 մեղուի փեթակ:

Հունձըր եղած է՝ 9,355,380 քիլո ցորեն, 19,947,400 քիլո գարի, 239,000՝ հասար, 612,000՝ պորշալ, 16320՝ եգիպտացորեն, 8000՝ սոսլ, 140,580՝ բակլա, 580,360՝ գետնախնձոր և 23,710 քիլո մեղու:

Ընտանի կենդանիներ.— 3234 գրաստ, 4334 զամբիկ, 1322 էշ, 84 շորի, 19 ուղտ, 89,722 կով, 69,407 եղ, 10,123 գոմէշ, 467,899 ոչխար, 113,724 այծ: Բհերք՝ 58,205,830 քիլո կաթ, 195,430 քիլո բուրդ, 22,960 քիլո այծի մալ:

Անտառներ.— Ընդհանուր տարածութիւնն է 151,800 հեկտար, որուն 69,400 հեկտարը եղևնի, 11,200-ը կնձնի, 30,000-ը մայրի, 4,800-ը կաղնի, 1400-ը զանազան մայրաններ: Մէկ տարւան ընթացքին այս անտառներէն կտրուած են՝ ատաղձի համար, 11,903,821 խորանարդ մետր փայտ, 174,546 կենդինար (ֆանթար) վառելիքայտ և 1,595 կենդինար անուխ:

Գործարաններ.— Կարսի մէջ կան 23 շաղաքներ ցորեն և գարի աղւտի համար, բոլորն ալ հիմնուած որսական տիրապետութեան օրով, այժմ «Էլբալ» գոյք, կը բանին ջուրով և իւրաքանչիւրը ունի շորս ձիու ոյժ. մէկ տարւան մէջ աղացած են 1,900,000 քիլո ալիւր: Չըլաբըի մէջ՝ 11 շաղաքը, «Էլբալ» գոյք: մէկ տարւան արտադրութիւն՝ 1,800,000 քիլո ալիւր: Արտաշան՝ 12 շաղաքը, նոյնպէս «Էլբալ», տարեկան արտադրութիւն՝ 1,150,000 քիլո ալիւր: Սարըղամիշի մէջ կան վեց պետական գործարաններ, երկաթագործի, ձուլիչի, ատաղձ սրտցելու և երկրորականութեան:

Ամենէն զորաւորը ունի 60 ձիու ոյժ, ամենէն տկարը՝ 25-50: Տարեկան արտադրութիւնը անձանթ է: Սարըղամիշի գիւղերուն մէջ կան 4 Շաղաքներ, «Էլբալ», որոնք տարեկան 487,500 քիլո ցորեն և գարի կաղան: Սարըղամիշի Մէլիմ գիւղին մէջ կայ կարագի և պանիրի գործարան մը, նոյնպէս «Էլբալ», որուն շոգելարժ շարժիչ մեքենան ունի 20 ձիու ոյժ. տարեկան արտադրութիւն՝ 50,000 քիլո: Արփաշայի մէջ կան 19 «Էլբալ» շաղաքներ, որոնք տարին 900,000 քիլո ալիւր կաղան: Կաղզանի և Կուլայի մէջ գործարան չկայ:

Ճամբաներ.—

Սկիզբ—վախճան

լա. մաս նորոյ. երկ. քիլ. քիլ. քիլ.

|   |     |    |     |
|---|-----|----|-----|
| Կպո-Սախայ Տուքան-Արտաշան                  | 102 | 15 | 87  |
| Կարս-Մէլիմէքոյ-Մէլիմէնիկ                  | 66  | 10 | 56  |
| Մէլիմէնիկ-Արտաշան                         | 51  | 8  | 45  |
| Մէլիմէնիկ-Օլթիի սահման                    | 8   | 5  | 3   |
| Մէլիմէքոյ-Ուլուսի Զարիմ-Զարիշատ-Զարիւրուա | 71  | 21 | 50  |
| Զարիւրուա-Արտաշան-Կուլաքերդ               | 36  | 10 | 26  |
| Ուլուսի Զարիմ-Նայաստանի սահման            | 52  | 22 | 30  |
| Մէլիմէքոյ-Ինճիսու                         | 5   | 3  | 2   |
| Կարս-Սարըղամիշ-Ղարաուրգան-Զիվից           | 112 | —  | 112 |
| Խանտերէ-Մէլիմէնիկ                         | 20  | 2  | 18  |
| Խանտերէ-Եսքըլըքաշ                         | 10  | 2  | 8   |
| Սարըղամիշ-Ղարաուրու-Պաշէքոյ               | 52  | 6  | 46  |
| Պաշէքոյ-Ղարաքէտ                           | 15  | 5  | 10  |
| Վէլաս Կարս-Կարս շայք                      | 13  | 3  | 10  |
| Պէգիլահմէտ-Կաղզուան                       | 63  | 23 | 40  |
| Կաղզուան-Փէլիմալուտ (Պայադիտի սահման)     | 28  | 8  | 20  |
| Ազլայի կամուրջ-Ազլայ գիւղ                 | 6   | 3  | 3   |
| Եօլիէմէկ-Ալի Սօֆու-Սարըղամիշ              | 18  | 8  | 10  |
| Խալիլ Ղըշա-Տիկար                          | 5   | 2  | 3   |

Պճուղներու ընդհանուր երկայնքն է 778 քիլոմետր 600մ., որուն 164,600-ը լաւ վիճակի մէջ, 564-ը նորուրէն լաւ: Հողիցն յարգարուծի վիճակի մէջ սովորական ճամբաներու երկարութիւնն է 448 քիլոմետր:

Ընդհանուր և մասնաւոր հասոյթներ.— Կարսի նահանգին ընդհանուր հասոյթն է 554,845 ոսկի, մասնաւոր հասոյթը՝ 627,803 ոսկի: Սարըղամիշի թաղապետութեան հասոյթն է 14,131 ոսկի, Արփաշայինը՝ 3200 ոսկի, Փուշխոֆինը՝ 1500, Արտաշանինը՝ 10,000. Կուլայինը՝ 314, Չըլաբըինը՝ 720. Կարս կէդրոնի քաղաքապետութեան հասոյթն է՝ 90,614 ոսկի:

Բնակչութիւն.— Ամբողջ նահանգի բնակչութեան ընդհանուր թիւն է՝ 205,464 հոգի, որուն 96,806-ը այր, 108,658-ը կին: Մէկ տարւան մէջ ծնունդ եղած է 2085, որուն 980-ը մանչ, 1100-ը աղջիկ: Մահ՝ 882, որուն 503-ը այր, 409-ը կին: Ամուսնութիւն՝ 672, այր՝ 336, կին՝ 336: Ամուսնալուծում՝ 52:

Գլխաւոր դաւառակներէն Կարս ունի 24,302 բնակիչ, Արտաշան՝ 38,104, Արփաշայ՝ 25,538, Կաղզան՝ 17,100, Սարըղամիշ՝ 35,130 և այլն:

Գլխացներ և Միւսիքներ.— Ամբողջ նահանգին մէջ կան երկու միջնակարգ դպրոցներ — 57 աշակեր-

\*) Մէկ տէօնիւմը 160 ֆունտիսի կանգաւ է:

տող, ու մանչերու և աղջիկներու 64 գանազան դպրոցներ՝ 3453 աշակերտով:

Արտահանի, Ձւլտըրի և Սարըղամիշի մէջ մասնաճիւղեր ունին Սալք կուսակցութիւնը, Կարմիր Մահիկը, Մանուկներու Պաշտպան Ընկերութիւնը, Թիւրք Օճազըն և Սաւաւնակի Միութիւնը:

Առաջակամ վիճակը. — Նահանգի առողջական վիճակը լաւ է: Կեդրոն քաղաքին մէջ կայ Թաղապետական հիւանդանոց մը:

Կաղզւանի և Քէօթէք գիւղին մէջ կան մէկ-մէկ շերմուկներ. կան նաև ուրիշ երկու հանքային ջուրեր:

Թերթեր. — Կարսի մէջ կը հրատարակուի Վարլըբ քաղաքական, ընկերային, գիտական, բարոյական և գրական թերթը, շաբաթը երկու անգամ:

Ռիփրներ. — 1926 տարւան ընթացքին ամբողջ նահանգին մէջ գործուած են 1298 ոճիրներ (456 Կարսի, 410՝ Արտահանի, 289՝ Սարըղամիշի մէջ ևն):

ԱՐԳԻՒՆԻ ՆԱՀԱՆԿ

Սահման և տարածութիւն. — Սահմաններն են՝ հիւսիսէն՝ Աճարիստան և Վրաստան, արևելքէն՝ Կարս նահանգի Արտահան գաւառակը, հարաւէն՝ Էրզրումի և արևմուտքէն Րիդէի նահանգները: Ընդհանուր տարածութիւնն է 7,000 քառակուսի շրջանաչափ:

Վարչական բաժանում. — Նահանգը բացի կեդրոնի գաւառակէն (Գազա), բաժնուած է Շաուչէթ և Եուսուֆ էլի գաւառակներու: Արդուին գաւառակը ունի եօթը գիւղախումբ. Գորշկա, Մարտաթիթ, Արտանուշ, Պէրթա, Սիպերպա, Մուրղուլ և Մաշախը: գիւղերու թիւն է 162: Շաուչէթ ունի երկու գիւղախումբ և 78 գիւղ: Իսկ Եուսուֆ էլի մէկ գիւղախումբ և 64 գիւղ:

Մշակելի հող, ցամաք և հունձք. — Նահանգին 7000 քառ. շրջանաչափէն 1640-ը ցանուած է և 5360-ը չէ ցանուած: Չցանուած հողին 1402 քառ. շրջան է: Երկրի լեռնային և բարձր շրջաններ են, 461-ը լիճ և ճահիճ, մնացածը անտառ:

Ամբողջ նահանգին մէջ ցանուած է 62,947 արտավար ցորեն, 71444՝ դարի, 3359՝ հաճար, 65488՝ եգիպտացորեն, 465՝ բակլա, 5158՝ զեանարինձոր, 70՝ բամպակ, 10792՝ ծխախոտ, 9374 արտավար որթատունկ, 11,470 տունկ ձիթենի, 4136 տունկ թղենի. պահուած է 2756 մեղի փեթակ:

Բերքը եղած է հետևեալը. — 2,710,694 ջրլի ցորեն, 4,588,344 ջրլի դարի, 2500՝ վարսակ, 27,595 հաճար, 5,608,362՝ եգիպտացորեն, 1965՝ կորեկ, 965՝ բակլա, 1,015,441՝ եգիպտացորեն, 400՝ բամպակ, 273,476՝ ծխախոտ, 573,225՝ խաղող, 7732՝ ձիթապտուղ, 4889՝ թուզ, 11,058 ջրլի մեղր:

Ընտանի կենդանիներ. — 960 զբաստ, 675 ձի, 2557 էշ, 191 ջորի, 24,852 կով, 23,882 եղ, 1871 գոմէշ, 28,618 ոչխար, 41,207 այծ:

Մէկ տարւան մէջ կաթի արտադրութիւնը եղած է՝ ամբողջ նահանգին մէջ՝ 5,689,412 ջրլի, բուրդ՝ 13,143 ջրլի, այծի մաղ՝ 10,691 ջրլի:

Անտառներ. — Ընդհանուր տարածութիւնն է 9754 հեկտար, որմէ արտադրուած է 46,345 խորանարդ մետր ատաղ, 467,712 կենդինար փայտ և 50 կենդինար ածուխ:

Հանքեր. — Մուրղուլի մէջ կայ պղինձի հանք: Գոլարսիւխանի մէջ ևս կայ պղինձի հանք, որ կը շահագործուի Մէմիսի ժառանգորդներուն կողմէ: Մեշաշորս տրուած է 1924 հոկտ. 16-ին: Արտադրուած է 888 թոնո պղինձ, որուն նամար գանձուած է 13,000 ոսկի տուրք:

Գործարաններ. — Պաղքեթլի մէջ կայ պղինձի գործարան մը, որուն տէրն է գերմանահայտակ Սիմանս: Գործարանը հիմնուած է 1900-ին, կը բանի երկարականութեամբ՝ 800 ձիու ուժով: Մէկ տարւան մէջ արտադրութիւնը եղած է 450,000 ջրլի:

Դրամատուներ. — Առուին քաղաքին մէջ կայ երկարագործական դրամատան մէկ մասնաճիւղը՝ հիմնուած 1926 հոկտ. 6-ին: Մասնաճիւղ մըն ալ կայ Եուսուֆ էլիի մէջ, հիմնուած 1891-ին:

| ձ ա մ բ ա ն ք սկիզբ և վախճան | երկայնք թիւ: | լաւ մասը թիւ: | նորոգող թիւ: | * զեւ* նորոգող թիւ: | նոր լինող թիւ: |
|------------------------------|--------------|---------------|--------------|---------------------|----------------|
| Սոթիպարի կորջ-ճալընըզ Չամ    | 95.500       | 45. —         | 16.500       | 34. —               | —              |
| Սոթիպարի կորջ-Մարտաթիթ       | 57. —        | 13.700        | 30. —        | 12.300              | —              |
| Պորնկա-Մուրղուլ              | 30. —        | 10.300        | —            | 19.700              | —              |
| Պորնկա-Սուսիա                | 37.016       | 4.600         | —            | —                   | 32.416         |
| Պէրթայի կամուրջ-Շաուչէթ      | 45. —        | —             | —            | —                   | 45. —          |
| Արտանուշ-Ճանիթ               | 25.700       | —             | —            | —                   | 25.700         |
| Օրունու-էրբիս                | 45. —        | —             | —            | —                   | 30. —          |

Հասոյթներ. — Նահանգին ընդհանուր եկամուտն է 139,150 ոսկի, մասնաւոր եկամուտը՝ 102,390 ոսկի: Արդուին քաղաքի Թաղապետութեան եկամուտն է 18799 ոսկի. Եուսուֆ էլիի էրբիս գիւղի Թաղապետութեան եկամուտը՝ 1730 ոսկի. Շաուչէթիինը՝ 500. Պորշքա նահիլինը՝ 9900 ոսկի: Բնակչութիւն, ծնունդ և մահ. — Արդուին նահանգի

բնակչութեան ընդհանուր թիւն է 89,630, որուն 44,572 այր, 45,058-ը կին: Արդուին գաւառակն առանձին ունի 34,918 բնակիչ: Մէկ տարւան մէջ ծնած են 744 հոգի. 401 մահ: 343 աղջիկ. մեռած են 542 հոգի, 305 այր, 237 կին:

Դպրոցներ և միութիւններ. — Նահանգի կեդրոնին մէջ կան մանչերու և աղջիկներու երեք նախակրթա-

րաններ՝ 356 աշակերտով: Ասէկ գառ նահանգի միւս վայրերուն մէջ կան 27 մանչերու և աղջկանց նախա կրթարաններ՝ 1482 աշակերտով:

Նահանգի կեդրոնին մէջ մասնաճիւղեր ունեն իսպի կուսակցութիւնը, Թիւրք Օճաղը, Սաւառնակի Միութիւնը, Մանուկներու Պաշտպան Ընկերութիւնը և Ուսուցչական Միութիւնը: Միւս գիւղերուն մէջ ալ կան ինչքէ կուսակցութեան և Սաւառնակի Միութեան մասնաճիւղեր:

Առողջապահական.— Կլիման բարեխառն է և եղա- նակի յատուկ ամէն հիւանդութիւն կայ նահանգին մէջ: Ջերմ կը տեսնուի Շաուշէթի և Եուսուֆ էլիի զանազան կողմերը, ինչպէս նաև Ճորոխի հովիտին և Արտանուշի մէջ: Միքիս գիւղատեղիներն մէջ յաճախողք է Սիլ չիպանը կուլուած պալարը, որ յատուկ է տաք երկիրնե- րու: Ֆրանկախա շատ քիչ կայ: Մեծ չափով կայ նաև խոյլ և թոքախտ: Արդւենի մէջ հիմնուած է 25 անդ- ղինոց հիւանդանոց մը, որ Բերիէնի ունի: Եուսուֆ էլիի և Շաուշէթի մէջ կան 5-ական անկողինոց մէկ մէկ բուժարաններ, և անհրաժեշտ գեղորայք կը մաս տակարարել բնակիչներուն:

Ջերմութիւնը.—Արդւենի Տալապկերա կուլուած տեղը

Ութնիքոս անուն ջերմուկ մը կայ, որ յօղացանքը բու- ժելու յատուկութիւն ունի: Շաուշէթի Միքէլի ըւած վայրն ալ կան ջերմուկներ, ծծմբ ունի և պոչպտոսային ջուրով:

Ոճիրներ.— Մէկ տարւան ընթացքին նահանգին մէջ գործուած են 1060 ոճիրներ:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ

Սահման և տարածութիւն.— Սահմաններն են՝ արեւելքէն Պարսկաստան, հիւսիսէն Էրզրում և Պայա- գիտ, հարաւէն՝ Սղերդ և Հէքքեարի, արեւմուտքէն՝ Պիթիս: Ընդհանուր տարածութիւնն է 38.300 քառ- քերովեար:

Վարչական բաժանում.— Բացի Վան կեդրոնական զաւառակէն (Քազա), նահանգը բաժնուած է հետեւեալ զաւառակներու.— Մուրատիյէ (Պարկլիբի), Արճէշ (Աղանիս), Կաւաշ (Վասթան), Պաշպայէ (Հէքքեարի), Շատախ և Մահմուտի (Սարայ):

Վան զաւառակը ունի 4 գիւղատեղիներ, Մուրա- տիյէն՝ 2, Արճէշը՝ 2, Կաւաշը՝ 2, Պաշպայէն՝ 2, Մա- մուտին 1 գիւղատեղի:

| Ճ ա մ բ ա ն ն ք ս կ ի գ ր և վ ա ի ճ ա ն | Երկայնք քիւ. | լ ա մ թ ա ը քիւ. | Կրօնաւոր քիւ. | Գեղ շրջաօղ քիւ. | Հող. յարգար. քիւ. | Ի խ ու թ. շ ճ ն ու թ. քիւ. |
|---|--------------|------------------|---------------|-----------------|-------------------|----------------------------|
| Վան-Կաւաշ                               | 40           | 10. —            | —             | 3. —            | 8 500             | 18 500                     |
| Կաւաշ-Պիթիսի սահման                     | 95           | —                | —             | —               | 38 658            | 65 342                     |
| Վան-Շատախ(Ենկէլէ կճրը)                  | 55           | —                | —             | —               | 25 —              | 30 —                       |
| Վան-Պաշպայէ                             | 95           | 5. —             | —             | —               | 35 —              | 45 —                       |
| Վան-Սարայ                               | 70           | —                | —             | —               | 6 750             | 63 250                     |
| Վան-Արճէշ ( Պիթիսի սահման՝ Նորուշէն )   | 120          | 3. —             | 1 500         | 3 200           | 15 300            | 97 —                       |
| Վան-Մուրատիէ (Նեա - մանի կամուրջը)      | 15           | —                | —             | —               | —                 | 15. —                      |
| Արճէշ-Պատնոս (Գարա - թէսէի սահման)      | 25           | 0.650            | —             | —               | 4 600             | 19.750                     |
| Ընդհանուր դումար՝                       | 515          | 18 650           | 1 500         | 6 200           | 133.808           | 344 842                    |

Մշակելի հող, ցտիկ և հումք.— Վան նահանգի մշակելի հողի ընդհանուր քանակն է 5.375.000 արաւ- վար, որուն 502.000 արաւվարին վրա արմաթէք ցանե- լով ստացւած են 39,606,250 քիւօ զանազան բերքեր:

Ընտանի անասուններ.— Ամբողջ նահանգին մէջ կան 4,634 ձի, ջորի, զրատա և էշ, 33,988 եղ, կոպ ու գոմէշ, 265,541 ոչխար և այլ:

Անտառներ և հումքեր.— Շատախ և Կաւաշ զաւա- ռակներուն մէջ կայ 23 հեկտար անտառ: Մուրատիյէ զաւառակին մէջ քորիլիի հանք, Նորտուղի մէջ ալ՝ անուրիի հանք:

Դրամատուներ.— Վան քաղաքին մէջ կայ Երկ- րագործական դրամատան մասնաճիւղ մը:

Բնակչութիւն.— Նահանգի ընդհանուր բնակչու- թիւնն է 75,437, որուն 39,477-ը այր և 35,960-ը կին: Վան զաւառակն ունի 22,548 բնակիչ: Գլխաւոր զաւա- ռակներէն Արճէշ ունի 18,387 բնակիչ, Պաշպայէ՝ 5164, Շատախ՝ 3392, Կաւաշ՝ 11,338, Մուրատիյէ՝ 6890, Մահմուտի՝ 7728: Մէկ տարւան մէջ ամբողջ

նահանգին մէջ ծնած է 617, մեռած՝ 281 հոգի, ամուս- նութիւն՝ 100, ամուսնալուծում՝ 6:

Կայրուցներ.— Ամբողջ նահանգին մէջ կայ վեց կայրոց՝ 417 անակրտոմով: Այս աշակերտներէն 20-ը գիւղերօթիկ են:

Առողջապահական վիճակ.— Տեղական հիւանդու- թիւներն են՝ շնչափողատայ, հարսանիթ, փորձա- բուժիւն, թանշք, մորթային հիւանդութիւններ և բորբոսութիւն: Կայ թաղապետական հիւանդանոց մը: Իսկ միայն Արճէշի մէջ՝ 5 անկողինոց բուժարան մը:

Նահանգին մէջ զանազան տեղեր ծծմբային ջեր- մուկներ կան:

Ոճիրներ.— Մէկ տարւան մէջ 777 զանազան ոճիր- ներ գործուած են:

Հասոյթներ.— Նահանգի ընդհանուր հասոյթն է 249,390 ոսկի, մասնաւոր հասոյթ՝ 201,519 ոսկի, Թաղապետական հասոյթ՝ 46,958 ոսկի:

ՀԵՔԵՆՈՐԻ ԿԱՆՈՒՄԸ

Սահման. — Հիւսիսէն՝ Վան նահանգը, արեւելքէն՝ Պարսկաստան, հարաւէն՝ Իրաք, արեւմուտքէն՝ Սղեբը և Վան նահանգները:

Վարչական բաժանում. — Բացի նահանգի կեդրոն Ճուլամբերկ գաւառակէն, ունի երեք գաւառակ և եօթ գիւղախումբ:

Ընտանի կենդանիներ. — 281 դրատա, 679 զամբրկ, 365 էջ, 350 շորի, 1331 կով, 2246 եզ, 29 գամէջ, 40,767 ոչխար, 39,385 այծ: Բերք՝ 557,224 ըլիւ կաթ, 108,227 ըլիւ բուրդ և 31,326 ըլիւ այծի մազ:

Բնակչութիւն. — Ընդհանուր թիւն է 25,016 հոգի, 13,627-ը այր, 11,389-ը կին: Ճուլամբերկ՝ 7246 բնակիչ, Կաւար՝ 3172, Շէժտիւնէ՝ 1715, Պէյթ-Էլ-Շէ-պակ՝ 12,883: Մուռնը՝ 77, մաս՝ 58: Ամուսնու թիւն՝ 26:

Դպրոց և միութիւն. — Ճուլամբերկ մէջ կայ մանչերու նախակրթարան մը՝ 27 աշակերտով: Կաւարի մէջ ալ 15 աշակերտով ուրիշ նախակրթարան մը: Կան Կարմիր Մահիկի, Սաւառնակի և Մանկանց Պաշտպան ընկերութիւններու մասնաճիւղեր:

Ընդհանուր և մասնաւոր կիւմուտ. — Հէքքերիկ

ընդհանուր եկամուտն է 71,156 ոսկի, 81 զրուշ, մասնաւոր եկամուտը՝ 34,200 ոսկի:

ՊԻՔԼԻՍԻ ԿԱՆՈՒՄԸ

Սահման և տարածութիւն. — Արեւելքէն՝ Վան նահանգի Արճէշ և Կաւար գաւառակներն ու Վանայ զիճը: Արեւմուտքէն՝ Էլ Արիլ (Պարբերք) նահանգի Կէնճ և Ճապաղճուր, Երզնկայի Գոյի գաւառակները, հիւսիսէն՝ Պարզիտի նահանգին Թուլթախ և Էրզրումի նահանգին Հասանգալէ և Խնուս գաւառակները, հարաւէն՝ Սղեբը նահանգին Փէրվարի, Շիրվանի, Ղարզան և Սասուն, Տիարպէճերի նահանգին Գոյլ և Լճէ գաւառակները: Տարածութիւնն է 12,230 քառ. ըրումետր:

Վարչական բաժանում. — Պիթլիսի նահանգը բաղկացած է 8 գաւառակներէ՝ Պիթլիս, Մոսկի (Քէօր-սիւաք), Խիզան (Գարասու), Մուշ, Պուլանըզ (Քոփ), Վարչո (Քուճքում), Մանազկերտ և Ախլաթ: Պիթլիս կեդրոնական գաւառակն ունի չորս գիւղախումբ և 153 գիւղ, Մոսկի ունի մէկ գիւղախումբ, Խիզան՝ 2 գիւղախումբ և 198 գիւղ, Մուշը՝ 5 գիւղախումբ և 277 գիւղ, Պուլանըզ՝ մէկ գիւղախումբ և 38 գիւղ, Վարչո՝ 2 գիւղախումբ և 110 գիւղ, Մանազկերտ 3 գիւղախումբ և 180 գիւղ, Ախլաթ՝ 3 գիւղախումբ և 101 գիւղ:

| Ճ ա մ ր ա ն ի ս ս ի կ ի ղ և Վ ր ի ն ա ն     | Երկանք ըլիւ: | Լու մասը ըլիւ: | արւան մաս ըլիւ: | Նորոգող ըլիւ: | Դեռ չնորոգող ըլիւ: |
|---|--------------|----------------|-----------------|---------------|--------------------|
| Պիթլիս-Տիարպէճեր ճամբան                     | 42.600       | 25.500         | 17.100          | —             | —                  |
| Պիթլիս-Մուշ-Էրզրում (Պիթլիսի Սիւնուզ գիւղը) | 141.400      | —              | 40. —           | 37.400        | 40. —              |
| Պիթլիս-Ախլաթ-Վան (Պիթլիսի Նորչէն գիւղը)     | 101. —       | —              | —               | 101. —        | —                  |
| Մուշ-Տիարպէճեր, Մուշ (Շէննա գիւղը)          | 25. —        | —              | —               | —             | 25. —              |
| Մուշ-Պուլանըզ-Մալազկերտ                     | 93. —        | —              | —               | 63. —         | 30. —              |
| Պուլանըզ-Ճենարպուր, Վարչո                   | 80. —        | —              | —               | 65. —         | 15. —              |
| Պիթլիս-Մոսկի-Պոք                            | 25. —        | —              | —               | 17. —         | 8. —               |
| Պիթլիս-Խիզան, Պիթլիս (Գարասու)              | 50. —        | —              | 10. —           | 30. —         | 10. —              |

Մշակիչի հող, ցամփ և հումք. — Նահանգի 12,230 քառ. ըրումետր տարածութենէն 5000 քառ. ըրումետրը միայն մշակելի է, մնացածը կարելի չէ մշակել: Մէկ տարւան ընթացքին ցանքն ու հիւնճը կ'ըստ է հետեւեալը. —

Ցամփ. — Յորեն՝ 181,115 արտավար, գարի՝ 83,648, աւուոյտ՝ 4000, հաճար՝ 31,223, բրինձ՝ 150, Էլիպտոցորեն՝ 3965, կորեկ՝ 28,953, լուբիս և բակլա՝ 3323, զգետնախնձոր՝ 6157, գաղի խէժ՝ 20, բամպակ՝ 300, ծխախոտ՝ 704, այգի՝ 31,122 արտավար: Պահաւած է 13,125 միւլի փեթակ:

Հումք. — Տորեն՝ 24,502,285 ըլիւ, գարի՝ 3,878,044 ըլիւ, աւուոյտ՝ 600,000, հաճար՝ 2,815,670, բրինձ՝ 9,200, Էլիպտոցորեն՝ 757,800, կորեկ՝ 5,848,800, լուբիս և բակլա՝ 437,200, զգետնախնձոր՝ 206,925, գաղի խէժ՝ 1063, բամպակ՝ 1500, ծխախոտ՝ 69,918, խաղող՝ 2,299,520, մեղր՝ 47,375 ըլիւ:

Ընտանի կենդանիներ. — 677 դրատա, 1416 զամբրկ, 1908 էջ, 335 շորի, 23388 կով, 18725 եզ, 1925 գամէջ, 87,419 ոչխար, 96,765 այծ: Բերքը եղած է՝ 9,830,000

ըլիւ կաթ, 117,000 ըլիւ բուրդ, 71,000 ըլիւ այծի մազ: Անտառներ և հումքեր. — Ամբողջ նահանգին մէջ կայ 109 հեկտար անտառ, Պիթլիսի գաւառակին մէջ՝ 30, Վարչոյ մէջ՝ 2, Մուշի մէջ՝ 30, Պուլանըզի մէջ՝ 2, Խիզանի մէջ՝ 25, Մոսկիի մէջ՝ 40 հեկտար: Մանրերը կը բաղկանան կարիէ և զանազան մացառներէ: Հանք չկայ բնաւ:

Դրամատուներ. — Երկրագործական դրամատուներ մասնաճիւղեր ունի Պիթլիսի, Ախլաթի և Մուշի մէջ, բոլորն ալ հիմնւած 1889-ին:

Ընդհանուր և մասնաւոր հասոյթներ. — Պիթլիսի նահանգին ընդհանուր հասոյթն է 287,066 ոսկի, մասնաւոր հասոյթը 198,012 ոսկի: Ախլաթի Քաղաքապետութեան հասոյթը՝ 998 ոսկի, Մալազկերտինը՝ 46 ոսկի, Վարչոյինը՝ 180 ոսկի, Մուշինը՝ 8515 ոսկի, Պուլանըզինը՝ 298, Խիզանի՝ 778, Մոսկիի՝ 70 ոսկի:

Բնակչութիւն. — Ընդհանուր թիւ՝ 90,309 հոգի, 47,194 այր, 43,115 կին: Պիթլիս գաւառակն ունի 18,617 բնակիչ, Մուշ՝ 21,414, Ախլաթ՝ 8,257, Մալազկերտ՝ 6,894, Վարչո՝ 9,794, Պուլանըզ՝ 6,001,

Յիդան՝ 8.435, Մոսկի՝ 10,987: Մէկ տարւան մէջ ծնած են 1677 հոգի, 768 մանչ, 809 աղջիկ, մեռած են 708 հոգի, 352 այր, 356 կին: Ամուսնութիւն՝ 310: Ամուսնալուծում՝ 8:

Առողջապահական վիճակ.— Լաւ է: Պիթլիսի մէջ կայ 25 անկողիննոց հիւանդանոց մը. Մուշի, Ախլաթի, Պուրնդլի և Վարդօի մէջ 5-ական անկողիննոց մէկ մէկ բուժարաններ:

Համգայից ցուրեր.— Պիթլիս քաղաքին մէջ կայ երան Տիրիլթեմ (Օձարոյթ) կոչւած հանքային ջուր մը՝ 12 աստիճան տաքութեամբ՝ թթւաջ համով. բաղադրութեան մէջ կայ ջարպոնաթ, երկաթ, սոսա և ածխային թթու: Երկհատուկքի, սառածքքի, լեարգի և աղիքի հիւանդութեանց զէժ բուժողական է, պնդութիւն կուտայ:

Քաղաքին մէջ կայ նաև իսթուրիլէ բուժ հանքային ջուրը, գոյնը յստակ, բայց համը դառն է: Բաղադրութեան մէջ կայ կիր, մանեկի և փոթաջ: Լուծողական յատկութիւն ունի: Աղիքի բորբոքումի և պնդութեան զէժ օգտակար է: Պուլանդի մէջ կան Երբոյ և Քեփ-նիք անուն երկու հանքային ջուրեր:

Ջերմուկներ.— Կերտոն քաղաքին մէջ կան Ազալ ազա և Ալէմսար ջերմուկները, Ջուզուր գիւղախումբէ՛ նեմրուտ լեռան վրա՝ Քէրէմ ալ ջերմուկը, Սիմէք գիւղախումբին մէջ Մուսլան ջերմուկը, Վարդօի Պագիկան գիւղին մէջ Պագիկան ջերմուկը: Այս ջերմուկները բանազան բուժիչ յատկութիւններ ունին:

Ոճիրներ.— Մէկ տարւան մէջ 101 ոճիր գործւած է:

ՍՂԵՐԳԻ ՆԱՀԱՆԳԸ

Սահման և տարածութիւն.— Սահմաններն են՝ արևելքէն՝ Հէքեարիի Պէյթ էլ-Շէյսալ, Վանի Շատախ գաւառակները, արևմուտքէն Մարտինի Միտիաթ և Տիարպէքերի Սիլվան գաւառակները, հիւսիսէն՝ Պիթլիսի Յիդան և Մոսկի գաւառակները, հարաւէն՝ Մարտինի ձէյրէ և Ջախօ գաւառակները: Ընդհանուր տարածութիւնն է 19.572 քառ. քիլոմետր:

Վարչական քաժմանաւ.— Բացի կերտոնի Սղերգ գաւառակէն, ունի հետեւեալ գաւառակները՝ Արվա, Շիխաք, Փէշվարի, Շիրվան (Քէֆրի), Ղարզան (Ձոք), Սասուն (Քապլիհոյ), Պէշերի:

Սղերգը ունի 60 գիւղ, Արվան՝ 121, Շրնաքը՝ 68, Փէշվարի՝ 72, Շիրվանը՝ 129, Սասունը՝ (Հազօ գիւղախումբին հետ) 119 գիւղ, Պէշերին՝ 96, Ղարզանը՝ 139 գիւղ:

Մշակելի հող, ցանք և հումք.— 19.572 քառ. քիլոմետր տարածութեանէն միայն 3591-ը մշակելի է և 15,981-ը անմշակ: Այս վերջինէն 12,100 քառ. քիլոմետրը լեւնային և քարուտ է, 81-ը լիճ և ճախճախուտ, մնացեալը՝ արօտավայր:

Մէկ տարւան ընթացքին ցանւած է՝ 104,404 արտավար ցորեն, 64,233 արտավար գարի, 450՝ սիսեռ, 620՝ հաճար, 148՝ ոսպ, 16,536՝ կորեկ, 55՝ բրինձ,

200՝ շուշմայ, 73՝ կանեփ, 402՝ բամպակ, 13.540՝ այգի, 51 արտավար ձիթենի, 2259 արտավար թղզնի: Պահւած է 8630 մեղրի փեթակ:

Հունձըք եղած է՝ 7219 թոնո ցորեն, 5071 թոնո գարի, 47՝ սիսեռ, 27՝ հաճար, 23՝ ոսպ, 1341՝ կորեկ, 405՝ բրինձ, 12՝ շուշմայ, 730՝ կանեփ, 20՝ բամպակ. 438 թոնո խաղող, 2686 քիլո ձիթապտուղ, 152 թոնո թուղ, 16,330 քիլո մեղր:

Բնութի կենդանիներ.— 357 գրաստ, 630 զամբիկ. 6001 էջ, 1529 ջորի, 9427 կով, 10546 եղ, 1032 գոմէշ, 57,994 ոչխար, 156,795 այծ: Բերք՝ 13,663,330 քիլո կաթ, 481,934 քիլո բուրդ և 84,421 քիլո մեղր:

Անտառ և հումք.— Նահանգին մէջ կայ 869,912 հեկտար տարածութեամբ անտառ: Մէկ տարւան մէջ կտրւած է 7051 խորանարդ մետր ստաղձ, 1,555.641 կենտեմար փայտ և 2864 կենտեմար սմուր:

Սղերքի նահանգին մէջ հանք չկայ:

Գործարաններ.— Ամբողջ նահանգին մէջ կան 196 սովորական ջաղացներ, որոնք մէկ տարւան մէջ աղացած են 7,096,000 քիլո ալիւր: Ասոնցմէ զատ կայ ալիւրի գործարան մը:

Դրամատուններ.— Երկրագործական դրամատունը ունի՝ մասնաճիւղ մը, հիմնւած 1891-ին, 48,252 ոսկի դրամալուծով:

Ճարմանք.— Սղերգ—Տիարպէքեր՝ 800 քիլոմետր երկայնք, Սղերգ—ձէյրէ՝ 40 քիլոմետր երկայնք: Հասոյթներ.— Նահանգին ընդհանուր հասոյթն է 329,600 ոսկի, մասնաւոր հասոյթը 233,611 ոսկի: Սասունի թաղապետական հասոյթն է 139 ոսկի:

Բնակչութիւն.— Ընդհանուր թիւն է 101.637 հոգի, 49,905 այր, 51,732 կին: Սասուն գաւառակն ունի 9309 բնակիչ, Սղերգը՝ 24,743: Մոնոնդ՝ 1709, որուն 963-ը մանչ, 746-ը աղջիկ: Մահ՝ 1064, որուն 638-ը այր, 426-ը կին: Ամուսնութիւն՝ 414, որուն 225-ը այր, 189-ը կին:

Դպրոց և Միութիւն.— Սղերգ քաղաքին մէջ կայ միջնակարգ դպրոց մը՝ 36 աշակերտով ու մանչերու և աղջիկներու զանազան դպրոցներ՝ 294 աշակերտով: Ասկէ զատ մէկ մէկ մանչերու նախակրթարաններ կան հետեւեալ վայրերը.— Թէլլօ՝ 53 աշակերտ, Հէյրէ՝ 21, Արվա՝ 30, Շրնաք՝ 90, Փէշվարի՝ 41, Շիրվան՝ 19 Ղարզան՝ 30, Ջոքէյա՝ 21, Պէշերի՝ 27, Սասուն գաւառակին մէջ՝ 11 աշակերտ:

Միութիւններ.— Մասնաճիւղեր ունին Սալք կուսակցութիւնը, Թիւրք Օճաքը, Կարմիր Մահիկը, Սաւառակի Ընկերութիւնը, մարզական և ուսուցչական միութիւններ:

Առողջապահ վիճակ.— Լաւ է: Գլխաւոր հիւանդութիւն թախտ է: Հիւանդանոցներ չկան: Նահանգին մէջ կան երկու ջերմուկներ:

Ոճիրներ.— Մէկ տարւան մէջ 435 ոճիրներ գործւած են:

(Շարունակելի)

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒՆԷԼ

# Երեւանի խորհրդային Ռուսաստանում

«Թու՛մ է, որ ամէն բան մենք կը տանենք այս ծանր տարիներին. և եթէ կայ մի բան, որ մեզ չի ներսի— աչք այն ապականութիւնն է, որ թափանցում է այժմ մեր երես֊տարգութեան հոյու խորքը, այն երես֊տարգութեան, որ փոխարինելու է մեզ, կազմելու է մեր ապագան»:

Առողջապ. Կամիսար՝ Ն. Սեմաշկօ.

Համայնապար զործիչները, իշխանութեան գլուխ անցնելով, յատուկ հետաքրքրութիւն սկսեցին ցոյց տալ դէպի երեւանները—անճող սերունդը: Թէ Լենինը և թէ միւսները ունէին այն դիտակցութիւնը, որ իրենց գաղափարները մարմնանայու, կեանք են առնելու միայն այն դէպքում, եթէ անճող սերունդը կրթի է գաստիարակի համաձայն համայնապարական վարչապետութեան, և թէ այդ սերունդը թրձի համայնապարական աշխարհահայեցողով: Լենինն ասում էր, թէ ուսուցիչը Պորճրդային Ռուսաստանում պիտի ունենայ նիթական ու բարոյական այնպիսի նախանձելի վիճակ, որպիսին չի ունեցել, չունի և չպիտի ունենայ որեէ բուրժուական երկրում: Այդպիսով ուսուցիչը պիտի կապէր խորճրդային կարգերի հետ ու երեւաներին դաստիարակէր ու պատրաստէր այլ կարգերին հաւատարիմ մնալու ողով: Երեւանների հոյուն սիրանալու այդ յայտը, որ շատ մեծ էր սկզբներում և որը, ընդհանրապէս, չդիմացաւ կարճ ժամանակ էլ, բոլշևիկեան գաղափարախօսներից ոմանք փայտալուծ են մինչև օրս էլ:

1928 թիւն Մոսկայում գումարած մանկավարժական համաժողովարում Լուսաւարսիկին ասում էր. «Մեր սերնդից մեզ հազր. թէ յարողէ նոր մարչ ստեղծել: Վերածնութեան գաղափարը տալիս է անճող սերունդը: Այդ պատճառով երեւանների կրթութիւնը մեծադոյն խնդիր է.— Նո՛ր մարդու կրթութիւնը հաւաքական ոգով: Այդ կրթութեան նպատակն է, որ մեր տեսակէտից «նոր» կեանքը դառնայ կատարելապէս բնական ու սովորական անճող սերնդի համար»:\*)

Փոխ առնելով քաղաքակիրթ—թէէ բուրժուական— երկրներից մանկավարժական—կրթական ձեւերն ու սկզբունքները, խորճրդային դպրոցների ու կրթական այլ հաստատութիւնների հրապարակ պիտի գալին ինչ որ նոր բովանդակութեամբ՝ նոր ուղղութիւն տալու համար մատաղ սերնդի հոյուն ու մտքին: Որպէսզի կատարելապէս չեղբացան համայնապարական գաղափարների տեսակէտից անհարգատա արեցնութիւնները, իշխանութիւնը իր հովանաւորութեան, հակողութեան ու խնամքի տակ է առնում բոլոր երեւաններին: Վերացում է մասնաւոր ու ընտանեկան կրթութիւնը, որը

փոխարինում է հանրային—աշխատասարական կրթութեամբ պետական մանկապարտէզներում, մանկատունում, դպրոց—ակումբներում, մանկաբարձներում և դպրոցներում: Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ հրատարակել են մի շարք օրէնքներ ու դեկրետներ՝ ներքեւ երեւաններին— նրանց կրթութեան, հակողութեան, պաշտպանութեան: Եթէ դատելու լինենք այդ օրէնքներով ու դեկրետներով, անհրաժեշտօրէն պիտի եղբակացնենք, որ Ռուսաստանում երեւանների համար արւած է այն ամենը— ինչ որ հնարաւոր է այժմեան պայմանների բախտաւորութեան համար: Այսպէս.— Վերացում է անչափահասների համար դատարանն ու բանտարկութիւնը իբր պալքարի միջոց անչափահասների օրինագանցութեանց դէմ: Ստեղծում են յատուկ յանձնաժողովներ այն բոլոր գործերի համար, որոնք վերաբերում են անչափահասներին: Այդ յանձնաժողովների անկամ կարող են լինել միայն մանկավարժներն ու բժիշկները: Ոչնչացում է ամէն մի տարբերութիւն, որ բիւում է ծագումից: Ծնողական իշխանութիւնը ենթարկում է պետութեան հակողութեան: Պետութիւնը երեւանների ինքնավայրն է: Ծրարարում ու մշակում է մանկամտերի մի ամբողջ ցանց՝ համաձայն մանկավարժական ու առողջապահական պահանջների վերջին խօսքի: Անապաստանութեան դէմ կուելու համար ստեղծում է օրէնսդրական կարգով երեւանների հանրային տեսչութիւն: Հանրապետութիւնների կենտրոնական դրոճաղի կոմիտէներին կից կազմում են արտակարգ յանձնաժողովներ՝ անապաստաններին օգնելու և երեւանների կեանքը բարելաւելու համար: Այդ յանձնաժողովների զործունէութիւնը Պորճրդ. Ռուսաստանի սահմաններում միացնում է հանրային կրթութեան կոմիտէներու կից անչափահասների համար կազմւած կենտրոնական յանձնաժողովը: Եւ այն:

Բացի այդ դեկրետներից ու օրէնքներից, կան և պաշտօնական ու կիսապաշտօն մեծազորող յայտարարութիւններ՝ արւած—գրւած այլ և այլ առթիւ: Մի քանի օրինակ. «Երեւանների իրաւունքը Պորճրդային Ռուսիոյ մէջ» ժողովածուի յառաջաբանում կարգում ենք. «Հոկտեմբերեան յեղափոխութիւնը մատանանց մի շարք միջոցներ, որոնց նպատակն է անճող սերնդի բարձրակրթման հնոցացողութիւնը, որն այլ ևս համարում է պետական ինդիլ: Պորճրդային իշխանութեան այդ սկզբութեամբ արարող հնոցամեայ աշխատանքը կազմում է նրա զործունէութեան ամենադեղին ցանցը պատել է երկիրը, հազարաւոր գործիչներ աշխատում են նրանց համար»:

Մի այլ տեղ. «Միայն մեզ մօտ է կառավարութիւնը

\*) «Сов. Зап.», № 35, ст. 420-421.

իրեն համարում բոլոր երեխաների բարձրագոյն խնամակարգը և զործում է — այնտեղ, որտեղ մեծերի և փոքրերի շահերը հակադրուած են — միշտ յօգուտ նրանց: Միայն մեկ մօտ է, որ երեխաների կրթութեան գործը համարուած է ոչ միայն ծնողներին իրաւասութեան խնդիր, այլ և հասարակութեան պարտականութիւն:\*) Սորճրդային իրաւագէտ Գոյբարը գրում էր, որ պետական խնամակալութեան կազմակերպութիւնը պիտի ցոյց տայ ծնողներին, որ հասարակական խնամքը երեխաների համար շատ աւելի լաւ հետևանքներ է տալիս, քան մասնաւոր, անհատական, ոչ-գիտական ու ոչ-բանասեր խնամքը առանձին «սիրող», բայց աղէտ ծնողների, որոնք չունեն այն ուժերը, միջոցները, յարմարութիւններն ու հարաբերութիւնները, ինչ որ ունեն կազմակերպուած հասարակութիւնները:\*\*)

Համայնակարգ մանկավարժական գործիչներից մէկը—Չ. Լիլին—ողևորած պատմում է, թէ ինչպէս պիտի երեխաներից պատրաստել լաւ, խիսական կոմունիստներ: Երեխաները մոտի պէս հեշտ ենթակայ են ազդեցութեան. առանց ժամանակ կորցնելու պէտք է սկսել կրթիւն նրանց համայնակարգով: Առաջին հերթին աւելում պէտք է մաքրել դպրոցը բուրժուական արտից — դուրս բերել այն մանկավարժներին և ուսուցիչներին, որոնք ամբողջովին յազդեած են բուրժուական աշխարհահայեացքի թոյնով: Իսկ յետոյ ձՄենք պէտք է աղատենք երեխաներին ընտանիքի կրտսեաներ ազդեցութիւնից: Նրանց բոլորին մենք հաշի պիտի աւնենք, սակեք ուղիղ — պէտք է պետականացնենք: Իրենց կենքին առաջին օրերից նրանք կը գտնեն համայնակարգի մանկատանի ու դպրոցների բարեբար ազդեցութեան տակ: Այստեղ նրանք կիրաքցեն կոմունիստի այբուբենը: Այստեղ կանեն իբր իսկական համայնակարներ: Հարկադրել մօրը՝ տալ մեզ, խորհրդային պետութեան, երեխաներին — ահա մեր գործնական խնդիրը... Ծնողական սէրը մեծ մասամբ չէ՞ վնասում երեխային: Ընտանիքը անհատական է, եսամոլ և հակահամայնական ու նրա կրթած երեխան մեծ մասամբ հակահամայնական է՝ օժտած եսամոլ ձգտումներով: Անհատ ծնողների եսամոլ ձգտումները տեղ չպիտի ունենան կոմունիստական հասարակութեան մէջ, որը կրում է իր հիմքում չէ՞ թէ անհատի, այլ հասարակութեան շահերը, չէ՞ թէ եսամոլ ձգտումներ, այլ համայնի բարիքը:\*\*) Եւ նման յայտարարութիւններ ու ցանկութիւններ արած ու յայտնած են ոչ միայն առաջ, երբ բաւականաչափ փորձ չկար, այլ և յետագայում, երբ կենքը վաղուց քամուն է տւել համայնակարգի մանկավարժութեան գաղափարները: «Երեխաների իրականացումը խորհրդ. կոմունիստական» 1927 թիւ պաշտօնական հրատարակութեան մէջ աւած է, որ «Նիկոմեդեան յեղափոխութեան յայտնաբերած հիմնական գաղափարը նրանում է, որ մանկատները պիտի իրականացնեն համայն-

նակարգական կրթութիւնը բոլոր երեխաների՝ ի հաշի պետութեան»:

Այսպիսով, բոլոր երեխաները «պետականացուած» են, ընտանիք, հասարակական հաստատութիւն, որն է մասնաւոր նախաձեռնութիւն—բոլորը վերացուած են. Այդ անենի տեղը բռնելու է պետութիւնը. նա՞ է երեխաների սէրն ու ստեղծչը և նա՞ պիտի հողաց նրանց բոլոր կարիքները — հողկան, բարոյական, Ֆիզիքական:

Որոշ տեսակէտից հանգամանքները դասաւորւել էին բաւական նպատարուր խորհրդային իշխանութեան համար: Այդ իշխանութիւնն իր տրամադրութեան տակ ունէր անուուն-անսէր, անապաստան երեխաների մի հսկայ թիւ: Մի կողմ թողնելով ծնող և սէր ու տիրական ունեցողներին, խորհրդային իշխանութիւնը սքանչելի նարատրութիւն ունէր յարող փորձ անելու անապաստանների վերաբերմամբ: Այդպիսի յաջող փորձ կը թելադրէր ծնողներին՝ իրենց ձեռքով երեխաներին յանձնել պետական հսկողութեան ու խնամակալութեան: Ո՞ր ծնողը չէ կամենայ դր իր գաւառը բարտաւոր լինի: Բայց...

• Մի կողմ թողնելով դպրոցն ու դպրոցական երեխաները, զբաղենք միայն այն երեխաների վիճակով, որոնք մի յայտարարի են բերած «անապաստան» անունով:

Նախ մի քանի տեղեկութիւններ սրանց թւի մասին:

Չնայած, որ խորհրդային իշխանութիւնը անապաստաններով շատ է հետաքրքրուած (տարբեր նպատակներով), արնուածենայիւ նրանց թւի մասին վստահութեան արժանի ստոյգ տեղեկութիւն չկայ: Պատճառն այն է, որ նախ՝ խորհրդային վիճակագրութիւնը անշառ վերաբերմունք չունի դէպի որոշ կարգի իրական տեսանք և ապա՝ վիճակագրութեան ենթակայ տարրը յամաօրէն խուսափում է արձանագրելուց: Վերջին պարագան հասկանալի կը լինի, երբ քիչ յետոյ խնդրին ծանօթանանք մօտից:

Լենինի կինը՝ Ն. Կրուպկայան, 1923 թիւն գրում էր, որ արձանագրուած անապաստանների թիւը հասում է եօթ միլիոնի\*): Լ.Մ.Վասիլևսկին նոյն տարւայ համար մօտաւորապէս նոյն թիւն է ցոյց տալիս. — երկու միլիոն որը և չորս միլիոն կէս—որը՝ ընդամէնը վեց միլիոն\*\*): Պրոֆեսոր Պոդիլչեւը 1926-ի համար գրում էր. «1922-23 թեւերի համեմատութեամբ անապաստան երեխաների ու պատանիների թիւը չի կարող չատ փոխւած լինել»:\*\*\*) Այնուհետև այդ թիւը պաշտօնական աղբիւրները զիջապատ յտ արագութեամբ կրճատուում են: Քրուպսոյի անապաստանների թիւը հաշուում է «100,000-ից ոչ պակաս»: 1927 թիւ պաշտօնական տեղեկութիւնները այդ թիւը ինքնուրու են 334,000-ի, որը նոյն «Ռեզուստան» շատ է համարում և 1927 թիւ համար անապաստանների քանակի համար ցոյց

\*) И. М. Василевский. Детская преступность и детский суд.  
 \*\*) А. Кошмар «Брачное, семейное и опекуное право в сов. республике». 1922 г.  
 \*\*\*) З. Лыжин. «Социальное трудовое воспитание».

\*) «Պրախա», 1923, № 51.  
 \*\*) «Голгофа ребенка». 1924, ст. 5.  
 1926, ст. 10.  
 \*\*\*) «Детская безпризорность и меры борьбы с ней».

է տալիս մի նոր թիւ — միայն 80,000: Իսկ հանրային կրթութեան կոմիտար Լուսնաշարակու կարծիքով անապատանների թիւը 1928-ին 25,000-ից չի անցնում: Անհատական չէ, որ այս տարւայ համար նոյն Լուսնաշարակին յայտարարի, որ խորհրդային հանրապետութիւններում այլ ևս անապատաններ չկան: Եթէ իրօք, անապատանների թիւը Ռուսաստանում հասնելը 2-3 տասնակի հազարի, նրանցով հազիւ թէ հետաքրքրուլի ենք՝ ի նկատի ունենալով երկրի այժմեան պայմանները: Եւ յետոյ, այդ թիւը կը կորչէր հսկայածաւալ ու բազմամիլիոն ազգաբնակչութիւն ունեցող երկրում, և անապատանները այնպէ՛ս աչք չէին ծակի՝ թէ տեղացու և թէ օտարականի համար: Կասկած չկայ, որ անապատանները շատ մեծ թիւ են կազմում: Ակրերում իշխանութիւնը այդ թիւը ծածկելու կարիք չէր գզում: — Նա բոլորովին այլ նպատակով էր մտնեում անապատաններին: Երբ վերպիցին, չհասան նպատակին, այն ժամանակ վերաբերումը փոխեց թէ դէպի անապատան երեխաները, և թէ դէպի նրանց թիւը: Բայց սկզբներում մեծամեծ յոյսեր էին կապում անապատանների մասին այդ երեխաների հետ: Յատկապէս դառնց համար բաց արին բազմաթիւ մանկատներ, աշխատաւորական գաղութներ: Այդ հաստատութիւններին վերապահում էր գործուղելութեան ամենալայն ապագայ՝ վարչապետի հետնկարներով: Կոմունիստական կարգերի ու հասկացողութիւնների իսկական հիմքը մանկատներում պիտի դրուէր ու այստեղից է, որ այդ կարգերը յաղթաներէն կենանքի մէջ պիտի մտնէին: Լ. Մ. Վասիլևսկին, խօսելով մանկատների մասին, մեզ ծանօթ դրբում գրում է. «Միայն պատըպարան ու սնունդ չէ, որ պիտի տան մեր մանկատներին, այլ համալսել ու ծրարելու աշխատաւորական կրթութիւն: Որպէսզի մանկատները դառնան նոր աշխարհի սնարան, նրանք պիտի լինեն և՛ պատուպարան, և՛ դպրոց-համայնք, և՛ ակումբ: Շատ կարևոր է, որ երեխաների կենանք այդ հիմնարկութիւններում անցնի ուրախ, հաճելի ու գեղեցիկ, որպէսզի նրանք ոչ թէ հեռանան, այնտեղից, այլ ի մի ձուլին իրենց կենանքը հիմնարկութեան կենանքի հետ, իրենց շահը՝ նրա շահի հետ»:

Թէև անապատան երեխաների մեծ թիւն ըստ ինքեան մի շարիք ու դժբախտութիւն է ամէն մի երկրի համար, բայց բուլղարիկների համար, կրինում եմ, դս մի բարեկամահոութիւն էր, որ նրանց հնարաւորութիւն էր տալիս կենանք տալ իրենց գաղափարներին գէթ մի ասպարէզում: Այստեղ նրանք կատարելապէս ազատ էին որեւէ ճնշումից՝ արտաքին թէ ներքին: Ոչ ոք նրանց չէր խանդարում: Աւելին, ամէն ոք կուրախանար նրանց յաղորդութեան համար: Բայց յաղորդութիւն չունեցան նրանք: Ինչո՞ւ: Շնորհալի մարդիկ չկային, գործ կազմակերպելու կարողութիւնն էր պակաս, թէ՛ անկեղծ, շիտակ վերաբերմունքը դէպի առաջադրած նպատակը: Կարծում եմ՝ գրանցից և ոչ մէկը: Գոնէ սկզբնական շրջանում, երբ քաղաքականութիւնը դեռ ամէն ինչ չէր: Կայ մի ընդհանուր պատճառ, որ դատապարտում ու անյաղորդութեան է մատնում խորհրդային իշխանութեան ու գործիչների ձեռնարկներն

ու գործերը: Այդ նրանց ձգտումն է՝ բաւարարել կենանքը ու ենթարկել այն իրենց կամքին: Կենանքը պահանջները արճամարհում են, իրականութեան դէմ աչք են գոցում և, բնականաբար, յաղորդութիւն չեն ունենում: Կրթական ու մանկավարժական գործը, ինչպէս ամէն մի գործ, որ կապ ունի մարդկային մտքի ու հոգու թափանցիկի հետ, իր գաղափարն ու ծաղկման համար պահանջում է ազատ ու անկաշխան պայմաններ: Խորհրդային իշխանութիւնը հաշիւ չի առնում այդ պահանջները, ուստի սկսած գործը դատապարտում է մահւան: Գործնական կենանքը ծրարները իրականացնողները այդ բանում համոզում են շատ շուտ և ահա սկսում է նահանջ այս կամ այն ճակատում: Այստեղ է նահանջ և կրթական գործի ճակատում: Այդ նահանջը ամենից շուտ ու շատ ծանր չափերով անդրադառնում է մանկատների և առհասարակ, այն հիմնարկութիւնների վրա, որոնք մտահոգած էին անապատանների վիճակով: Իրար յետեից փակում են մանկատները և երեխաները փողոց նետում բառի մերկ իմաստով: Միացած մանկատներն էլ չեն ծառայում իրենց նպատակին. երեխաներն այնտեղ իրենց համար լաւ ու գրաւելչ ոչինչ չեն գտնում ու, բնականաբար, չեն կապում այդ հաստատութիւնների հետ:

Խորհրդային թերթերն ու հեղինակները իրենց տւած տեղեկութիւններով խաչ են քաշում գործող մանկատների վրա: Լսե՛նք նրանց: «Երեխաները շատ վատ են ապրում: Մանկատները չեն տաքացում և երեխաները մնում են սոված, սառնոտ ու հիւանդանում են. մահացութիւնները նրանց մէջ աճում է ահալի շափերով»:<sup>\*</sup> Առողջապահութեան կոմիտար Ե. Սեմաչկոն, 1923 թւին Մոսկւայի մանկատների մասին հետեւեալ տեղեկութիւններն է տալիս. «Երեխաների 33,7 տոկոսը միջակից պակաս սնունդ է ստանում, 20%-ը ունի ջլաչին հիւանդութիւններ, 53%-ը հիւանդ է թոքայտով կամ տրամադիր այդ հիւանդութեան, 26% ունի սրտի հիւանդութիւն: Աւելի զարհուրելի թիւեր են տալիս Կաղանի նահանգի մանկատները»:<sup>\*\*</sup> Լուսնաշարակու վճարութեամբ՝ «մանկատներում աշխատողների վիճակը արտաբնիկ է. ուսուցիչները գլխովին քաղցած են, ու մերկ, ամիսներով ոռճիկ չեն ստանում»:<sup>\*\*\*</sup> «Մեկ մօտ, գրում է տիկ. Կրուպակայա, հաշւած է 7 միլիոն անապատան երեխայ, իսկ մանկատներում ամենաշատ տեղաւորւած է 800,000. Ինչ անել միացածի հետ... Մենք քիչ ենք մտածում անխնամ միացածների մասին և աւելի քիչ բան անում նրանց համար: Միթէ՞ մենք այնքան բուժ ենք, որ ընդունակ ենք միայն կրկնելու անապատանների հասցէին այս ծաղրական խօսքերը, թէ՛ «գնացէ՛ք՝ ձեր ծնողների մօտ կամ մանկատները»: Չէ՞ որ ոչ ծնողներ, ոչ էլ մանկատներ կան»:<sup>\*\*\*\*</sup> Տիկ. Կալինինը գրում էր.

\* ) «Պրաւդա», 1923, № 5.

\*\* ) «Պրաւդա», 1926, 28, III.

\*\*\* ) «Պրաւդա», 1928, 25, I.

\*\*\*\* ) «Իզվեստիա», 1928, 26, II.



Տասնեակ Հաղարտոր երեխաներ մահանում են խօսքի իսկական ու փոխարքարկան մտքով. մանկական մտղջ քրտանները կանչած են կենսաբի ու մահան մահան ներքում՝ դատապարտած Ֆլյուիբալիս ու բարոյական փչացման»։)՝ Մի այլ գործիչ վկայութիւն. «Ինչ վերաբերում է մանկատների վիճակին, պէտք է սակ, որ կան լաւ կազմակերպւած ու կանոնաւոր աշխատողները, որոնք մեծ մասամբ Փրանց վիճակը հետո է լաւ լինելուց։ Մանկատների միայն 12.5%ը յարմարեցրած է այդ նպատակին — նախկին որբանոցներ, կրթական տներ, զգրոցական շէնքեր և այլն — մնացածները նախկին մասնաւոր բնակարաններ են, որոնք այդ նպատակի համար բնաւ յարմարեցրած չեն։ Շատ յաճախ մանկատները տեղաւորւած են արդէն ձեռքից գնացած, քար ու քանդ եղած շէնքերում, որոնք ինք տարւայ ընթացքում վերանորոգութեան երես չեն տեսել։ Այդ վիճակիներին մեծ մասը այժմ խոնաւ, ցուրտ և կեղտոտուած է ու չի կարող ունենալ բնականոն պայմաններ երեխաների զարգացման և աշխատանքների համար... Ինչ վերաբերում է մանկատների կահաւարութեան, պատկերը շատ տխուր է։ Հազարաքիտ են այն տները, որոնք թէ թէ շատ տանիք կահաւարութիւն ունեն։ Մանկատների միայն 58%-ում կայ մահաճակատներ իւրաքանչիւրի համար, իսկ 42%-ում երկու երեք երեխայ միասին են քնում մի մահաճակատի վրա։ Կուրսիկ նահանգում, օրինակ, կայ մանկատուն, որը 155 երեխայի համար ունի միայն 40 մահաճակատ։ Մատնանշելով, որ մանկատների վիճակը շատ աւելի վատ է դաւաճողներում, Հեղինակը եզրակացնում է. «Տեսել պայմաններում խօսքի մանկավարժական աշխատանքի յարողութեան և երկիտմերի մի մի ձուլող ուժից կազմակերպութեան մասին աւելորդ է»։\*\*)

«Մանկավարժական աշխատանքների յարողութեան» մասին խօսելը աւելորդ է ոչ թէ ըստ ամենայնի թշուար վիճակ ունեցող մանկատներում, այլ և ջրա կազմակերպւած ու կանոնաւոր աշխատող տներում։ Որովհետեւ մանկավարժական պահանջները բխում են երեխայի բնաւորութիւնից, բացառապէս պայմանաւորում և նրա հողկան բնականոն զարգացման ընթացքով. մանկավարժութիւնն առաջնորդ է դատախարակութեան և ուսուցչման մեթոդներ, մեկնելով դատախարակողների և սովորողների հողկան ներքին պահանջներից. — ոչինչ՝ դրսից, խորթ ու անհարպատ, ամէն ինչ՝ ծաղող երեխայի հողուց, նրա պահանջների ու հետաքրքրութեան սահմաններից, մտաշնչի ու մարտելի։ Կարճ՝ ուղարկութեան կենտրոնը պէտք է լինի երեխան ինքը։ Խորհրդային մանկատներում այդ տեսակետով չեն աւաջտարգրւում։ Երեխան նպատակ չէ, այլ միջոց, որ պէտք է օգտաբերուի մի այլ նպատակի համար։ Մանկատների վրա խորհրդային եշխանութիւնը նայում է իբր իր քաղաքական գէնքերից մէկի և այդ տեսակետից էլ աշխատանք է կատարում։ Քաղաքականութիւնը չէ թէ ազատ մտքը ունի աշխտող, այլ նրա դրօշակի տակ է կատարում շատ բան, և թէ՛ ու։

ամէն բան։ Գրադարանները լեցուն են քաղաքական ու տնտեսական բովանդակութիւն ունեցող գրքերով, կարմակերպւած են յեղափոխական տօներ, մասնակցում են յեղափոխական ցոյցերին. մանկատներում կարծապէս են կոմունիստական միութիւնները-ըջիչներ։ Բնական է, որ հողով արի մնացած իսկական մանկավարժները Հնարաւորութեան սահմաններում խուսափում են կիրտել վերից եկած հակամակաւորութեան հրահանգները՝ աշխատելով փրկել երեխաների բնաւորութիւնը աղաւաղումից։ Մեր մանկավարժների և ուսուցիչների մեծամասնութիւնը մինչև օրս ներշնչած չէ կոմունիստական գաղափարներից», դանդաւատւած է տիկ. Լիլինա)։ Իսկ մի այլ հեղինակ մտնանշում է, որ երեխաները իրենք ընդդիմադիր տրամադրութիւն են ցոյց տալիս քաղաքական կրթութեան դէմ։ Երեխայի այդ տրամադրութիւնը նպատակով ներշնչած չէ, այլ մի բնական երեւոյթ։ Այդ տեսակէտից շափազանց բնորոշ են մի անկիտայի տաճ տեղեկութիւնները։ Երեխաներին առաջարկում են հետևեալ հարցերը. 1) Ո՞ւմ կը կամենայի ամենից շատ նմանել, 2) Ինչո՞ւ հէնց նրան, 3) Երբ մեծանալ, ի՞նչ կուզէի լինել, 4) Ինչո՞ւ կուզէի լինել այդ։ Հարցաքննում են 1127 հողի։ Պատասխանները պիտի վկայէին երեխաների «յեղափոխական տրամադրութեանց» մասին ու ցոյց պիտի տային, թէ նրանք ինչպէս են հասկանում իրենց ազգի առաջ կատարող երևոյթները։ Ըստ այդ պատասխանների հարցաքննողներից միայն 4.7% են ցանկութիւն յայտնել նմանել յեղափոխականներին։ Բնորոշ են և այդ «յեղափոխականների» պատասխանները։ Մէկը (15 տարեկան) ուզում է նմանել Գ. Մարքսին, որովհետև նա նշանաւոր քանաստեղծ է եղել բոլոր երկրների համար։ 12 տարեկան մէկը ուզում է նմանել Լենինին, որովհետև «նա շատ զեղեցիկ է»։ Մի ուրիշը (14 տարեկան) գրում է. «Ես ուզում եմ լինել սաստանա Տրոցկին, որովհետև նա տալիս է ազատութիւն և կառուց է կոլեակների հետ»։ Իսկ 3 և 4 հարցերին նոյն երեխան պատասխանում է, որ կուզէի թազաւոր լինել, որովհետև շատ է սիրում նրան։ 28 հողի, մեծ մասամբ 10-11 տարեկան, ցանկութիւն են յայտնում կոմիսար լինել, որովհետև նրանք ջրա են ապրում», «սպիտակ հաց ունեն», «ուրախ են ապրում», «սայակ չեն քաշում» և այլն։ Պատասխաններ, որոնց մէջ շատ բան կարելի է փնտրել, բացի յեղափոխական տրամադրութիւնից և կոմունիստական ձգտումներից։

Այդպէս են «տրամադրութիւնները» ջրա կազմակերպւած» փոքրաթիւ մանկատներում։ Իսկ մնացածներում երեխաները սովից, ցրտից ու հիւանդութիւնների ձեղին օր չեն տեսնում։

Անարդար շլինելու համար պէտք է ասել, որ Ռուսաստանում կան, իրօք, արտաքանապէս գունէ, շատ լաւ կազմակերպւած մանկատներ ու դպրոցներ։ Նրանք ունեն յատուկ նպատակ. արտասահմանից երկրի մտնող հիւրերին մանկական այդ օրինակելի հիմարկութիւններն են ցոյց տալիս և նրանցով գաղափար կազմել տալիս երեխաներին խնամող բոլոր հիմարկութիւնների մասին։ Արտասահմանից Ռուսաստան գնա-

\*) «Իզւեստիա», 1923, № 65.

\*\*) «Պրաւդա», 1921.

\*) «Պրաւդա», 1923, № 5.

ցողները իրենց զոգասանքների մէջ իրենց տեսածի նկատմամբ սխալած չեն, բայց մեղանշում են իրականութեան դէմ, երբ ընդհանրացնում են իրենց եզրակացութիւնները: Որովհետեւ այդ իրականութիւնը տրամագծօրէն հակառակն է առում.— այն մի քանի մանկական հիմնարկութիւնները, դպրոց, մանկատուն և այլն, որ նրանք տեսնում են, մի կաթիլ է ծովի մէջ, իսկ այդ ծովի պատկերը յուսահատօրէն մտայն է: Խորհրդային մամուլում մանկական հիմնարկութիւնները մասին արւում են այնպիսի տեղեկութիւններ, որ մարդ փաշարում է: անհնարին կը լինէր հաւատալ: Եթէ տեղեկութիւն աւորը իրենք չլինէին: Հանրային կրթութեան կոմիտարիատի ներկայացուցչներէց մէկը նկարագրում է Նովոչերկասկի (Հիւս.Կովկաս) մանկատները: «Մանկատները, դրում է նա, հարազգիտ բացառութեամբ լի են միջնատներով: Երեխաները մեծ մասը հիւանդ են քրոճ: Կան հիւանդներ նաև բժուար տիֆով: Մանկատների համար կատարեալ պատիժ են այնպիսի հիւանդութիւնները, որպէսք են տրախտա և քաշայութիւն (դիլի քոս): Ռուստովի ընդունարանները (որտեղից երեխաների տեղափոխում են մանկատները. Ա. Ա.) հակամանկավարժական հաստատութիւններ են»: Այդ տեսուչը հաւատացնում է, որ եթէ անմիջապէս անհրաժեշտ միջոցներ ձեռք չարձեն, «ընդունարանները կը դառնան աւազականոցներ»: Այդ ընդունարան կայանները իրօք որ սարսափելի պատկեր են ներկայացնում: Միևնոյն կայանում հաւաքում են ամէն կարգի, հասակի, դրագմունքի ու վիճակի անչափահասներ — և՛ թափառականներ, և՛ անտակներ, և՛ մուրեկներ, և՛ հարեցողներ, և՛ դողեր, և՛ պատահմամբ մորտոդներ, և՛ անասարակ, որոշ տեղ չունեցողներ: Գժուար չէ երևակայել, թէ ինչ Սոլով Գոժոր են պատկերացնում այդ կայանները, ուր երեխաները պահւում են օրերով ու շաբաթներով:

Այդպէս են մեծ մասամբ, բուլչիկներին խոստովանութեամբ, մանկատներն ու կայանները: Բնական է, որ նման պայմաններում դատարարակական-կրթական խնդիրները պարապ բանէն թւան: Երեխաների միտքը գրաււած է ստամբքի պահանջին բոււարարութիւն առաւ ընդհով: Ինչպէ՞ս կարող է նա այդ անել, երբ ուտելու բան չկայ: Իաց չկայ նաև նկարութիւն: Եւ ահա երեխան օտարօրծում է փողոցից բերած սովորութիւնները.— զողանում է մանկատներից ինչ որ կարողանում է և հանում շուկայ: Իսկ երբ այլևս զողանարու մատչելի բան չի լինում, մանկատունը էր հրապարակ իսպառ կորցնում է և երեխան, մնաւ բարև ասելով նրան՝ նորից վերադառնում է փողոց: Երեխաները մանկատներից փախչում են ոչ թէ միայն սովից, թէ և այլ էլ միանգամայն յարգելի պատճառ է, այլ և ցրտից, մերկութիւնից, ծանր աշխատանքներից, վատ վարելոցութիւնից, սիրոյ ու փաղաքանքի կարոտից: Ու երեխաները ինքնապաշտպանութեան բնագրից մղւած՝ ամէն կերպ խուսափում են մանկատներից, չեն ուզում ձնոր՝ մարդ դառնալ: Ահա թէ ինչ է դրում մէկը, որ «ազգայնացրած», «պետական» երեխաների միջոցով «նոր» կեանքի հիմքն էր երպրում դնել:

«Երեխաները փախչում են ու փախչում այնպիսի ըսնակութեամբ, որ այդ մասին ընդունւած չէ խօսել: Փախչում են, չնայած ըստիմի խտտութեան, կողպէքներին, ցանկապատերին: Եւ լաւ է, որ փախչում են: Այդ ապացոյց է ինքնապաշտպանութեան առողջ բնագրի, որը փրկում է մի տեղից, ուր կեցողանի Էսլյր դատապարտւած է մահուան»<sup>\*</sup>):

Եթէ մանկատներից անցնենք աշխատաւորական դպրութիւններին, կը տեսնենք, որ այնտեղ էլ միթաբարական ջրէ բան կայ: Մեկ ծանօթ Բոգուուլովսկին այսպիսի օրինակներ է բերում: Գաղութներից դուրս եկած 1.507 պատանիներից (13 տարեկանից վեր) արհեստ սովորել են միայն 12 %—ը: Այդ «մանկազարգներից» դուրս եկողներից հնարաւոր է եղել տեղաւորել (դործ տալ) միայն 148—ին: Իսկ մնացածը: Այդ մասին տեղեկատուն լուծւ է ըստ ինքեան հասկանալի է համարւում, որ մնացածը բաժին է ընկել փողոցին:

Հանրային կրթութեան կոմիտարը 1926 թւին հրատարակել է մի Ժողովածու «Աշխատաւորական դպրութիւնների անապատանների» մասին: Այդ պաշտօնական հրատարակութեան մէջ աւանդ է աշխատանքի կազմակերպում մանկական հիմնարկութիւններում մինչև այժմ ունեցել է շատ հական թերութիւններ. աշխատանքը մեծ մասամբ տարւել է ոչ լուրջ, չի համապատասխանել շրջանի տնտեսական վիճակին և չի տակ կեսքը մտնելու հնարաւորութիւն»: Սա թընամու խօսք չէ: Տարիներ թափած աշխատանքի վրա խաչ է քաշւում. խորստովանում է, որ «մանկական հիմնարկութիւններից» պատանիներ կեսնք են մտնում՝ միանգամայն անպատարատ այդ կեանքի համար: Այդ նշանակում է, որ նրանք մեծ մասը ընկնելու է կեանքի անիւի տակ ու կորչելու, որովհետև պայքարելու հնարաւորութիւն չունի: Իսկ փոքրաթիւ մասը—աւելի ուժեղ ու տոկուն—չկորչելու համար ընտրում է պայքարի ճամբան — զանազան յանցագործութիւններ: Գոժոր է դալիս, որ մանկական այդ հիմնարկութիւնները յանցագործութեան դպրոցներ են: Եւ իսկպէս, ինչով պիտի գրաղեն մանկատների և, առհասարակ, անապատաններին տեղ տուող հիմնարկութիւններից դուրս եկող և դուրս մնացած երեխաները: Արդէն տեսանք, որ տիկ. Կրուպակյան դուրս մնացած երեխաների համար ահուելի թիւ է ցոյց տալիս: Մի ուրիշը պնդում է, որ «միայն Վիսապոյի նահանգում հաշւում է 37.500 անինամ երեխայ, Սիմբիբսի նահանգում՝ 48.800, Սամարայի նահանգում՝ 61.300»: Միւս նահանգների մասին տեղեկութիւնները պակասում են, բայց հիմք չկայ ենթադրելու, որ ամէն տեղ պատկերը նոյնը չէ: Գոյութեան կուրը երեխաներին նետում է աւազակութեան և այլ յանցագործութեանց դիրիւր: Կազմում են անապատանների հրոսախմբեր, որոնք զարգանալով հասնում են ահաւոր չափերի: Սովի տարիներին այդ անապատանների կազմակերպում էին հրոսախմբեր, որոնց նպատակն էր մարդակերութիւնն ու զիակակերութիւնն<sup>\*\*</sup>): 1922թ. Ռուսաստանում (առանց Ուկրայինայի) երեխաների ձեռքով կատարւած

<sup>\*</sup>) «Сов. Зап.». № 35, ст. 426.  
<sup>\*\*</sup>) Л. М. Васильевский «Жуткая летопись голода».

յանցագործութիւններ թիւը հասնում էր 36,000-ի, որի 20% ընկնում է 8-12 տարեք ունեցողների վրա\*) : Ամենատարածւած յանցագործութիւնը, որ կատարւում է երեխաների ձեռքով, գողութիւնն է : Խորհրդային վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ գողութիւնը բնականուր յանցագործութեան 60-80% է կազմում : Գողութեամբ գրաւուած են 10-14 տարեկանները : Աւելի հասակաւորները չեն բաւականանում միայն գողութեամբ : Իրանց յանցագործութիւնը տարիների հետ միասին աւելի լրջանում է և հասնում մինչև մարդասպանութեան : «Երեխայ մարդասպաններին» ներկաւ է նոյնիսկ յատուկ ուսումնասիրութիւն (Մ. Բուրաչեւա, Պարիզով, 1926) : Լ. Վասիլևսկին գրում էր. «Ենթադրւած առջև սպանալիորէն զարգանում է մանկական յանցագործութիւնը, վայրենացումը, այլասերումը արդղը սերնդի» : \*\*)

Ինչի մեր յիշած հիմնարկութիւններից, Ռուսաստանում կայ նաև մի այլ պետական հաստատութիւն, որի մտահոգութեան առարկան նոյնընէ երեխաներն են : Այդ հիմնարկութիւնը կոչւում է Երեխաների Հանրային Տեսչութիւն և պարտուոր է՝ 1) կուռն մանկական անպատասանութեան, ողբատիժեան, անտախտութեան ու ապօրինութեան դէմ : 2) կուռն երեխաների շահադործման և բնորոշ մատ վարչեցողութեան րնտանիքում և ձեռնարկութիւններում : Երեխաների հանրային տեսչութեան օրգաններ են երեխաների հանրային տեսչները (հանրային օգնութեան եղբայրներ և քույրեր) : Այդ տեսչները պարտականութիւնն է 1) հերթապահել հասարակաց վայրերում (փողոցներում, հրապարակներում, սկզբուններում, կայարաններում և այլն) : 2) յոճարել այն արհեստանոցներ ու ձեռնարկութիւնները, որոնք չեն օգուում օտար վարձու աշխատանքից և այն ընտանիքները, ուր երեխաների հետ վատ են վարուած, ի շարք գործ դնելով ծնողական կամ խնամակալական իրաւունքները : 3) հարկաւոր դէպքում բռնել անշահահասներին և ուղարկել երեխաներ ընդունող կայանները : 4) հերթապահել և հարցաքննել անշահահասներին ընդունող և բաշխող կայաններում : Տեսչութեան օրգանները պիտի կուռն ստահակութեան, սրիկայութեան, թղթախաղի, հարբեցողութեան և այլ մանկական բնաւորութիւնը փշաջնող երևոյթների դէմ : \*\*\*)

Անշահահասների վրա հսկողութիւն ունենալու գաղափարը խորհրդային իշխանութիւնը փոխ է առել Ամերիկայից և Անգլիայից : Մակայն, այստեղ էլ ամէն ինչ լաւ է միայն թղթի վրա : Լ. Վասիլևսկու վկայութեամբ նոյնիսկ Պետրոպոլում 1923 թիւն միլիոններ չեն եղել կազմակերպւելու երեխաների տեսչութիւնները : Իսկ Պետրոպոլը երկրի երկրորդ քաղաքն է թէ ազաւրնակութեան թիւ և թէ մանկական յանցագործութեան տեսակետից : Բայց այն վայրերում էլ, ուր գոյութիւն ունեն այդ հիմնարկութիւնները, իրանք չեն ծառայում իրենց նպատակին, որովհետև այդ նպատակը աղաւաւում է քաղաքական և կուսակցական միտումներով : Մանկական հանրային տեսչներ կարող են նշանակւել,

միայն կոմսոմոլի անդամներ՝ սկսած 18 տարեկան հասակից : Իրանց օգնականներ ընդունւում են կոմբլիշներէրց : Այդ ցնկը բուցէ մի այլ նպատակի համար լաւ է, բայց երեխաների պաշտպանութեան ու բացասական ազդեցութիւններից հեռու պահելու համար այլ տեսակի ցնկը է հարկաւոր :

Շատ երկար ժամանակ անապաստանները համարւում էին ճանիճեակ անցելալիք ժառանգութիւն, դարական կարգերի, պատերազմի, բողոքային, ինտրւենցիայի արդիւնք : Մեղադրում էին, ի հարկէ, նաև դրամատիրական կարգերը : Զ. Լինիանս դեու 1926 թիւն գրում էր. «Մանկական անպատասանութիւնը զարգացող դրամատիրութեան անփոփոխ ուղեկիցն է : Իրամատիրութեան անձան հետ անձում է և մանկական անպատասանութիւնը» : Եւ որպէս պատասխան քաղիքեան ծաղող հարցի — միթէ՞ Ռուսաստանը ամենուրեք զարգացած դրամատիրական երկիրն է, որ այնքան անփոք է. մեղադրուի, — մասնանշուում էր, որ արեւմտեան դրամատիրական երկրներն ընդհանրապէս չեն հետաքրքրում անտուն-անտէր երեխաներով և այդ պատճառով այդ երկիրներում նման հարց գոյութիւն չունի : Իսկ եթէ զբաւէին, այն ժամանակ, երեխ. կր պարզէր, որ, օրինակ, Անգլիայում կամ Գերմանիայում աւելի մեծ խնդր անապաստաններ կան, քան Ռուսաստանում : Անհիթեթութիւնը այնքան ակերտա է, որ վերջ ի վերջոյ, խորհրդային գործիչները իրենք էլ սկսեցին ցոյց տալ այդ ցուտու Երևոյթի իսկական պատճառները : Սկսեցին իտաւ և քաղաքացիակալ կրիւնների մասին, որոնց ջատագոյնոր իրենք են եղել և որոնք Ռուսաստանը քայքայել են աւելի, քան մեծ պատերազմը և 1921-22թ. սովի մասին, որ երկիրը հասցրեց մարդկերութեան և վերջապէս, «ենրկայ պայմաններ» մասին : Ն. Կրուպչիկայն գրում է. «Մեծամասնութիւնը խնդիրն այսպէս է պատկերացնում. անապաստանութիւնը՝ այդ պատերազմի ու քայքայման ժառանգութիւն է : Անապաստանութիւնը երեք քառորդով անցելով դժբախտութիւնների և անկարգութիւնների արդիւնք չէ, այլ արդիւնք է ներկայ պայմանների — գործարկութեան և, դիտաւորապէս, դիւղական ազատութեան : Ի հարկէ, պատերազմի, երկրի քայքայման ու անապաստանութեան մէջ կապ կայ, բայց այն չափով, ինչ չափով ներկան կապւած է անցելալի հետ : Ես ինքս էլ առաջ գրում էի, որ անապաստանութիւնը պատերազմի ու աւերածութեան ժառանգութիւն է, բայց ուսումնասիրելով խնդիրը՝ ստեսնում եմ, որ պէտք է հրաժարուել այդպէս մտածելուց. անապատանութեան արմատները ոչ թէ միայն անցելալում են՝ այլ և ներկայում» : \*\*)

Որ անապաստանութիւնը խորհրդ. իշխանութեան ուղեկիցն է դարձել, այդ մասին այժմ քաղմաթիւ վկայութիւններ կան խորհրդային մամուլում՝ վիճակագրական տեսլիներով հիմնաւորւած : Աւանձնապէս աւատա նիթ են մատակարարում արհեստակցական միութիւնների համաուսական կենտրոնական խորհրդի

\*) Русская школа за рубежом», № 5-6.  
 \*\*) Л. М. Васильевский «Детская преступность».  
 \*\*\*) Русская школа за рубежом, № 5 — 6.

\*) «Совр. Зан.» XXXV, стр. 411.  
 \*\*) «Պրավդա», 1925, 12, II.

պաշտօնավերթ «Տրուզ»-ը և երիտմտական «Գոմսոմոյ-սկայա Պրադա»-ն: Վերջապահ՝ այդ բանը Հաստատում է և Հանրային կրթութեան կոմիտարը: «Անապատանները շատանում են և աճում... Կայ մշտական աճում նրանց թվի»:\*) Այդ նոյնը անառարկելիորեն Հաստատում է և «Տրուզ»-ը\*\*): «Ֆողոցում գտնուում են երեխաներ՝ 3-ից մինչև 7 տարեկան — 15%, 8-ից մինչև 13 տարեկան՝ 37,1%, և զբաղմունքները 14—16 տարեկան՝ 20,9%, 16 տարեկանից բարձր՝ 7%»: Այդ թւերից պարզ երևում է, որ փողոցում ապաստան գտնող երեխաների մեծագոյն մասը աշխարհ է եկել խորհրդային իշխանութեան օրով:

Անապատանութեան Հարցը մի շարիք է դառնլ երկրի Համար, և իշխանութիւնն այդ բանը գիտակցում է: Ահադին գրականութիւն կայ այդ Հարցի մասին: Նրանով զբաղւում են օրաթերթեր ու ամսագրեր, հիմնարկութիւններ ու գանազան մասնագէտներ — մանկավարժներ, բժիշկներ, կրթապետներ և արտակարգ ցական գործիչներ: Մի շարք գործնական քայլեր է արւած խնդրի լուծման Համար: Մի քանի անգամ գումարել են Համախորհրդային Համադրումարներ այն բոլոր Հաստատութիւնների ներկայացուցիչներէջ, որոնք պայքարում են անապատանութեան դէմ: Որ հրողային թերթերում մինչև օրս էլ շարունակւում է ներխուտութիւնների գանձումը յօդուտ այդ պայքարի: Գաղմակերպւում են Հարթներ անապատանների օգտին», ինչպէս նաև շարքաօրեաներ, երբ Հագարաւոր ու տանեակ Հագարաւոր մարդիկ իրենց օրւայ աշխատանքը կամ աշխատավարձը տալիս են անապատանութեան դէմ պայքարելու գործին: Գործի յաջողութեան Համար փորձ է արւել ստող վիճակադրութիւն կազմել: 1926 թւին Համախորհրդային վիճակադրութեան ժամանակ յատուկ ուշադրութիւն է դարձնել այն բանի վրա, որ բոլոր անապատանների թիւը կայմէլ: Բայց ապարդիւն աշխատանք:— Վիճակադրութեան օրերին անապատանների մեծ մասը թողնում է իր տեղը և Հ ջբանում է իշխանութեան աչքից: Ընդհանրապէս նկատւած է, որ անապատանները ամէն կերպ խուսափում են իշխանութեան Հետ որևէ յարաբերութիւն ու Հփում ունենալուց: Հայաժողով Հոգեբանութիւնը թելադրում է նրանց միշտ Հնտու լինել Հայաժողովի: Իսկ նրանք յաճախ Հայաժողով են ոչ թէ յատուկ նպատակով, այլ որովհետև օրէնք չեն ճանաչում: Նրանք փորձից դիտեն, որ իրենցով Հետաքրքրւում են՝ կայաններ, մանկատներ, մանկաքաղաքներ ուղարկելու Համար, իսկ այդ Հաստատութիւնները նրանց Համար մի տեսակ բանտեր են, որտեղից միայն փախելի պէտք է:

Որոհրդային իշխանութեան սկզբնական շրջանում անապատանութեան դէմ պայքարում էին նաև կողմակիցաւ Հասարակական ուժերը: Այն ժամանակ իշխանութիւնը իրեն զեռ բաւականաչափ ուժեղ չէր զգում: ամբողջովին կանւած էր քաղաքացիական կոռւներով և ժամանակ չուէր ներքին Հարցերով զբաղւելու: Իսկ ջրէ թէ Հատ Հնարաւորութիւն ունեցող

արտաւ մարդիկ չէին կարող անտարբեր մնալ Հանդէպ տանեակ Հագարաւոր անտուն ու անտէր, փողոց քնկած երեխաներով: 1918 թւին Վ. Կորոնիայոյ նախագահութեամբ կազմակերպւում է «Երեխաների Փրկութեան Լիգա», մի մասնաւոր Հասարակական կազմակերպութիւն, անկայս կառավարութիւնից: Այդ կազմակերպութեան գլուխ կանգնած էին՝ Ն. Ս. Կիչկին, Ե. Դ. Կուսկովա, Ե. Պ. Պէչկովա, պրոֆ. Լ. Ա. Տարասել և այլին: 1919 թւին կազմակերպւում է «Երեխաների Պաշտպանութեան Որհուրդ», որի նախագահը թէ և Լոււնաչարսկին էր, բայց աշխատանքները տարւում էին Հասարակական շահերի դիտակցութիւնից ընդձեռնով: Այդ երկու Հաստատութիւններն էլ իրենց կարճատև գոյութեան ընթացքում մեծ գործ են կատարել՝ վայելելով Հասարակական լայն խաւերի վրտանուութիւնն ու՝ գործօն սպակցութիւնը: Բայց նրանց աշխատանքի Հասարակական ընդթը չէր Համապատասխանում կառավարութեան մտադրութիւններին ու շահերին, ուստի շուտով խափանեցին, և այդպիսով վերջ տրւեց Հասարակական նախաձեռնութեան՝ անապատանութեան դէմ պայքարելու գործում: Այդ գործը ամբողջովին իր վրա առաւ կառավարութիւնը, որի օրէնքներով ու ղեկընտնելով զբախտական կեանք պիտի ստեղծէր երեխաների Համար Ռուսաստանի սահմաններում: Բայց երբ անցաւ գործի և փորձեց կեանքում իրականացնել թղթին յանձնածը, ամէն քայլափոխում Հարկադրւած եղաւ մի ձեքով գրածը միտով ջնջել կամ Համապատասխան ճշդումները անել:

«Եթէ մենք յետագարձ Հայեացք ձգենք այն ճանապարհի վրա, որ անցել ենք՝ սկսած Հոկտեմբերեան յեղափոխութիւնից՝ երեխաների իրաւունքի օրէնքաւան ընդառաւում, կը Համոզւենք, որ երեխայութեան պաշտպանութեան խնդիրը երեք քառորդով լուծւած է 1918 թւին ընթացքում: Անպայս, մանկական իրաւունքի սկզբունքները յայտարարւած են Լոյլ այն ժամանակ, երբ նրանց իրականացնող մարմինները բաւականաչափ պատրաստ չէին և այդ պատճառով որոշումներից շատերը կարգախօսի քնտրութիւն են կրել: Երեխաների պաշտպանութեան և ընկերային կրթութեան Համար առաջադրած խնդիրները չէին Համապատասխանում պետութեան տնտեսական զարգացման, և կիսմէր ստիպում էր աստիճանաբար սահմանափակել աշխատանքի քափը: Երեխաների իրաւունքին վերաբերող Հատ օրէնքները դուրս եկան սնգործադրելի, որովհետև պետական նրթական միջոցները Հատ սահմանափակ էին: Արդարադատութեան կոմիտարը Հարկադրւած էր մի Հարք Հապեղալ ու Համապատասխան ուղղումներ մտցնել օրինադրքի մէջ: Այդ ամենը ըստ էութեան դէմ էր մեր յեղափոխական նւստումներին՝ մանկական իրաւունքի ասպարէզում: Եւ ընդհանրապէս գուրու եկաւ, որ մեզ մօտ քրեական օրինագրքում անչափոՀասաների նկատմամբ որևէ մտածւած և ամբողջացած գործօն միջոցների դրութիւն գոյութիւն չուէր: Կատարեալ անՀնարութիւն մի կարգ ու իրերի վիճակ»:\*)

\*) «Իշխանութիւն», II, 26.

\*\*) 1927, V, 10.

\*) Детская безпризорности и детский домъ», Москва, 1926, ст. 121, 123.

Այդպէս գրում է պրոֆ. Լիւբլինսկին, որ տւելա խնդրում լաւադոյն հեղինակներին է համարւում: Նա առանց այլեւայլութեան յայտարարում է, որ հրատարակած օրէնքներն ու դեկրետները պարզ կարգախօսներ են եղել, որոնք աչքի առաջ են ունեցել ոչ թէ կրկին իրական պայմանները, այլ զարգացական նպատակ, և որ կանաքը հարկադրել է բունը նահանգների ճամբան — անկէ «համապատասխան ուղղումներ»: Որո՞նք են այդ ուղղումները — հրատարուում են հանդիսաւորապէս յայտարարած սկզբունքից, թէ «երեխաները շին կարող յանցաւոր լինել — նրանց չէ կարելի պատժել, կարելի է միայն վերջել ու բժշկել»:

Օրէնդարական կարգով վերականգնում են 14 տարեկանից բարձր հասակ ունեցողները համար դատարանն ու բանտը: Այդպիսով ջուրն է ընկնում 1918 թւի յունւար 14-ի դեկրետը, ըստ որի դատարանն ու բանտը մինչև 17 տարեկան հասակ ունեցողներին համար բոլորովին վերացւում էր: Թէև այդ հասակը իջեցնում են մինչև 14-ի, բայց իրականութեան մէջ, ինչպէս վկայում են գործին տեղեակ անձինք, բանտարկութեան ենթարկւում են նոյնիսկ 10 տարեկան երեխաները\*: Երեխաների պաշտպանութեան համար ստեղծւած «նշխարային տեսչութիւնը», որ ժամանակին պարծանքի առարկայ էր, փաստօրէն դադարում է գոյութիւն ունենալուց, որովհետև կառավարութիւնը պարզապէս նիւթական միջոցներ չի տալիս նրան գոյութիւնը պահելու համար:

Բոլոր բարձր գաղափարները մէկ կողմ են նետւում, երբ որ նրանց հեղինակները երես առ երես կանգնում են կենսից դժուարութիւնների հետ: Այդ դժուարութիւնները յաղթահարելու շնորքն ու կարողութիւնը պակասում է, և իշխանութիւնը գնում է այն ուղղութեամբ, ուր ստեղծագործութեան պէտք չկայ: Մանկավարժական սկզբունքները տեղի են տալիս զուտ ոչտիկանական միջոցներին: Երեխայ սասժ բանը մոռացւում է, մտնւմ է միայն յանցագործը: «Երեխաների անպատասխանութեան դէմ պայքարող մարդիկ յուսահատւում են և հեշտութեամբ փոխարինում կրթութեան մարդկայնական միջոցները այնպիսիներով: որոնց թելադրողը զապանութիւնն է»:\*\*)

Մի ծայրայեղութիւնից միւրը: Սկզբներում գոռով կեցւածքով աշխարհ էին գարմացնում իրենց յայտարարութիւններով՝ երեխաների կրթելու մասին. նոր դպրոց, նոր մանկատներ, կրթական լաւագոյն եղանակներ, երեխան ազատ ամէն մի գառ ազդեցութիւնից ու կաշկածանդանից և այլն: Այդ ամենից յետոյ — ստախկանական վերաբերմունք, «արգելադրում», «երկաթէ կարգապահութիւն»: Մոռանում են ինչ որ գէւ երէկ անասան էին համարում: Ձէ թէ միայն մոռանում, այլ և ծարրում են... բուրժուականներն: Մինչև 1920 թիւը կոմունիստական իշխանութիւնը պարծնում էր, որ միայն 7ր հովանու տակ է, որ երեխաները շին կարող յանցաւոր նկատուել և ենթակայ են միայն դատարանականութեան, իսկ մի երկու օտարի անցած մոռանում են այդ և թուլամորթ բուրժուական համարում այն մտածողութիւնը, ըստ որի բանտի սղոցեցութիւնը

երեխաների վրա բացասական է համարւում: Վաս են համարում ու հեզանքի արժանի այն սկզբունքներն ու մեթոդները, որոնք անկարող են իրականացնել և, ընդհակառակը, փոտարանում են այն ամենը, ինչ որ իրենց համար հնարար է, մտաչելի ու դերբին: Այդ հողերանութեան թելադրանքով է, որ կրթական-մանկավարժական սկզբունքներն ու միջոցները վանւում են ու նրանց տեղը բռնում են «երկաթէ կարգապահութիւն», բանտ, «ճիպոտ»: Եւ դատարարականական այդ ձևը առաջադրում են ոչ միայն հասարակ մահապատգանները, նրանց ձայնակցում է առողջապահական կուսակցութիւնը, որ մինչև 1922 թիւը բոլորովին տարբեր վերաբերմունք ունէր դէպի անապատաններին կրթական գործը: Եւ հաս մանկատները և այլուր, ուր հուսաւում են անապատան երեխաներին, տեղի են ունենում սոսկալի բաներ: Երեխաներին ենթարկում են սարսափելի ծեծելի (երկաթէ ճիպոտով), կապում են պարանոցներով, ձմեռը դուրս են անում սենեակից՝ նախապէս մեքիկաններով, երեխաների լեզուները դադում են ետդով: Տեղ-տեղ մանկատներին կից կան «տանջանքի սենեակներ»: Մարդ զապանը միայն կարող է նման վերաբերմունք ունենալ դէպի երեխաները: Մեծ ջարդանքներում յամբար շարժիկները են կազմակերպւում՝ անապատանները որսալու համար: Եւ այդ անում են դիշերները, ճիւղտ այնպէս, ինչպէս որսում են զապաններին կամ թափառաւրջիկներին: Հաւաքում են, բայց կարճ ժամանակից յետոյ փողոցները նորից լցւում են անապատան երեխաներով: Այդ տեսակէտից ուշադրաւ է Ա. Կալինինայի վկայութիւնը. «Մի քանի անգամ վճռական ծայրայեղ միջոցներ են գործադրել Մոսկւայում՝ փողոցները անապատաններից ազատելու և համապատասխան հաստատութիւններում տեղաւորելու համար: Եւ ի՞նչ: Քիչ ժամանակից յետոյ փողոցները նորից լցւում են անապատան երեխաներով»:\*\*) Որտեղից են հաւաքւում: Բուսնո՞ւմ են, ինչ է: Մեծ մասամբ փախելում են համապատասխան հաստատութիւններից», որովհետև փողոցին իր բոլոր սարսափներով երեխաների համար աւելի սարսափելի չէ, քան այդ հաստատութիւնները իրենց զսխտեմով: Տ. Կալինյան մի շարք յօդուածներով խարագանում է շրջապատի ու հասարակական կազմակերպութիւնների «կատարաւ ու ամօթայի» անտարբերութիւնը դէպի երեխաների համար ստեղծւած աղէտաւոր վիճակը: Եւ «չըջապատ» ու «հասարակական կազմակերպութիւններ» ասելով պէտք է հասկանանք՝ կառավարութիւնն ու կառավարական հիմնարկութիւններ, որովհետև, ինչպէս տեսանք, կառավարութիւնն ինքն էր, որ յանձն առաւ երեխաների խնամատարութեան ու կրթութեան գործը՝ շեղաբացելով ընտանիքն ու մասնաւոր նախաձեռնութիւնը: «Շըջապատ» ու «հասարակական կազմակերպութիւններ» ասելով պէտք է հասկանալ կառավարութիւն և կառավարական հիմնարկութիւններ, նաև այն պատճառով, որ խորհրդային Խորաստատում ամէն ինչ կառավարութեան գիտութեամբ ու հրահանգով է կառարուում: Ուրեմն, դատարարութեան իսուքը միայն խորհրդային իշխանութեանը պէտք է ուղղել:

Մի շարք հեղինակաւոր անձինք (Կրուպսկայա, Ա.

\*) «Сов. Зап.», XXXV, ст. 432.  
 \*\*) Проф. П. И. Люблинский «Борьба съ преступностью въ детском и юношеском возрасте», 1923.

\*) «Сов. Зап.», XXXV, ст. 435.  
 \*\*) «Պրաւադա», 1927, V, 20.

Կալինինա, Բոգոմուլովսկի և այլն) ստանց վարանման խոստովանում են, որ անապատանների դէմ սկսած պայքարը յաջողութիւն չունի: Աւփական անկարողութեան մէջ խոստովանում է և պաշտօնական մի հրատարակութիւն. «Երեսանների անապատանութեան վիճակը ներկայումս բնորոշ է իր կայունութեամբ»<sup>\*)</sup> Այսինքն, անապատան երեսանների քանակը չի պակասում, նրանց Ֆիդիբական ու բարոյական ողբերգական վիճակը մնում է անփոփոխ՝ չնայած ձեռք առած բոլոր միջոցներին: Անփական անճարակութեան աւելի մեծ ապացոյց դժուար է երևակայել:

Այո՛, «բուլեիկեան իշխանութեան առաջին հրնգամեակի նաճուճների ամենաբարձր կէտը պաշտօնա-

պէս արձանագրւած այն փաստն է\*\*), որի համաձայն Հարաւային Ռուսաստանում, Նիկոպոլ քաղաքում, մարդկանց որսում էին պարաններով քաղցածները (ուստելու համար Ա.Ա.): Նաճուճների ամենաբարձր կէտը այս հնգամեկն (1928թ.) կարելի է համարել անապատան երեսանների որսալը նոյն պարաններով: Նրանց որսում են, փաթաթում ու քարշ տալիս պարաններով, որպէսզի թողով բռնած երեսան հարաւորութիւն չունենայ «խածնելու բռնողին ու վարակելու նրան... Եւ այդ նաճուճը կը մնայ ժողովրդի յիշողութեան ու պատմութեան տարեգրութեան մէջ»<sup>\*\*\*)</sup>

Ա. ԱՍՏԻՍՏԱՐԵՆԸ

## ՉԵԿԻՍՏԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

Նախ՝ մի քանի խօսք աղբիւրի մասին:

Տեղեկութիւն տուող 29-30 տարեկան մի երիտասարդ է, վրացի, Ե. Դուրսով անունով: 1918 թ. կանից սկսած նա եղել է Կոմունիստական Կուսակցութեան անդամ, վարել է պատասխանատու պաշտօններ կարմիր բանակում ու Ձկկայում: Աշխատել է դահիճ Աթաբէգեանի՝ ձեռքի տակ: Իբրև 16րդ դիվիզիայի հրամանատարական կազմի մէկ անդամը, 1921թ. զարնանը կուել է Հայաստանի դէմ Համաձուլի ճակատում: Մասնակցել է Վրաստանի վերջին ապստամբութեան ճնշման: Առանձնապէս երկար է աշխատել Ձկկայի մէջ, Ռուսաստանի դանդաղ միջոցներում ու Թիֆլիսում: Լաւ տեղեակ է Ձկկայի ներքին դաւաճիներին և Կոմունիստական Կուսակցութեան վերնախաւի բարբերին: Վերջին երկու տարին յարել է ընդդիմադիր-տրոցկիստներին: 1928թ. յաջողել է պաշտօն ստանայ Պոլսում և իբրև չէկիստ աշխատել է Թիւրքիայի ուստարագլութեան քաղաքային համար: Յաջող է փախչել Ֆրանսիա և ուհա 3 ամիս է դտնում է Փարիզում, ուր զրի է ստնում մերկացումներ խորհրդային իշխանութեան և Կոմկուսի մասին: Ե. Դուրսովն զարգացած Երիտասարդի տպագրութիւն է թողնում, աւարտել է Պետրոգրադի Արևելագիտական ճեմարանը, լաւ ծանօթ է Կովկասի ներկայ վիճակին և այդ պատճառով նրա ցուցմունքները հետաքրքրութիւնից զուրկ չեն: Մինչ հաւատում ենք նրա պատմածներին, որովհետև նրանք, զրեթէ բոլորը, հաստատում են և ուրիշ աղբիւրներին: Հէնց նրանց արտօնքն էլ դառ մէջ է Կոմկուսի ու Ձկկայի ծոցից ելած մի մարդ հազարգում է տեղեկութիւններ, զալիս է վկայելու այն ամենը,

ինչ որ մենք օրր օրին ստանում ենք մեր անփական միջոցներով:

\* \* \*

Այժմ անցնենք ցուցմունքներին

Իր մասին մի քանի կենսագրական ծանօթութիւններ տալուց յետոյ, Դուրսովն շարունակում է.

— Խորհրդային իշխանութիւն կամ Կոմունիստական Կուսակցութիւն կողածը այժմ բոլորովին այն չէ, ինչ որ առաջ էր: Նախկին տարիների հուստի ու ոգևորութեան հետքն իսկ չի մնացել: Բուրբ բիշշաւս պարկեշտ մարդիկ կամ մի կողմ են քաշուել, կամ անցել են ընդդիմադիրները շարժերն ու մտնել յատակի ստի և կամ բանտերում են, Սիբիրում ու Սորովիկում: Այժմայ կոմունիստական ղեկավարները, մեծ մասամբ, բախտակալիք մարդիկ են. նրանց սոյը մերկ բռնութեան մէջ է, խաբէութեան, լրտեսութեան սպորովկայի: Կուսակցական, խորհրդային կամ որհետակցական կողած համապումարները բացարձակ խարդախութիւններ են: Ընտրութիւն աւաւած բանը զոյութիւն չունի. Ստալինի և իր գործակիցների նշանակած մարդիկ են հուսաքում և համապումարների գաւելաւ կատարում: Ստալինի ձեռքին է կուսակցութեան մեքենայի ղեկը. ամէն տեղ զրել է իր մարդկանց. նրան է ենթարկւած Ձէկան (Պետական Բարգալի: Վարչութեանը). փաստօրէն նրա հրամանի տակ է Վերահսկիչ Ցանձնատղղը, որ կատարում է իր տիրոջ կամքը: Ստալինն է իշխում և Պոլիտբյուրոյում, և Ժողկոմխորհում, և՛ Կոմիտեներում: Խորհրդային իշխանութիւն — այդ Ստալինն է:

\*) Безпризорные в трудовых коммунах, ст. 13, Москва.

\*)Сов. Зап.» XXXV, ст. 411.

\*\*) «Կրամայա Գագնուս», 1922, V, 7.

Անձնագրու ոչ ոք նրան չի սիրում ո՛չ Ռուսաստանում, ո՛չ Կովկասում: Անհամարելի մարդ է: Իսայ կարողացել է իր ձեռքը ստնի կուսակցութիւնն ու Չէկան, որ ասել է ամբողջ իշխանութիւնը: Հանրապետութիւններ, ինքնավարութիւններ դատարկ բաներ են. իշխանութիւնը կենտրոնացած է Կրեմլում: Հակառակ ձեռական սպակներտրոնացման, Խորհրդային Միութիւնը աշխարհէն ամենակենտրոնացածի պետութիւնն է:

Առնենք, օրինակի համար, Անդրկովկասը: Ըստ սահմանադրութեան Անդրկովկասը Խորհրդային Միութեան մէջ ազատ միաւորն է, որ, իր հերթին, բաղկացած է չայաստանի, Վրաստանի և Աբրեջլանի դաշնակից հանրապետութիւններից. այս վերջիններն էլ, իրենց հերթին, բաղկացած են ինքնավար ու դաշնակից մասերից, բացի Հայաստանից, որ միաձույն երկիր է: Այս բոլոր մասերը ունեն իրենց սուղական կառավարութիւնները, խորհուրդները, չէկանները և այլն, որոնք ենթադրում է թէ տէր են որոշ ինքնավար իրաւունքների: Իրականութեան մէջ, սակայն, դրութիւնը բոլորովին այլ է: Անդրկովկասը փաստօրէն կազմում է փոխարքայութիւն. առաջ փոխարքան Օրջնիկիձէն էր, այժմ՝ Օրախելաշիլին: Սա ոչ մի լուրջ քայլ չի կարող անել առանց Մոսկուայի հրամանի: Անդրկովկասում պատահած ամէն բան անմիջապէս իմաց է տրուում Մոսկուա. վերջինս հսկում է բոլոր գործերին և միջամտում ու կարգադրութիւններ անում ամէն անգամ, երբ անբովեւել է տեսնում:

Օրախելաշիլի շափ, գուցէ և աւելի ազդեցութիւն ունի Անդրկովկասի վերստուգիչ Յանձնաժողովի նախագահ Նազարեթեանը, որ Ստալինի աչքն ու աջ բազուկն է Կովկասում: Փաստօրէն սրան է ենթարկւած և՛ կուսակցութիւնը, և՛ կառավարութիւնը և Չէկան: Ապա փորձեցէք մի քայլ առնել հակառակ Նազարեթեանի...

Անդրկովկասեան կառավարութիւնը ձեռական մի բան է, մի խրտուիլակ: Աւելի լաւ չէ և առանձին հանրապետութիւնների դրութիւնը. նրանք էլ ենթակայ են Օրախելաշիլիին ու Նազարեթեանին և սրանց միջոցով՝ Մոսկուային: Քանի՛-քանի գործիչներ դուրս են չպրուած սրանց հրամանով, առանց զննութեան և դատ ու դատաստանի: Չեմ խօսում ընդդիմադիրներ կամ արոցիկիստների մասին, չենց Ստալինի կողմնակիցներն էլ խամաճիկի պէս ղեւս ու ղէն են նետում: Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինը, օրինակ, կամ Կարինեանը, շնայած որ մինչև այժմս էլ թունդ ստալինիստներն են, և քառորեցին Երևանից, որովհետև իրենց ընտրեցրով հասելի չէին Թիֆլիսին ու Մոսկուային: Հնուարդքսական է սրանց հեռացելու պատճառը. Լուկաշինը շատ էր զգահ և տանում» Հայաստանի շահերը պաշտպանելով, նոյնպէս և Կարինեանը. նրանք բողոքում էին, որ վրաստանին ու Աբրեջլանին աւելի լաւ է բաժին հասնում, իսկ Հայաստանին քիչ: Կոմունիստական տեսակէտից այդպիսի բողոք կարելի չէ յայտնել...

Լուկաշինին հուսացրին և տեղը ուղարկեցին Սահակ Տէր-Գարրիէլեանին: Եւ ի՞նչ. սա էլ Հայաստանի հասաւ թէ չէ, նոյն երգը սկսեց երգել: Բողոքում էր, թէ ինչո՞ւ, օրինակ, Գուրնիստական տեսակէտից այդպիսի բողոք կարելի չէ յայտնել...

կեկտրակայան է ինչու, իսկ Հայաստանում՝ ոչ:

Առհասարակ, պէտք է զիտնանք, որ Կովկասում այժմ ամէն ոք աշխատում է մի բան փրցնել. վրացի կոմունիստը աշխատում է Վրաստանի համար չափ դրամ քաշել Մոսկուայից, աբրեջլանցին՝ Աբրեջլանի համար, հայը՝ Հայաստանի համար: Դրանց թոււմ է, ամենքը հայտ ու համբարչի են, ամէն բան կող ու փայլուն է, բայց վարագոյրի ետևը իրար միս են ուտում, միմեանց հետ մրցում են, միմեանց ձեռքից աշխատում են խել, իրար ոտքի սակ զար են պցում. Մի ալյանդակ հարայհոց է տիրում. ա՛ռ ինչ որ կարող ես: Երբ, օրինակի համար, զննում է պետական նախահաշիւը, ամէն երկիր ուռցրած պահանջներ է ներկայացնում: Այդ պահանջները անազին վէճ ու դալմադարով «համաձայնեցում են» Թիֆլիսում և ապա Անդրկովկասեան նախահաշիւը գնում է Մոսկուա ի վերջնական հաստատութիւն: Օրէնքով Մոսկուայում Անդրկովկասն ունի իր ներկայացուցիչը — առաջ Սէր-Գարրիէլեանն էր, այժմ՝ Ղրնտին, որը պէտք է ներկայ լինի Անդրկովկասի նախահաշիւի զննութեան ժամանակ և պաշտպանէ նախահաշիւը, սակայն, զբւթէ միշտ, նախահաշիւի զննութեան օրերին, Մոսկուայում «պատահաբար» ներկայ են լինում և երեք հանրապետութիւնների պատասխանատու ներկայացուցիչները և մասնակցում նախահաշիւի զննութեան: Եւ Թիֆլիսի վէճերը, փոխադարձ մեղադրանքներն ու աղմուկները կրկնուում են և յայտնւլ:

Անդրկովկասեան Դաշնակցութիւնը թքով կպցրած բան է: Ամէն երկիր իր նեղ ազգային քաղաքականութիւնն է վարում և շատ ուժեղ է դաշնակցութեան վերացման ձգտումը: Մասնաւորապէս Վրաստանու ամենքը համարեն ուղքում են, որ Վրաստանն ուղղակի կապի Մոսկուայի հետ. վրաց ընդդիմադիրները դիտաւոր պահանջը հէնց այս է: Աբրեջլանում էլ բաւական զգալի է այս տրամադրութիւնը: Հայաստանի մասին չեմ կարող ասել, բայց գիտեմ շատ հայ կոմունիստներ, որոնք զանգաւտում են, որ Հայաստանը՝ գրկւած է Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ և զբարգասելի են համարում ուղիղ Մոսկուայի հետ կապելը:

Ընդդիմադիրները Կովկասում շատ ուժեղ են: Ռուսաստանում էլ գիտակից ու գաղափարական կոմունիստներն մեծ մասը այժմ ստոցիկիստ է: Ընդհանուր պատճառներից մտքը Կովկասում կան և տեղականագրային պատճառներ: Ընդդիմադիրներն այստեղ ազգային պահանջներ են գնում: Վրաց ուկոնիստները, օրինակ, որ Վրաստանի ընդդիմադիրները դիտաւոր տարր են կազմում, պահանջում են, որ Վրաստանը դուրս գայ Անդրկովկասեան Դաշնակցութիւնից և կապի անմիջապէս Մոսկուայի հետ, պահանջում են աւելի լայն ազգային իրաւունքներ: Երբ Տրոցկին Մոսկուայում էր գտնուում, վրաց ուկոնիստները յարաբերութեան մէջ մտան նրա հետ, և Տրոցկին սրդեղրեց նրանց տեսակէտը: Բնորոշ է, որ երբ Տրոցկին եկաւ Թիֆլիս, արքայական ընդունելութիւն ցոյց տրեց նրան: Երբ նա ընդունում էր զորահանդէսը, վրաց գիւտրներին դիմեց վրացերէն խօսքերով. «Նա ողջունում և՛ Խորհրդային Վրաստանը և վրաց բանակը»: Այս վարմունքը անազին տպաւորութիւն գործեց Ժողովրդի վրա: Մինչդեռ,

երբ յետոյ Թիֆլիս եկաւ Ստալինը, բորբորովին այլ ընդունելութիւն ունեցաւ. հակառակ վրաց կոմունիստ ղեկավարների թախանձանքին, նա հրաժարեց վրացերէն ճառ արտասանելու և խօսեց ռուսերէն: Պէտք է գիտնալ, որ Ստալինն է համարուած ռուսական քաղաքականութեան ամենախիստ շատադուլը, մինչդեռ Տրոցկին ընդունուած է իբրև կողմնակից ազգային լայն ինքնորոշումներին: Եւ այդ է պատճառը, որ ազգային գոչանադրուած ունեցող ընդդիմադիրները յարուած են տրոցկիստներին. վրացի ուղղորդիտները ամբողջապէս միացել են Տրոցկիի կուսակիցներին: Նոյնը պէտք է տեսլ և Հայաստանի ու Ազրբեջանի ընդիմադիրները մասին:

Վրաստանում ընդդիմադիրները պայքարը չափազանց սուր ձևեր է ստացել: Ընդդիմադիրների պայքարուններ են Բուդու Մոլիվանին և Սեբոգ Գաւթարաձէն: Սրանք այնքան հետուները գնացին, որ նոյնիսկ ըմբոստացան ու ցոյցեր արին Ստալինի դէմ. Մոլիվանին անգամ զինւած ապստամբութիւն էր քարոզում: Բայց Ստալինը, Նազարեթեանի ու Օրախելաշիլիօզնութեամբ, երկաթով ու հրով ճնշում է հակառակորդներին. ընդդիմադիրները անընդհատ ձերբակալուած և խումբ-խումբ քշուած են դէպի հիւսիս: Սուրվկիւում էլ քիչ չեն կողակսեան ընդդիմադիրները: Մոլիվանին ու Գաւթարաձէն էլ աջորտած՝ պահուած են բանտում, և շպէտք է դարձնաւ, եթէ մի որ նրանց զլուխն էլ ուտեն: Ընդդիմադիրների գնդակահարութիւնները սովորական երևոյթ է: Ստալինի մարդկանց համար սպանութիւնը ընդունւած ձև է հակառակորդներից ազատելու:

Հարցնում էք, թէ ի՞նչպէս է ազգային փոխարարերութիւնը կողակսուած: Ամենասարսափելի՛: Երբեք ազգային թշնամանքը այնքան սաստիկ չի եղել, քան այժմ: Խօսքը, ի հարկէ, հասարակ ժողովրդի մասին չէ, մանաւանդ դիւզացիութեան, այլ մտաւորականութեան և վարիչ խաւերի: Վրացին ատուծ է հային, հայը ատուծ է վրացուն, թուրքը ատուծ է հային. հայը ատուծ է թուրքին: Թուրքը ատուծ է ռուսին. ռուսը՝ թուրքին: Միով բանիւ, դժուար է խօսք գտնել արտայայտուել համար ընդհանուր թշնամանքը: Մի հասարակ օրինակ. անցեալ տարի, Բազուի մօտ, Բաշիլովում, մի քանի թուրք ստահակներ բռնաբարել էին մի ռուս կնոջ: Պարզեց, որ այդ ստահակների զլուխը կեցած է եղել Ազրբեջանի կենտրոնը Նախազահ Աղամալի Օղլիի ազգականը, և Աղամալի Օղլին ուղեցել է գործը ինդիլի: Նախազահի ամբողջ ռուս բանուորութիւնը ոտքի կանգնեց, կարմիր դրօշակներով դի մեց դէպի կառավարութեան շէնքը և պահանջեց յանցաւորներին պատժել: Մոսկուայի միջամտութեան վրա ստահակները ձերբակալեցին ու դատի տրւեցին, որով յուղւած կրքերը մի պահ մարեցին: Դատարան յանցաւորներին մահապատժի վճիռ տեց, բայց Աղամալի Օղլիի միջամտութեամբ ներում չորհուրեց: Եթէ ստահակները չպատժէին, անպատճառ հայ-թրքական կոտորած կը լինէր:

— Հայ-թրքական կոտորած: Բայց այդտեղ հայերն ի՞նչ գործ ունեն:

— Յարաբերութիւններն այնքան են լարւած, որ

հայ, ռուս հարցնող չկայ: Թուրք խօսեանի ատամը ռուսին չի կտրի և ռուսի վրէժը կը թափի հայերի գլխին: Կրքերը շատ են յուղւած...

Ստալին է ազգային հակամարտութիւնը և Թիֆլիսում հայերի և վրացիների միջև, բայց քաղաքապետական սիւալ է, որ Վրաստանի օգոստոսեան ապստամբութիւնը ճնշուել է հայերի ձեռքով: Ապստամբութեան ճնշման մէջ հայերը ո՛չ մի մասնաւոր դեր չկատարեցին: Ընդհակառակը, տեղ-տեղ նրանք միացան վրացի ապստամբներին: Օրինակ, Մանդլիսաւ, ուր հայերը և վրացիները միասին բարձրացրին ապստամբութեան դրօշը: Ուրիշ տեղեր էլ հայերը օգնեցին վրացի ապստամբներին, որոնք մի մասը ապստանեց և արտօսահաման անցաւ միայն հայերի օգնութեան շնորհիւ: Ապստամբութիւնը ճնշուել, որովհետև լաւ կազմակերպւած չէր մէկ, և միւս կողմից ճրագիրը յայտնի էր Ձեկային: Ապստամբութեան ճնշման ժամանակեցին միայն կոմունիստները, Ձեկայի զինուորական մասերը և, այսպէս կոչւած, ջօնը — յատուկ զորամասերը: Սրանց մէջ կային և վրացիներ, և՛ ռուսներ և, ի հարկէ, հայեր. ամէն կոմունիստ ի պաշտօնէ անդա՛ր է այս զորամասերի և պարտական է երթալ այնտեղ, ուր ուղարկուած է վերին հրամանով:

Ճիշտ է, ապստամբութեան ճնշման վայրապութիւնը — մի՛ մոռցնէք, որ ինդո-վնջ հազար մարդ փչացաւ — արդիւնք էր գլխուարարու Մեանիկեանի անձնական կարգապետութիւնների, բայց ճնշողների մէջ գլխաւոր ոյճը կազմուած էին վրացի կոմունիստները: Մեանիկեանը իր գործած դատաւութիւնների համար յանդիմանութիւն ստացաւ Մոսկուայից: Առհասարակ, Մոսկուան իրատ փոփոկանալու է դէպի Թիֆլիսը. Երբ, օրինակ, 1921թ. փետրւարին մեքը շարժուած էինք ժորգանիայի գորբերի դէմ, Մոսկուայից մեկ հրամայւած էր խտտութիւններ շանիլ Վրաստանում, Թիֆլիսը չամբակոծել և մեղմ վարել վրացի մտաւորականութեան և զինուորականների հետ: 11րդ բանակի հրամանատար Հեկկերը, որ կողակսեան ճակատի պետն էր, հրամայեց հայրական Տրդ գնդին շարշաւել Թիֆլիսի վրա՝ վախենալով, որ հայ զինուորները կարող են բլուրնութիւններ գործել վրացիների գլխին:

Վրաստանի ապստամբութիւնը շատ ձեցց արտասահմանի մենչելի վարիչների վարելը, բայց և այնպէս մենչելիկեան մտայնութիւնը չափազանց ուժեղ է Վրաստանում: Այդ մտայնութիւնը մուտք է գործել և Վրաստանի կոմիկուսի մէջ, մի քանի տարի առաջ 22,000 մենչելիկներ հրաժարեցին իրենց կուսակցութիւնից և մեծ մասով մտան կոմունիստների շարքերը: Դրանք այժմ ահազին ոյճ են կազմուած ընդդիմադիրների ձեռքին: Ժողովուրդը մենչելիկներին մեղադրում է այն բանի համար, որ նրանք նախապատրաստեցին բոլշեւիկեան յեղաշրջումը. եթէ մենչելիկները աւելի ուժեղ ազգային քաղաքականութիւն վարեցին — ատուծ են — բուլշեիզմը Վրաստան մուտք չի գործի: Հակառակ դրան, մենչելիկների հմայքը և, մանաւանդ, ժորգանիայի հեղինակութիւնը շատ մեծ է երկրում: Նոյնը պէտք է տեսլ և Հայաստանի համար, ուր տիրող է դաշնակցական մտայնութիւնը և տարազիր դաշնակցական գործիչները լայն ժողովրդականութիւն են վա-



յեղում: Մուսաւաթի համար նոյն բանը չեմ կարող ասել: Ազգրբէջանում նրա ներկայութիւնը թիչ է դշացուսի:

Հարցնում էք քեմայական թիւրքերի գործունէութեան մասին կոմիկասում: Ընչաւ ասած, այդպիսի փաստ ես չունեմ: Բնաւ չեմ յայն, որ քեմայականները որևէ գործունէութիւն ունեցած լինեն կոմիկասում: Ընդհակառակը, կարծում եմ, որ չեն համարձակուի այդպիսի բան տեսի՝ նախ՝ այն պատճառով, որ Անգորան շատ է վախենում Մոսկուայից և կր քաշի գծող հոթիեան որևէ և առիթ տալուց, երկրորդ՝ որովհետև սահմանը աշարուրը նահրութեան տակ է: Ռուս զորքեր են կանդան ձեռքով սահմանի վրա և զլիսաւոր կենտրոններում: Այդ զորքերը տեղական գործերին որևէ մասնակցութիւն չունեն և զլիսաւորապէս գրաւած են սահմանների պահպանութեամբ: Ռուս զորքերից դատ կան և աղպային զորամասեր — գլխիկիաներ, որոնք լաւ մարդած մասեր են և, հակառակ բոլոր ինչների թափած ջանքերի, սողորած են աղպային զաղպարով: Ի պահանջել հարկին, նրանք աղպային պաշտպանութեան համար կր լինեն օգտակար ոչ: Բոլորովին սխալ է, թէ աղպային զորամասերը կոմիկասից են կոմունիստները: Ընչաւ հակառակն է:

Քեմայական գործունէութեան մէջ օրինակ միայն գիտեմ, Աճարիստանում: Գլխաւորապէս, թիւրքերի զորումով էր, որ Աճարիստանի գործկոմի նախագահ Միմիչիվիին համագործարար էր Երուսիքի Քեղիում և ընդունելու ասել իր բանած, որով Աճարիստանը պահանջում էր, որ ինքը հանել Վրաստանի սահմաններից և միացի անմիջապէս Պորհրդային Միութեան հետ: Նպատակը պարզ էր. այդ ձևով կարելի էր պատրաստել սահարական ուժ, որ աղպային, երբ պատե՛հ առիթը գար, Աճարիստանը միացուէր թիւրքային: Իսկոյն Մոսկուայի ու թիֆլիսի մարզիկ վրա պրծան, և համադրամարը, միևնոյն կազմով, գումարեց երկրորդ նիստը, այս անգամ Բաթումում, և հանեց տրամաբարէն հակառակ բանած: Շուտով Միմիչիվիին յայտարարեց իսլաւար, բոչիկան ընտութեան ենթարկեց և ուղարկեց Մոսկուա, ուր և գտնուում է այժմս, գտանցում:

Պէտք է անելցնել, որ նման տրամադրութիւն կար և Սուխումում, ուր արևադ զառաւարութիւնը Լակոբայի զլիսաւորութեամբ ուզում էր նոյնպէս անջատել Վրաստանից և միանալ Մոսկուային, բայց Միմիչիվիիի գար բաւական խրատական եղաւ: Լակոբան չկամեցաւ գտնուց գնալ և հանգիստ նստեց տեղը: Արիսաղանայ ալում միաստորէն վրացական ջրկան է, պաշտօնէութիւնը, լեզուն վրացական է: Որոշ գծողութիւն վրացական իշխանութեան ղէմ, ի հարկէ, գոյութիւն ունի:

— Մի քանի խօսք էլ Պոլսի մասին: Այստեղ բոլշևիկները ունեն դիանագիտական և առևտրական ներկայացուցչութիւններ, բայց դրանք զլիսաւորապէս ծառայում են կոմունիստական պրոպագանդի գործին: Բոլշևիկեան Պոլսի կենտրոնը աշխատում է ո՛չ միայն թիւրքիայի, այլ և ուրիշ երկրների համար—Յունաստանի, Եգիպտոսի, Միւրիայի և այլն: Թիւրքերը հարկադրած են համակերպելու բոլշևիկների գործունէութեան, իսկ կաշառքը, շատ անգամ, թիւրք ոստի-

կանութիւնն էլ ծառայեցնում է յօգուտ բոլշևիկներին: Բացառութիւն չեն կազմում գէպքեր, երբ թիւրք ոստիկանների միջոցով ձերբակալել է այս կամ այն անձը և յանձնել բոլշևիկներին. սրանք էլ նաև են նստեցրել և ուղարկել Ռուսաստան:

Բոլշևիկեան պրոպագանդի ընդհանուր ղեկավարը Պոլսում ընկ. Մինսկին է, պաշտօնական տիտղոսով՝ «գիւսանագիտական կցորդ»: Մինսկիի զլիսաւոր դերը կոմունիստական շարքերի ուժեղացումն է թիւրքիայում: Նրա անմիջական օգնականն է անդրկոմիկասեան Չէկուայի գործակալ ընկ. Գրիչինը, խորհրդակասեան ներկայացուցչութեան զպարետը, որի պարտականութիւնն է կազմալուծել վրաց տարարութիւնը: Պորհրդային Միութեան առևտրական ներկայացուցչութեան մի պաշտօնեայ՝ ընկ. Նախիմեանը պաշտօնապէս, իբր թէ, ծխախոտի գործով է գրաւում, բայց իրօք Անդրկոմիկասեան Չէկուայի պատասխանատու աշխատակից է և յանձնարարութիւն ունի կազմալուծելու հայ պաղութիւնը: Նրա գործունէութեան շրջանն է թիւրքեան, Յունաստանի և Եգիպտոսը: Նա, իսկապէս, պէտք է հաստատուէր Յունաստանում, բայց յոյն կառավարութիւնը մուտքի արտօնութիւն յանեց: Նախիմեանը պատրաստում էր մեկնել Եգիպտոս և այնտեղի հայերի մէջ աշխուծել:

Ընկ. Նախիմեանը լաւ յարաբերութեան մէջ չէ Անդրկոմիկասի Պոլսի առևտրական գործակալ Արտավազեանի հետ, որին համարում է «գաշնակամիտ» և անվստահելի: Սա էլ իր հերթին անոչ զպայմունքներ չունի գէպի չէկիտո Նախիմեանը: Այս երևոյթը ընդհանուր է. չէկիտաները չեն սիրում ու չեն հաւատում դաւանափոխներին, չնայած որ վերջիններս սողունի պէս դաշարում են իշխանութիւնի ոտնիկ տակ: Այսպէս, արտասահմանի թիֆլիս եկած Նախիմեան ընդունելիներ, ինչպէս Նիկոլայ Էլիվան, ինչ ստորութիւն ասես յանձն չեն առնում, բայց ոչ մի վստահութիւն չեն ներշնչում, թէև նրանց արում են լաւ պաշտօնեան, և օգտագործում են իբրև «օսպեց»ներ:

Պոլսում էլ ես աշխատում էի չէկուայի մէջ: Ի միջև այլոց, ինձ յանձնեց գաղտնի կերպով քննել խորհրդային առևտրական ներկայացուցչութեան մի քանի պաշտօնեաների գործը: Եւ հաւաւոր պատկեր բացեցե՛կաշառք, գեղծակ, առևտրական—սովորական երևոյթներ էին: Օրինակ, գողորական ներկայացուցչի տեղակալ Իպրահիմովը գողացել է մօտ 100,000 ոսկի և փախել արտասահման, տնտեսական մասի հաշապահ Գոլըշտէյնը նոյնպէս փախել է. մօտ 50,000 ոսկի գողացել է Իզմիրի լիպոր ներկայացուցչէ Յազուրիան: Սուրհանդակ Անաստասիսովին բունեց գողութեան մէջ. Եւ ուրիշներ, որոնց անունները այս բովալիս չեմ լիւրում:

Այս պարտների շարքին պէտք է դասել և ձեզ ծանօթ Դանիլի Շահվերտովին, որ, իբր թէ, առևտրական դեր ունէր, բայց իրական գաղտնի ներկայացուցչի էր՝ հայ գաղութիւններում դաւանաբաղային շերտաւորում առաջ բերելու և կոմունիստական պրոպագանդ անելու: Համար: Նա գրաւում էր և ինչ որ ներգաղթի հարցերով, բայց այդ ամենի նպատակն էր վարագուրել իր զլիսաւոր գործը, վստահութիւն չանել գաղութներում

և այդպիսով բուհեկեան գաղափարներ ու կազմակերպութիւններ տարածել: Ինքը ասում էր, թէ խիստ յաջող է տանում գործը և, իբր թէ, ի վարձատրութիւն իր ցոյց տա՞ծ օգտի, երբայտազէտ հայ գաղթականներէց յոչ է ստացել մի օթոմոթիւ: Պէտք է ասել, որ այդ օթոմոթիւի մասին ուրիշ պատմութիւններ էլ էին անում — մութ և Շահվերդեանի համար խիստ անա-

խորժ պատմութիւններ: Յամենայն դէպս, այդ օթոմոթիւը այժմ, կարծեմ, Փարիզում է, ուր սպրում է և Շահվերդեանի կինը: Շահվերդովը ինքն էլ ուզում էր Գերմանիայի վրայով անցնել Փարիզ, բայց արտոնութիւն չկարողացաւ ստանալ: Մութ պարոն է, մութ-մութ գործերի հեղինակ...

## ՌՈՍՏՈՍԸ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Մարդիկ կան, որոնց մասին գրելը առաջին նայւածքով շատ հեշտ կերեւայ: Ի՞նչ աւելի դիւրին քան գրել մէկու մը մասին, որուն կեանքը կուռ և օգտակար գործունէութեան շարունակական շղթայ մը եղած է, բայց բնական է գրիչը ձեռք առնել որ սկսես տատանիլ, թերհաւատ ինքը քու դէմ: Ինչպէ՞ս գրել, ինչպէ՞ս տալ դէթ մը մեծ կեանքի մը ամբողջութեան:

Ահա թէ ի՞նչու գրիչը ձեռքս կը գողամ: Ինչպէ՞ս սկսիլ, ինչպէ՞ս տալ գէթ ուրազի՞ծը Ռոստոմի գործունէութեան մէկ մասին: Ռոստոմը իբր ամբողջ կեանքին մէջ այնքան համեստ եղաւ, այնքան հեռու կեցաւ ցոցադուրութիւններէ, որ իբր մասին գրելու քնական դժարութեան կը միանայ և այն վախը թէ արդեօք լա՞ւ էրնեմ իբր վրա խօսելով և թէ ան, եթէ մեզ հետ ըլլար տակաւին, չպիտի՞ վշտանար, չպիտի յանդիմանէր որ ես, իբր աշակերտուհին, իբր վրա կը գրեմ:

Այդ տատանումը ինձ հետ է նոյնիսկ հիմա, երբ որոշած եմ խօսել Ռոստոմի, ըստ Երևոյթիին, ամենախաղաղ գործունէութեան մասին: Ողորդ անով, որ մահան կամ ձեռքազրկութեան վտանգը չէր սպառնար իրեն: Ոսօքս անոր Պուլկարիոյ մէջ անցուցած տարիներու մասին է:

Անոնք որ ծանօթ են փոքր գաղութներու կեանքին, անոնք, որ գիտեն թէ հոգեբանութիւններու և բարձրորու ինչ խառնուրդներ կան, դանաղան հայկական անկիւննեղէ և աշխարհի չորս կողմերէ հաւաքած գաղութի մը մէջ, մասնաւոր 25-30 տարի առաջ, անոնք պիտի հասկնան թէ ի՞նչ կը նշանակէ գործել այդպիսի միջավայրի մէջ: Ճիլիպէին, որ Ռոստոմը ընտրած էր իբր գործունէութեան կեդրոնը, ունէր մօտաւորապէս 1,000 տուն հայութիւն, մեծ մասամբ տաճկախօս և սաստիկ պահպանողական: Ոչ մէկ շարժում: Թաղականի և հոգաբարձուի նշտութիւնները մէկ մէկ փոքրիկ շարժում մը յառաջ կը բերէին, շարժում մը սակայն, որ միայն վերին խաւերու մէջ տեղի կուտէնար. խօսքը ազայինն էր: Ահա այսպիսի միջավայրի

մէջ էր, որ Ռոստոմ և իր տիկինը բացին մասնաւոր դպրոց մը:

Բանալ դպրոց մը, ուր աղաները արդէն իրենցը ունէին, հերոսութեան հասնող յանդուութիւն մըն էր: Անհաւատալի աղմուկ մը առաջ բերաւ այդ դպրոցի բացումը: Աղաներու շմանքին, գարմանքին այդպիսի յանդուութեան դէմ յաջորդէց գայրոյթը և պայքարը ամէն դէնքերով: Անոնցմէ ոմանք չվարանեցան անգամ տաճիկ հիւպատոսին միջոցաւ պուլկար կառավարութեան դիմելու և բողոքելու, որ Ռոստոմի դպրոցին մէջ ումբեր կը պատրաստուին թիւրք կառավարութեան դէմ: Այնպէս որ պուլկար կառավարութիւնը ձեռնարկ քանի մը խուզարկութիւններ կատարել առաւ դպրոցին մէջ: Ձեռական, որովհետեւ կառավարական շրջանակները, որոնց մէջ աչքի կը զարնէին մակեդոնական յայտնի գործիչներ, շատ լաւ դիտելին թէ ինչ էր դպրոցի նպատակը: Աղաները այնքան առաջ գացին, որ պուլկար կառավարութեան պահանջեցին Ռոստոմի հեռացումը Պուլկարիայէն, յուսալով անոր հեռացումով կասեցնել այն շարժումը, որ դպրոցով սկսած էր:

Ի՞նչն էր որ այքան իրաքանցման պատճառ եղած էր: Նախ այն, որ Ռոստոմի և իր տիկնոջը դպրոցը այնքան համակրութիւն գրաւած էր, որ միջին դասակարգը և արհեստաւորները կը համարձակէին իրենց գուակները անոր վարժարանը դրկել: Այլ չէին ըսեր այսինչ աղան ըսաւ, այլ՝ Ռոստոմը ըսաւ. Ռոստոմի խօսքը պատգամի պէս կընդունէր: Այնպէս որ երկու տարի վերջ ամբողջ Ճիլիպէի հայութիւնը, աղաները չհալած, Ռոստոմի հետ էին:

Վարժարանին հետ գուզընթաց մինչև այն ատեն չլուած գործունէութիւն մը կը սկսէր: Կը կազմէին կանանց խմբեր, Կարմիր Պաշ, Շաքէի խումբ, Արիներու խմբեր, թատրոնական և երաժշտական խմբեր, երգչախումբ, գիշերային դասախօսութիւններ աշխատաւորներու համար: Բոլոր այս խմբերու հաւաքատեղին վարժարանն էր: Ճիլիպէի հայութիւնը քանի մը տարւայ մէջ անձանաչեկի կը դառնար:

Ռոստոմ բոլոր խմբերու մէջ էր, անոնց ողին էր. դպրոցին մէջ տեսուչ էր և դասատու, երգչախումբին մէջ իր շունեցած ձայնով կերգէր միայն իր ներկայութեամբ քաջալերելու համար, ներկայացումներու կազմադրին էր, շատ անգամ յուշարարը, գիշերային դաստիարակութիւններու դասախօսը, լսարաններու վարիչ, մարզական խմբերու առաջնորդ: Մարդիկ կը դարձանային թէ ինչ հրաշքով այլ անդուզական մարդը կը հասնէր բոլորին: Այս բոլորէ գտտ ան ունէր և իր կուսակցական ժողովները: Պուլկարեան այդ ժամանակ յեղափոխական պատասխանատու զործերու

կեդրոն էր: Հայ-Սակեղոսական բարեկամութիւնը սկսաւ և հասունեցաւ Ռոստոմի օրով ու անոր շունչին տակ: Պուլկար վարիչները դեռ մինչև հիմա ալ չեն մոռցած իրենց զօքանչելի Ռոստոմը: Գացէք Ծիլիպէ կամ Պուլկարիոյ որ քաղաքը որ կուղէք և Նետաքերբեցէջ հասարակական բնոյթ կրող ունէ հաստատութիւնով և պիտի տեսնէք, որ նախաձեռնարկը եղած է կամ Ռոստոմի աշակերտներէն մին, կամ լսարանը յաճախողներէն, վերջապէս, մէկը, որը այսպէս թէ այնպէս կրած է այդ մեծ մարդու բարոյական ազդեցութիւնը: Պ. ԲԱՐՍԵՂԵԱՆ

## ԻՄ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ՝

Երբ նորից բարձրացած վանքը՝ Ռոստոմը սկսեց բացատրել մեզ, թէ ի՛նչ նկատումներ ունի այս հինաւորաց հաստատութեան մասին: «Սա, ասում էր Ռոստոմը, պէտք է մեր յեղափոխական-ազատագրական պայքարի Պանթէոնը լինի: Այստեղ կը կանգնեցնենք Գրիտափորի արձանը, իսկ այնտեղ, հարաւային և հիւսիսային պատերի երկարութեամբ կը շարունակենք Հրայրի, Գէորգ Զաւուչի, Վազգէնի, Միսաքի և միւս նահատակների բրոնզե քանդակները»: Այսպէս խոսող և պատահական մեկով չէր շարում նա մեր նահատակներին, այլ իւրաքանչիւրի համար մի որոշ տեղ ունէր յատկացրած:

Վանքից գուրս առաջնորդելով՝ Ռոստոմը մեզ ցոյց տուց արևելեան պատի երկարութեամբ շարած սքանչելի խաչքարերը, որոնց վրա մակագրւած էին մեր հին պատմագրերի — Մովսէս Պորենացիի, Եզնիկ Կողբացիի, Դաւիթ Անյաղթի ևն — անունները: «Տեսնո՞ւմ եք, ասում էր նա, Ս. Կարապետը ազգային Պանթէոն դարձնելու միտքը մեզինից չէ ժաղում. մեր հին սեբրուզներն էլ մտածել են այդ մասին այս խաչքարերն այստեղ դնելով: Մենք միայն լրացնելու ենք նրանց դործը՝ հին հերոսների կողքին նորերի համար ևս տեղ բանալով»: Գ. Գ.

Նորը հին միացնելու այս ցանկութիւնը բխում էր այն բուռ սիրուց, որ Ռոստոմն ուներ դէպի մեր հայրենի հիմ յիշատակարանները: Հայ յեղափոխական պայքարը, անկախ իր բուն, ազատագրական արժէքից, նր աչքում մի առանձին հմայք էր ստանում այն համոզումից, թէ Հայ ժողովուրդը՝ ապստեղով քաղաքական, ընկերային և տնտեսական կապանքներից պէտք է վերակենդանացնէ մեր հին ազգային մշակոյթը և նրան նոր ստեղծագործութիւնների հիմք դարձնի:

Ռոստոմի սէրը դէպի հայրենի յիշատակարանները մի անգամ ևս տեսնելու առիթ ունեցայ երեք օր անց, երբ մենք Ս. Կարապետից իջնելով Առաքելոց վանքը՝ տեսնում էինք նրա հնութիւնները և մանաւանդ հռչակաւոր «Յամաւուրքը», որ իր գեղեցիկ գրերով և հոյակապ մանրանկարներով, ամենատալանկարգ եւրոպական թանգարանների գարգը կարող էր կազմել: Եւ երբ, վանքից մեկնելիս, Ռոստոմը պատահաւորով համբուրում էր ձերուսնագարը վանահօր — Յովհաննէս վարդապետի աջը, զգում էի, որ նա ոչ միայն արժանի հարկն էր տալիս այն աշակցութիւնների, որ Յովհաննէս վարդապետը տւել էր ժամանակին Առաքելոց վանքում և շրջակայ վայրերում դործող մեր հայրուհներին՝ այլ և իր երեստագիտութիւնն էր յայտնում նրան՝ և յանձին նրա՝ բոլոր դարերի հայ վանականներին, որոնք աչքի լույս պէս պահել և մեզ էին հասցրել հայրենի երկրի այս քանակադին յիշատակները...

Ս. Կարապետից պիտի վերադառնայինք էրզրում, որովհետև՝ մեզ լուր հասաւ, որ ընդհ. ժողովի միւս պատգամաւորները Հաւաքել էին այնտեղ և մեզ ևս սպասում ժողովը բանալու համար:

Տպաւորութիւններ շատ ունեմ այս վերին աստիճանի Նետաքերբեական և փոքրիկ արկածով համեմատեմ ճանապարհորդութիւնից. բայց ես կանգ կառնեմ Ռոստոմից ստացած և նրա համար խիստ յատկանշական մէկ տպաւորութեան վրա: Դա նրա վառվառն սէրն էր դէպի մեր Երկիրը և Որս շէնսօրիւնը: Ամբողջ ճանապարհի ընթացքին, մե՛րթ իր անյառնջ ջորու վրա ճօճելով և մե՛րթ ոտքով քայլելով, նա որոնող հայեացքով շարունակ նայում էր շուրս կողմը՝ կարծէք ցանկանալով հայրենի ամբողջ բնութիւնը հաւաքել և Ծրարել իր հոգու մէջ: Նրա աչքից չէին վրիպում ո՛չ

\*) Տե՛ս, № 1—2, 1920.

յն, ո՛չ բլուր, ո՛չ դաշտ և ո՛չ առակ: Իսկ երբ սրանց մէջ ուշադրաւ մի բան էր տեսնում՝ անմիջապէս հրա-  
տարում էր մեր ուշադրութիւնը դրա վրա՝ միզ ևս  
տպաւորելու ակնյայտ մտադուրբեամբ:

Մեծ էր նրա հետաքրքրութիւնը մանուսանց դէպի  
այն երևոյթները, որոնք շինարար ձեռքի արդիւնք էին  
հանդիսանում:

— Տեսնո՞ւմ էք այդ մատղաշ ծառերը. Մահճամա-  
րութիւնից ստոյ՛ մաս առած բանը զոյտութիւն չէ  
ունեցել այս կողմի գիւղերում: Թէև խիստ դժարու-  
թեամբ, բայց ժողովուրդն սկսում է վարժուել ծառա-  
տնկութեան:

— Այս հնձած արտերը նախանցեալ տարւանից են  
սկսել մշակել: Դրանից ստոյ՛ այս բոլորը խոպան  
հողեր էին:

— Հիմա հօ տեսա՞ք, որ մեզ մօտ էլ գիւղական  
ուսումնարանը կանոնաւոր չէ՞ք ունի, լուսամուտնե-  
րով և ծեփած պատերով: Կովկաս վերադառնալուց  
յետոյ, էլ չառէք, թէ մենք Երկրում Տէր-Թողիկեան  
վարժարաններից դատ ուրիշ բան չկայ: Նկատեցի՞ք,  
որ դասարանում նստարաններ կային. գիւղացիք սեփա-  
կան աշխատանքով են չինել:

— Քէշ է մտում, որ Մշոյ առաջնորդարանը Թիֆ-  
լիսի առաջնորդարանի հետ համեմատէք: Ի հարկէ,  
նրա սրահը 17 տեսակ թղթով պատուած կը լինի:  
Սահմանադրութիւնից առաջ... կարծեմ, սակայն,  
մտադիր են նորը չինելու:

Հասանք Խնուս: Մեզ առաջնորդում են Դանախ-  
ցութեան Տունը, որ մի չէ՞նքի ամբողջ երկրորդ յարկը  
բռնող սրահ էր ներկայացնում՝ կանոնաւոր լուսա-  
մուտներով և որոշ կահաւորութեամբ:

— Այս ի՞նչ հրաշալի տուն է, բացականէց Ռու-  
ստոմբ հարատ հայեացքը մեզ ուղղելով: Այստեղ կարող  
է մինչև անդամ արտաքնոց լինել...

Եւ իրօք, այդ էլ կար, թէև բակի հեռուոր ան-  
կիւնում և խիստ նախնական կառուցածքով:

Ահա՛, թէ ինչպիսի երևոյթներով էր ոգևորում  
այս մարդը, որ իր կեանքում այնքա՞ն աշխարհներ էր  
պատել և քաղաքակրթական նաճումների այնքա՞ն  
հոյակապ կրթողներ տեսել...

Ընդհանուր ժողովից յետոյ, Կարնոյ Երիտասար-  
դաց Միութիւնը, ի պատիւ պատգամաւորների,  
ինթրիք-բանկէտ էր կազմակերպել: Պօսեցին շատերի  
և շատ հարցերի մասին: Մենք, Կովկասի պատգամա-  
ւորներս հարկ համարեցինք շեշտելու, որ բոլորովին  
ա՛յլ տպաւորութեամբ էինք եկել Երկիր և ա՛յլ տպա-  
ւորութեամբ պէտք է մեկնէինք այնտեղից: Մենք եկի:  
էինք ճշւած հոգով, խորապէս ազդւած այն բանախօ-  
սութիւններից, որ ուսւ հրապարակագիր Օրյենինը  
անում էր Թիֆլիսում և հագոււմ «Անհետագոյ Հա-  
յաստան»-ի մասին: Եւ պիտի հեռանայինք խորին հա-  
մոզմամբ, որ Հայաստանը ոչ թէ անհետանում է, ա յ  
վերականգնում է:

Պօսքը պատկանում էր Ռոստոմին: Ես անգոր եմ  
նկարագրելու այն յափշտակութիւնը, որով նա խօսում  
էր վերածննդ Երկրի և նրա շինարարական հեռանկար-  
ների մասին: Այդ վայրկեանին նա իմ աչքում մի  
մարմնացած հայրենասիրութիւն էր այս բառի ամե-  
նապարզ, ամենաժողովրդական իմաստով: Պօսում էր  
նախասահմանադրական շրջանում եղած այդ Երկրի  
փոքրիկ յառաջադիւթիւնների մասին այնպիսի գուր-  
գուրանքով, ինչպէս որ տարիներով սեփական այդ-  
մէջ քրտինք թափած արդեպանը կը խօսի իր բացած  
ածուներին, տնկած ծառերի ու քաղած արդիւնքի մա-  
սին: Իսկ նրա հեռանկարները, իսկ նրա յոյսերը...

Ո՛ւմ մտքից կանցնէր, որ, ընդամենը երկու տարի  
յետոյ, դժողքը պիտի փչէր այս ամենի վրա...

Ա. ԶԱՄԱՆԵԱՆ

## Ա Ր Ա Մ Ի Մ Ա Հ Ր

1918 թի վերջերքին և 1919-ի սկզբներին բժաւոր  
տիֆը Երեւանում առատ հուճէ էր անում: Նրան զո՞-  
գնաց նաև Արամը: Թէ իր պաշտօնի բերումով—ներքին  
դործոց նախարար—և թէ, մանաւանդ, իբրև կենտրո-  
նական Հասարակական դէմք, նա մշտական յարաբե-  
րութեան ու չիման մէջ էր բաղմաթիւ մարդկանց հետ՝  
տղաքանակութեան բոլոր խաւերից: Եւ որովհետև  
բոլորովին գուրկ էր իր մասին մտածելու հոգսից,  
զարմանալի չէ բնաւ, որ նա էլ վարակեց տիֆով: Մի  
երկու օր հիւանդութիւնն անցկացրեց ոտքի վրա.  
առողջ էր ու ամբակազմ:

1918-ի դեկտեմբերին վախճանեց (նոյնպէս բժա-  
ւոր տիֆից) ընկ. Սարգիս Օհանջանեանը: Արամը  
ուղեկցում է ընկերով դազաղին, բայց մինչև վերկո-  
մանատուն գնալ չի կարողանում. հիւանդութիւնը  
զգալ է տալիս, և կէս ճամբից, քաղաքի ինքնավարու-  
-

թեան չէ՞նքի մօտից, վերադառնում է տուն ու պառ-  
կում՝ առանց իմանալու հիւանդութեան ընդթիւր: Երբ  
նարպեցի, որ հիւանդութիւնը տիֆ է, չափազանց ան-  
տարբեր վերաբերմունք ցոյց տուց. վիշտը, կակաճար,  
երկիւղը մինչև վերջ խորթ մնացին նրան: Ընդհակա-  
ռակը, տրամադրութիւնը լաւ էր ու իր տրամադրու-  
թեամբ վարակում էր մտերիմներին ու այցելուներին  
էլ:

Բժաւոր տիֆը ընդհանրապէս ծանր ու վտանգաւոր  
հիւանդութիւն է, որ մահացութեան մեծ տոկոս է  
տալիս, իսկ յիշածս ժամանակ Հայաստանում յատուկ  
դատմութեամբ էր արտախլուում. — ալ ու՛ մակ  
կոտորած էր անում, բուսական է ասել, որ Երեւանի  
պէս փոքր քաղաքում չորս բժիշկ (Անդրէասեան, Զա-  
քարեան, Շահապետեան, Նալբանդեան) զոհ գնացին  
այդ հիւանդութեան: Ինչպիսի է, որ մարդիկ զգուշա-  
-

նում էին, իսկ Հիւանդները ա՛հ ու սարսափով անցկայ-  
նում իրենց օրը:

Երբ Արամի Հիւանդութիւնը պարզեց, Երևանի  
բժշկանքից շատերը ինքնաբերաբար ոտքի կանգնեցին.  
դրանց մէջ էր և բժ. Ս. Կամսարականը: Սա միա-  
ժամանակ բժշկում էր և պետական վերահսկիչ Մինաս  
Բերբերեանին, որը նոյնպէս Հիւանդ էր բժուուր տի-  
ֆով: Ամէն օր բժ. Կամսարականը այցելում էր թէ  
Արամին և թէ Բերբերեանին, և տասնձին զո՛ւոնու-  
կութեամբ էր խօսում Արամի մասին:

— Զարմանալի մարդ է Արամը. ի՛նչ Հիւանդ, —  
ես նրա մօտ հանգստանում եմ. մանաւանդ Բերբերեա-  
նից յետոյ. սա ամբողջ ժամանակ դժգոհում է, դան-  
դաւում, սարսափում էր վիճակից, յիշում է իր լաւ  
անցեալը և ողորում ներկան: Սիրտս ճնշում է նրա  
մօտ: Իսկ Արամի մօտ ամբողջ ժամանակ տրամադրու-  
թիւնս լաւ է լինում. ո՛չ մի դանդաւտ, ո՛չ մի սրտնե-  
ղութիւն: Հիւանդ տեղովը մեզ, բժշկանքիս ձեռք է  
ստնում, ձաղրում է, որ բժե՛րը\* լաւ չպահեցինք և  
նրանք էլ խոռովեցին ու փախան, լաւ «հեքիմ» չենք:  
Քոստում է այլ և այլ նիւթերի մասին, իր Հիւանդու-  
թիւնով, կարծես, չէ հետաքրքրոււմ: Այո՛, դարմանա-  
լի մարդ է Արամը:

Այդ նոյն օրերին պատկած էին, ի միջի այլոց և  
Սահակ Թորոսեանը, ինժ. Թորոզմ Նիկողոսեանը,  
քաղաքային վարչութեան անգամ Յակոբ Յարութիւն-  
եանը, որոնց այցելում էր յաճախ: Երբ զայլս էի  
Արամի մօտ միշտ էլ հետաքրքրում էր նրանց վիճակով:  
Իսկ երբ հարցնում էի իր մասին, միշտ էլ պատասխա-  
նում էր. «լաւ եմ»: Եւ այդ ասում էր ոչ թէ նրա  
համար, որ, իրօք, լաւ էր, այլ որպէսզի մենք շնո-  
հանգատանանք: Իսկ իրապէս ամենեւին էլ լաւ չէր.  
դրութիւնը դժուրով ծանրանում էր, և վերջը Հիւան-  
դութիւնը ծայր աստիճան սաստկացաւ: Հիւանդու-  
թեան 18օրը օրը նա կորցրեց դիտակցութիւնն ու գրեթէ  
մինչև վերջ մնաց այդ վիճակում՝ օրհասական օլալքաբ  
մղելով մահան դէմ: Եւ մահը յաղթեց. յունւար 28ին  
Արամը այլևս չկար...

Գիտակցութիւնը կորցնելուց յետոյ, մի երկու  
անգամ միայն, շատ կարճ ժամանակով, ուշքի եկաւ:

Սկզբներում Արամի վիճակը բժշկներին մտահու-  
ղութիւն չէր պատճառում. վատահ էին, որ նրա ստույճ  
մարմինը վերջ էի վերջոյ յաղթանակելու է: Բայց երբ  
ուշադրացութիւնը տեսեց շատ երկար, նրանց սիրտը  
մտաւ կասկած: Եւ այդ կասկածը նրանք բարձրաձայն  
յայտնեցին Հիւանդի մօտ, վատահ, որ սա չի կարող  
լսել իրենց: Սակայն, որքան մեծ հոգւոյ նրանց զար-  
մանքը, երբ լսեցին Հիւանդի նկատուցութիւնը:

— Ի՛նչ էք ասում. ոտքս դետնովը տամ, սարերը  
կը դողան:

Եւ այնուհետև բժիշկները, որքան աշխատեցին,  
այլևս ոչինչ չլսեցին նրանից:

Թէև քաղաքը այն օրերին լի էր Հիւանդներով,

գրեթէ ամէն օր յուղարկուորութիւններ էին տեղի  
ունենում և մարդկանց սիրտը քարացել էր, բայց  
Արամի վիճակով հետաքրքրուում էին ամենքը և ուշա-  
դրութեամբ հետևում նրա Հիւանդութեանը, որի բար-  
դանալով մարդիկ սկսեցին անհազատանալ ու շլայնա-  
նալ: Երբ Արամը գիտակցութիւնը կորցրեց, քաղաքում  
ծայր տւին չարագուշակ լուրեր: Անձամբ երկու-երեք  
անգամ, փողոցով անցնելիս, լսել եմ Արամի մահուան  
մասին այն ժամանակ, երբ բժիշկները դեռ յոյսը չէին  
կորցրել: Այդ լուրերը հասնում են և Արամի ականջին:  
Մի օր, մի քանի վայրկեան ուշքի գալով, կանչում է  
մօտը կնոջը և հարցնում.

— Լսեցի՞ր, Կատիշա.

— Ի՛նչ, Արամ.

— Ժողովուրդի ասում է՝ Արամը մեռաւ:  
Եւ նորից ընկղմում մոռացութեան մէջ:

Դրանից առաջ էլ, երբ նոյնպէս; ուշքի է գալիս,  
հարցնում է Ռոստոմը մասին\*): Տիկիքը նրան ուրա-  
խացնելու նպատակով պատասխանում է, թէ Ռոստոմը  
չուտով դալու է Երևան:

— Դէ՛, հալաւս պատրաստի՛ր. Ռոստոմը որ գայ,  
վեր եմ կենալու, ասում է Արամը:

Եւ դարձեալ ուշադնացութիւն:

Բժ. Տէր-Յակոբեանը (Գրօ) պատմում էր, որ  
Արամի մահանից մի քանի օր առաջ, Հիւանդին քննե-  
լիս, նկատում է, որ նա ուշքի գալու փոքրիկ նշաններ  
է ցոյց տալիս: Փորձում է հտու խօսել:

— Արամ, Արամ, ինչպէ՛ս ես, կրկնում է մի  
քանի անգամ:

— Լաւ եմ, լաւ, վերջապէս, հարկւ լսելի ձայնով  
պատասխանում է Հիւանդը:

Արամի վերջին խօսքերն էին...

Մա մեռաւ յունւար 28-ին, ցերեկայ ժամը 3-ին:  
Բօթը ինձ հաղորդեցին հետախօսով. «Արամը վախճան-  
ւեց»: Երբ մի երկու րոպէ յետոյ, մօտենում էի Արամի  
բնակարանին նկատեցի Յ. Գալաղնուհուն և Ա. Սա-  
հակեանին, որոնք դուրս էին գալիս այնտեղից: Ներս  
մտայ ընդարձակ խօսք. մի անիլնում, լուսամուտի  
մօտ, տխուր-մտազբաղ կանգնած էր բժ. Բարալեանը:  
Արամի ննջարանը տանող դուռը բաց էր: Ինքը, արդէն  
աննշացած, պտուկած էր մահճակով վրա: Հարեան  
սենեակից լուում էին հեծկտանքներ: Մօտեցայ մահ-  
ճակից ու ծոռնիկ եկայ... Ինքնամոռացութիւնից  
ինձ հանեցին աղողորմ, սրտամորմոք հառաչանքներ:  
Գլուխս բարձրացրի. վանեցի ջուրիկն էր, որ ինամում  
էր Արամին մինչև նրա տիկնոջ Երևան տեղափոխելը:  
Սրահը սկսեց լցւել այցելուներով...

Արամի յուղարկուորութիւնը ժողովրդական մեծ  
սղի արտայայտութիւն էր: Հագաբաւոր մարդիկ եկել  
էին վերջին յարգանքը մատուցանելու այն մարդուն,  
որին վստահել էին իրենց բախտ ամենածանր օրերին:  
Ես դիտեմ, թէ ինչ է եղել Արամը Երևանի համար.  
բայց և այնպէս, երբ դադարը դուրս բերինք բնակա-  
րանից, այն, ինչ տեսայ դուրսը՝ մի վայրկեան սթա-  
փեցրեց մեծ կորուստի ազդեցութիւնից ու դարմանք

\*) Բժուար տիփով հիւանդների մարմինը, ավա-  
րաբար, ծածկում է մամր բծերով, որոնք յետոյ  
անցնում են: Արամի վրա երևացին միայն մի քանի  
կառ և շուտով չփացան:

\*) Այդ ժամանակ Ռոստոմը այլևս չկայ. նա վախ-  
ճանել էր յունւ. 18-ին, բայց Արամը չգիտեր:

պատճառեց — աչքը որ կողմ ուղղում էիր՝ ծով բազմեթիւն. փողոց, տանիք, լուսամուտ, պատշգամբ — բոլորը բռնած էին մեծ տարածութեան վրա. ամբողջ քաղաքը՝ մեծ ու փոքր՝ դուրս էր եկել փողոց: Պողոս-Պետրոս եկեղեցուց սկսած մինչև հանգստարան դիակառքը մնաց դատարկ. դազազը տանում էին ձեռքերի վրա: Եւ տանողները, գլխաւորապէս, վանեցիք էին,

որոնք յատուկ սէր ու գուրգուրանք ունէին Արամի հանդէպ: Դանակցութեան ճան առջև դամբանականներ խօսեցին: Հոյակապ էր և անմոռանալի Նիկոլ Աղբալեանի խօսքերը: Հանգստարանում խօսեցին Յ. Քաջազնունին և Ա. Գիւլիսանդանեանը: Այդ օրը Հայաստանի մայրաքաղաքը խորունկ սգի մէջ էր...

ԱՐՇԱՆՈՅՍ

### Ի Բ Ե Ն Յ Ի Ս Կ Բ Ե Ր Ա Ն Ո Վ

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ներքին փտախտը հետզհետէ դառնում է սեփականութիւն և լայն հասարակութեան: Այս տեսակետից ուշագրաւ է Հայաստանի կեմտը. Վերահսկիչ Յանձնաժողովի նախագահ չէ կիսա Շաւրշ Ամիրխանեանի գեկուցումը Հայկումկուսի 6րդ համագումարում, յունարի վերջերին: Ամիրխանեանը իր ընդարձակ գառում ահագին տեղ է տալիս Հայաստանի «ներկուսակցական տարածանալութիւններին», « հին դեկալարութեան ստրուալներին », « բրիտանիայագրմին և այլ հիւանդագին երևույթներին»: Առաջ եմք բերում Ծ. Ամիրխանեանի գեկուցման յատկանշական մասերը\*):

#### ՆԵՐԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սրանից մտաւորապէս 2 տարի առաջ, մարտի միացեալ պլենումում, պաշլին անգամ էր, որ մենք լսեցինք շատ թէ՛ բիշ ճիշտ ձևակերպւած քաղաքական մեղադրանք Հին ղեկավարութեան հասցէին: Ի Հարկէ, սրանից երկու տարի առաջ մենք դեռ ես այնքան էլ ճիշտ չէինք ձևակերպում Կ. Կոմիտէի սխալները: Ոչ թէ՛ միայն Հին ղեկավարութիւնն է ունեցել սխալներ, այլ և մենք՝ պայքարի ընթացքում: Սակայն, եթէ ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ մինչև մարտի միացեալ պլենումը մենք չէինք լսել շատ թէ՛ բիշ ճիշտ ձևակերպւած մեղադրանք Հին ղեկավարութեան հասցէին, այլ գործ ունէինք միմիայն գլխաւորապէս գանազան լուրերի, գանազան խօսակցութիւնների հետ, ուղղած գանազան ղեկավարների հասցէին՝ թէ ուղեբ՛ր են եղել Կրանք, ե՛րբ, ե՛նչ են արել և այլն. — ապա պէտք է ասել, որ մարտի միացեալ պլենումը մեծ քայլ էր դէպի առաջ: Ես յիշում եմ մինչ այդ միայն ընկեր կարինեանի և Ա. Յովհաննիսեանի միջև եղած տարածանութիւնը Դանակցութեան սոցիալիստական էութեան մասին, սակայն, երբ մենք փորձ արինք այդ

Հարցը դնել սկզբունքային հողի վրա և քննել, երկուսն էլ դուրս եկան և յայտարարեցին, թէ նրանց համար դա սովորական գրական վէճ է, քաղաքական սկզբունքային նշանակութիւն չունի և այլն: Այնուհետև մարտից յետոյ, հետզհետէ Հին Կենտրոմի յետագայ սխալներն աւելի խորացրին տարածանութիւնները: Եթէ մարտի պլենումում չէին դնում Կենտրոմի գծի վերաբերեալ Հարց, չէին ասում, թէ այդ գծի սխալ է, ապա յետոյ Հ. Յովսէփեանը բաւական պարզ կերպով դրսևորեց այդ բանը և մենք մօտ կէս տարի յետոյ արդէն ասում էինք, թէ Կենտրոմի գծի ճիշտ ճիշտ է, և մենք գործ ունենք ոչ ճիշտ քաղաքական գծի հետ, սակայն, այդ ոչ ուղիղ գծի անունը չենք տւել:

Ընկերներ, ինձ թւում է, որ մեր սխալը հէնց այդ է: Մենք ոչ մարտին և ոչ էլ կէս տարի, մի տարի յետոյ չենք կարողացել սխալ գծի անունը տալ, թէև ճիշտ ընդգծել ենք մի շարք խոշոր սխալներ ու թերութիւններ: Այդ բացատրում է ոչ թէ նրանով, որ մենք այլ կարծիքի էինք, այդ մեզ համար պարզ էր թէ՛ մարտին, և թէ՛ մանաւանդ յետագայում, այսինքն՝ մենք դիտէինք, որ մենք գործ ունենք ոչ ճիշտ, ոչ բողջեկեան տեղեկացների հետ, որ գոյութիւն ունէին Կենտրոմի Հին ղեկավարութեան քաղաքականութեան մէջ: Սակայն, կարծելով, որ կարող են կոնֆլիկտներ ստեղծուել մեր և Երկրային Կոմիտէի միջև, մենք խուսափում էինք այդ սխալի անունը տալուց:

Հիմա, ընկերներ, որո՞նք են մեր դժգոհութիւնները, որոնց վրա ես չեմ կարող կանգ շանել: Առաջինը — տրոցկիզմի դէմ մղուող պայքարն էր այստեղ: Անցեալ տարւայ ընթացքում — մինչև մեր անցեալ համագումարը — տրոցկիզմի դէմ պայքարը քանի դնում, սրում էր, և այդ շատ էր խանգարում մեր պայքարին՝ միւս գծով: Երկրորդ դժգոհութիւնը մեր ԿՎՀ-ի\*) անդամներու համար, այն էր, որ ԿՎՀ-ի պարտականութիւնն է եղել միաժամանակ պայքարել բոլոր ոչ կուսակցական մեթոդների և հակակուսակցական գանազան անառողջ երևոյթների դէմ: Սակայն,

\*) շեքերից: Հայաստան, 2 փետր. 1929թ.

\*) Կենտրոնական Վերստուգիչ Յանձնաժողով:

այդպէս լինելով հանդերձ, միւս կողմից էլ, ինչպէս ընկեր Կոստանեանն առաց, այդպիսի մասսայական պայքարի ժամանակ հիւանդագին ու բացասական երևույթների ուժեղացումն անխուսափելի էր, որը և յատկապէս մեզ համար դժարացնում էր մեր պայքարը: Դրանով է բացատրուում այն հանգամանքը, որ մենք չէինք կարողանում սկզբունքային պայքարն աւելի յաջող ու եռանդուն կերպով մղել: Հին ղեկավարութեան քաղաքական սխալների դէմ:

**Հին Դեկավարութեան Սեպուների ՍԿՁԲՈՒՆՔԱՅԻՆ ԲՆՈՅՔԸ**

Այնուհետև Ամիրխանեանը բերում է կուսակցութեան մէջ տիրող բիւրոկրատիզմի և այլ հիւանդագին երևույթների մասին մի շարք փաստեր և օրինակներ: Ահա մի քանի փոքրամասնութիւն.

Թող տւե՛ք այժմ համառօտակի ասել, թէ ո՞րն է կղել Հին Կենտկոմի սխալը: Հին Կենտկոմի բռնած քաղաքական դժի հիմքում եղել է այ՛, նացիոնալիստական տեղեկաց: Ունե՞նք արդեօք փաստեր այդ մասին, բերե՞նք դո՞ւք մի քանի փաստեր, ցոյց տալու համար, որ իրօք այդ այդպէս է եղել: Վերջէջ Հինց տիրահռչակ Դաւիթ Անանունի պատմութիւնը: Նա մի քանի տարի եղել է յեղափոխութեան թմադարանի վարիչ, մենք առաջարկել ենք նրան հետացնել և Կենտկոմը դեռ 4-5 տարի առաջ որոշում էր կայացրել հետացնելու, սակայն, 2 տարուց յետոյ, երբ ես վերադարձայ Մոսկուայից, նրան նորից գտայ այնտեղ: Այդ դեռ ոչինչ: Յետագայում, երբ ՊԲՎ պարզեց, որ նա կապ ունի արտասահմանի դաշնակցական մարմինների հետ, այն ժամանակ Կենտկոմի մի քանի անդամներ ընդդէմ մացան նրա ձերբակալմանը, առաջարկելով միայն հետացնել նրան Հայաստանից: Հարց է առաջ դալիս՝ արդե՞օք ես առանձին սխալ է, թէ կապ ունի որոշ սկզբունքի, որոշ տեղեկացի հետ: Դեկավարութիւնը երբեմն կարող է խոշոր սխալներ գործել այս կամ այն պատճառով, սակայն, երբ այս փաստը կապակցութեան մէջ ենք դնում մի շարք այլ հարցերի հետ, տեսնում ենք որոշ տեղեկաց, որ արտասայտու է թէ՛ այդ և թէ՛ մի շարք այլ փաստերում: Նրանք վախենում էին Անանունին ձերբակալել, մտածելով, թէ ի՞նչ կապի ինտելիգենցիան. իսկ հայկական ինտելիգենցիան, ի հարկէ, առաւելապէս մանր-բուրժուական է և նացիոնալիստական: Նրանք աւելի շուտ հաշի էին աւանտ այդ ինտելիգենցիայի կարծիքը, քան թէ Հայաստանի բանուորի ու զիւլացու կարծիքը: Նրանց համար Հայաստանի բանուորների և զիւլացիների կարծիքն աւելի քիչ նշանակութիւն ունէր, քան ինտելիգենցիայինը:

Վերցնենք մեր, այսպէս կոչւած, արտասահմանի քաղաքականութիւնը: Ետտ հարցերի ճննութեան ժամանակ Կենտկոմում յաճախ լսում էինք ղեկավար ընկերների կողմից, թէ՛ «ինչպէս կը վերաբերուի ղեպի այս կամ այն հարցը արտասահմանում»: Նրանք հարցերը որոշելիս, երևում էին նրանից, թէ ի՞նչ կապի արտասահմանը, ի՞նչ կապի ինտելիգենցիան, որն է վերջոյ

արդիւնք էր մանր-բուրժուական օրինատագիայի : Վերջէջ Դաշնակցութեան սոցիալական էութեան հարցը: մարդիկ կարծում էին, թէ Դաշնակցութեան սոցիալական էութեան հարցը սովորական գրական հարց է: Վերջէջ նրանց մտեցումը ղէպի սպեցիֆիկների պատմութիւնը, որ ընկ. Կասեանը յաջող կերպով տուել է իր գրքում: Այդ բոլորի մէջ եղել է արեւնացիոնալիստական թէ՛քում, որի մէջ կուսակցական մասսան հետզհետէ աւելի ու աւելի ուժեղ ու որոշակի բարձրացրել է իր բողոքի ձայնը: Եթէ կուսակցական մասսան չբարձրացնէր իր բողոքի ձայնը, Հին Կենտկոմը աւելի հեռու կը գնար սկզբունքային սխալների մէջ...

Նոր ղեկավարութեան օրով յուլիսեան պլենումն առաջինն էր, որ բնորոշեց Հին ղեկավարութեան սկզբունքային սխալները, համարելով այն հետևանք նացիոնալիստական տեղեկացի, շնայած այն բանին, որ այդ երկրային Կոմիտեում մինչ այդ միասնական կարծիք չէ եղել: Երկրորդ խոշոր հարցը կուսակցական կադրերի հարցն էր, ուժերի ճիշտ դասաւորման հարցը, որ չկարողացաւ լուծել Հին ղեկավարութիւնը — Հայկ Յովսէփեանի օրով, որը հանդիսացաւ գաղափարական ժառանգել Աշոտ Յովհաննիսեանին: Նա չկարողացաւ լրիւ կերպով գնահատել ընկ. Աշոտի ժամանակ կատարած սխալները: Դուք յիշում էք նրա յօդուածը. ուր նա ասում է, թէ եղել է պայքարի թիրաքանաւորութիւն և այլն և այլն: Սակայն, նա նախ և առաջ այդ առաջ կիսատ ու վախկոտ և երկրորդ՝ սկսեց պայքարել մի շարք կազմակերպական առաջարկների դէմ: Պարզ է, որ նա պէտք է ընկնէր, և ընկաւ: Եթէ նա կարողացաւ մի քիչ աւելի երկար մնալ, դրան նպաստեց օպդիցիտիկ դէմ մղած պայքարը:

Նոր ղեկավարութեան ժամանակ Հին ղեկավարութեան սխալներն ընդգծւած են ճիշտ կերպով և արւած են ճիշտ կազմակերպչական եղանակցութիւններ: Այսպատանջները արդէն ճիշտ գծով են ընթանում:

**ՊԱՅԻՄԱՐԸ ԲԻՒՐՈՒԿԱՐԱՏԻՉՄԻ ԵՒ ԱՅԼ ՀԻՒՆԴԱՅԻՆՈՒՆ ԵՐԵՒՈՅՑՆԵՐԻ ԴԻՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Ես կարող էի բերել մի շարք բնորոշ օրինակներ բիւրոկրատիզմի մասին՝ կուսակցութեան մէջ: Օրինակ, Կենտ.Վեր.Յանձնաժողովի անդամներից մէկը, ընկ. Մ.Ղամարեանը, որը գնացել էր ուսումնասիրելու մի բլիշ Լամարտի շրջանում, գրում է—

ԳՎՀ յանձնարարութեամբ, նոյեմբեր 17-ին, ես, Լեւոն Յովհաննիսեանը և Ս. Թորոզեանը գնացին Լամարտի գաւառակի Նորաշէն գիւղի կոմբլիի երեք հոգու գործը ճննելու (ներկայութեամբ Շրջկոմի քարտուղար՝ Մետրոպ Վարդանեանի): Մեզ դիւղում տեսնելով, գիւղացիները սկսեցին հաւաքել, ի միջի այլոց և մի քանի քրդեր, մեզ տեսնելով մօտեցան և սկսեցին խօսել Լեւոն Յովհաննիսեանի հետ իրենց դժար ապրելու և գոյութեան մասին: Նրանք յայտնեցին և խնդրեցին գնալ երկու վերտտի վրա տեսնել նրանց դիւղը, որը կոչւում է Շոթարեանը: Դո՞ւք են, որ եթէ այս մտնու մտան այդ գիւղում, բարոն էլ կը մեռնէ: Չունեն ջուր և զիւլու անմշակ վայր է, ուստի մեզ խնդրեցին գնալ տեսնել և մի օգնութիւն

ցոյց տալ, այսինքն ցրել նրանց հայ զիւղերի միջև: Ընդ. Լեւոնը և ևս շատ հետաքրքրելով գնացինք յիշեալ զիւղը:

Այդ զիւղը բաղկացած է 17 տնից (77 շուն): Իրենց գրադուներն այն է, որ ամսուները ծառայում են հայ զիւղերում, բոլորը—թէ կին, թէ տղամարդ և թէ երեխայ վարձուած են որպէս նախապայաններ, հովուներ, բարտակներ և ծառաներ. նրանց վրա չի տարածուած մեր աշխատանքային և ոչ մի օրէնադրութիւն: Նրանք բացարձակապէս շահագործուած են վարձակարներէ կողմից: Իսկով նրանց ամենօրեայ կենցեղին՝ ստիպելու պայմաններում են դտնուած, գլխաւորապէս նրանց երեխաները: Մինք հաշուեցինք 20 երեխայ, որոնք բոլորովին մերկ էին, մի կտոր փալասի տակ պատկած, փալասի կէս մասը տակը գցած: Պէտք է ասել, որ մեծերից շատերը նոյնպէս այդ պայմաններում էին, շատերը հիւանդ, որովհետև շունէին չոր և բնակարան: Մեր հարցին՝ Մեսրոպ Վարդանեանը պատասխանում է, թէ այդ զիւղի գոյութեան մասին անգամ չգիտէ, այն ինչ գրողըը յայտնում էին, որ շարունակ դիմել են շրջան, սակայն, նրանց վրա ուշադրութիւն դարձնող չի եղել, և իրօք, որ ուշադրութիւն չի դարձել. այդ հաստատեցին Նորաշէնի բլիթի մի քանի անդամներ, որոնք իրենց հերթին յայտնել են շրջանը:

Ես կարծում եմ, որ Կիլի անդամներ՝ ընդ. ընդ. Լեւոնը և Միսակը ոչինչ չեն չափազանցում: Բերեմ մի ուրիշ դէպք. նոյն ընկերը գտում է.

«Նրեանի Կոմիտէի կողմից նշանակւած էր յանձնաժողով իմ նախաճառութեամբ և նախկին Երջկոմի քարտուղար Մեսրոպ Վարդանեանի ու ընդ.Ղարբէրջանեանի մասնակցութեամբ՝ դրապուր. քաղաքացիական կուիւնների մասնակցած Ղամարուտի շրջանի մի շարք ընկերների հարցով, քանի որ նրանք թիւրիմացութեամբ դուրս են մտացել կուսակցութիւնից: Իմեկով նրեանի Կոմիտէին, նրանք խնդրել էին ուսումնասիրել, քննել և իրենց ընդունել կուսակցութեան շարքերը: Բուրաստան և Զիլզամուլ զիւղերի կոմբլիշները միացեալ նիստ հրաւիրեցի և պարզեցի, որ այդ 2 զիւղերում զիւղում են աւել 16 հոգի — 14-ը չքաւոր և երկուսը միջակ: Քաղաքացիական կուիւններին ակտիւ մասնակցել են և բոլորի ընտանիքները սուսեւ են: Պարզեց նաև

մի հետաքրքրական մոմէնտ, որ ներկայ Զիլզամուլ զիւղի բլիթի կուսակցական կազմը բաղկացած է նախկին հակայեղափոխականներից: Օրինակ, դրանցից մէկը հին ցարական ժամանակայ 14 տարւայ ուրեղադի է, 2րդը տնկարաֆիտա և 18թ. կուիւններին փախել է Նօրշէնի հետ, իսկ 26թ. կուսական է, 3րդը, Դաշնակցութեան Փրկութեան Կոմիտէի անդամի անեղով տղան, նոյնպէս մեր դէմ կուսել է և այլն: Երջկոմի քարտուղարի ներկայութեամբ այդ խոշոր թիւրիմուները յայտնաբերեցին և նա (Վարդանեանը) կողմնաւորամարտական ասյնով յարձակեց կուսակցական շարքերից դուրս մտացած և քաղաքացիական կուիւններին մասնակցած ընկերների վրա, թէ ի՞նչու իրեն չեն գիտել, կարծես իր պարտականութիւնը չէր ստուգել և ուսումնասիրել իր շրջանի զիւղերի բլիթի ընկերների ով լինելը: Պէտք է յայտնեմ ճիշդ, ընդ. Եւսարը, որ մէկ անգամ նոյնպէս, կրք ուսումնասիրում էի Նորաշէնում երբեք ընկերների կուսարքերից դուրս անելու հարցը, մեր ներկայութեամբ մի ընկեր բարձր ձայնով յայտարարեց, թէ՛ «թո դարիւցի վաղուանից փախչուս եմ այս շրջանից»:

Մի դէպք ևս. մի ուրիշ ընկեր գրում է, որ երբ նա գնացել է Թալինի շրջանը, տեսել է, որ զիւղում չկայ դպրոց և առասարակ ոչ մի աշխատանք չի տարուում: Սրբ նա հարցրել է Երջկոմի քարտուղարին, թէ ինչու՞ ոչ մի աշխատանք չի տարուում, քարտուղարը պատասխանել է, որ զիւղում ապրում են հակայեղափոխական աստուծոյից և միտք չկայ նրանց. մէջ աշխատանք տանելու: Բանից դուրս է գալիս, որ մեր երկրում կան զիւղեր, որոնք հակայեղափոխական են և արկաւար չէ ուշադրութիւն դարձնել նրանց վրա: Մի թէ այս ճիշտ քաղաքականութիւն է: Մ՛շ, սա միջ քաղաքականութիւնը չէ...

Ես էլ չեմ խօսում այլ տեսակ յանցադրութիւնների, հիւանդակներ երևոյթներ մասին, օրինակ, այնպիսի դէպքեր մասին, կրք կուսակցութեան անդամ անկուսակց կերպով ուզում է անցնել սոսմոնը, քնուլ արտասահման: էլ չեմ խօսում այն մասին, որ կղել է դէպք, երբ կուսակցութեան անդամը թուրաւորել է իր կնոջը, որովհետև այդ կինը ծնողներին դուր չի գալիս և այլն և այլն...



**ԲՈՎԱՆԻՆԿՈՒԹԻՒՆ**

|   |    |  |    |
|---|----|--|----|
| Ինչ են ասում քեզը (Խմբագրական) . . . . .            | 33 | Իրենց իսկ քերտով . . . . .                           | 62 |
| Անյիթովկասի Ազգագրական կազմը (Վ.) . . . . .         | 36 | Զէկիստի ցուցմունքները . . . . .                      | 54 |
| Հ. Թ. Ի. Երկրում (Աշոտ-Արծրունի) . . . . .          | 37 | Թոստումը Պուլկարից մէջ (Պ. Բարսեղեան) . . . . .      | 58 |
| Արեւիշան Նահանգները (Հրանտ-Սամուէլ) . . . . .       | 40 | Իմ հանդիպումները Թոստումի հետ (Ա.Ղամարեան) . . . . . | 59 |
| Երեխաները հորիդը. Թուստանուում (Ա. Ասած.) . . . . . | 46 | Արամի մտքը (Արշալոյս) . . . . .                      | 60 |



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 Ֆր. 50 սանտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M<sup>re</sup> S. AGOPIAN.

5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)

Société Anonyme de Navarre, 5 rue des Gobelins, Paris (13<sup>e</sup>). Gérante: Delacuvellerie Hampartzoumian